Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

19617

19618
19619

391.99-82
9-36

891.99

Գարուն

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԱԼՄԱՆԱԽ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

11932

Էլեքտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկւա.
1911

2090

1768
40

Типографія Е. Аветикова
Москва, Б. Лубянка, Варсонофьевскій пер., домъ Бауэръ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		Երես.
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.	Արմենուհի	9
Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ.	Անգիր և անյայտ	103
„	Հեծկլտող քամին	104
„	Գիշերը պատեց	105
„	Անյաղթ խալիֆան	106
ՓԱՅԼԱԿ.	Թովանք	109
ԱՐՍԷՆ-ԵՐԿԱԹ.	Ջեմ կրնար	111
Ց. ՔԻՒՖԷՃԵԱՆ.	Իշնիկի լիճը	112
Ս. ԲԱԲԻԵԱՆ.	Կրակն այս գիշեր	124
Ո. ԱՆՈՓԵԱՆ.	Berceuse	125
ՋԻՖԹԷ ՍԱՐԱՖ.	Սպեղանին	127
Ց. ՅԱԿՈԲԵԱՆ.	Աշխատանքի երգը	136
Դ. ԴԵՄԻՐՋԵԱՆ.	Գիշեր է	138
Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.	Հէքիաթ	139
Հ. ՆԱԶԱՐԵԱՆ.	Սև երգեր	149
„	Սև երգեր	150
Ռ. ՍԵՒԱԿ.	Ինչպէս երբեմն	152
Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ.	Ոսկիին ծարաւը	153

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ. Նորից մի կարօտ 161
„ Հոգիս վայելեց 162
Հ. ՄԱՋՄԱՆԵԱՆ. Տրտմութեան խոհերից 163
Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ. Աշնան ծաղիկը 164
Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ. Գեղեցկութեան երգերից 175
„ Սիրավէպ 177
„ Անցիր, ով աղջիկ 178
„ Երազն է կանչում 179
Կ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ. Վարդանանց պատերազմը 181
Վ. ՏԷՐԵԱՆ. Հատած 190
„ Ոսկէ հէքիաթ“ գրքից 194
Կ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ. Առաջին վիշտ 197
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 205

ԾԻՐՎԱՆՁԱԴԷ

ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳՐԱՄԱ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Դրամա 4 արարածով.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՍԱՄՍՈՆ ԱԼԱԴԵԱՆ, *գործի մարդ*, 37 *տարեկան.*

ԱՐՄԵՆՈՒՀԻ, *նրա ամուսինը*, 27 *տարեկան.*

ՀՄԱՅԵԱԿ ՎԱՌԼԱՄԵԱՆ, *ճարտարապետ*, 38 *տարեկան.*

ՍԻՐԱՆՈՅՇ, *Հմայեակի ամուսինը*, 29 *տարեկան.*

ՍՏԵՓԱՆ ԳՈՒՐԳԷՆԵԱՆ, *բժիշկ, Սամսոնի բարեկամ-ընկերը և փեսան*, 38 *տարեկան.*

ՎԻՐԳԻՆԷ, *Ստեփանի ամուսինը*, 28 *տարեկան.*

ԵՂԻՍԱԲԷԹ, *Սամսոնի և Վիրգինէի մայրը*, 57 *տարեկան.*

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԲԱՐԱԹԵԱՆ, *Արմենուհու հայրը, պաշտոնաթող գնդապետ*, 55 *տարեկան.*

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ, *Եղիսաբէթի եղբայրը, նախկին ուսուցիչ*, 48 *տարեկան.*

ՄԵԼԱՆԻԱ, Ալադեաննեերի աղախինը.

ԳԱՐԵԳԻՆ, Ալադեաննեերի ծառան.

ԴԱՑԵԱԿ, անխօս կին.

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ։

Գործողութիւնը կատարւում է Ալադեաննեերի ամարանոցում 190... թ.

ԱՐԱՐԻԱԾ ԱՌԱՋԻՆ.

Տեսարանը ներկայացնում է Ալաղեանների ամարանոցը: Մի գեղեցիկ պարտէզ: Աջ*) կողմը ամարանոցի լայն և երկայն պատշգամբն է երեք-չորս աստիճան սանդուղքով դէպի պարտէզ: Խորքը երկաթեայ ցանկապատ է, որի մէջտեղում, բեմի կենտրոնի ուղղութեամբ մի դռնակ: Ձախ կողմը ներկայացնում է վարդի թփերի և ուրիշ ծաղիկների շարք, որ նշանակում է, թէ պարտէզը շարունակւում է: Թփերի մէջտեղում մի փոքրիկ շատրւան: Բեմի խորքում, աջ անկիւնում մի համակ է կապած, որի վրայ դցած է մի մեծ գոյնզգոյն սաւեայ վերմակ, որպիսին գործ են ածում կառքի համար, մի անկապմ գիրք և մի քանի լրագրներ: Խորքի ցանկապատի յետևը փողոց է, յետոյ կանաչազարդ դաշտ, այնուհետև անտառ, անտառազարդ լեռներ, ժայռեր, ձորեր, հեռու ձիւնապատ գագաթներ:

Բեմի կենտրոնում, մի քիչ դէպի ձախ, դրած է ճաշի սեղան, ծածկւած, ձիւնափայլ սփռոցով: Սեղանի մի անկիւնում դրած են միմեանց վրայ ափսէներ:

ՏԵՍԻԼ I.

Մելանիա և Գարեգին.

ԳԱՐԵԳԻՆ (վարագոյրը բարձրանալիս պատշգամբից իջնում է ձեռքին ափսէներ, դանակ պատառաքաղներ և այլն: Սկսում է դանդաղօրէն

*) «Աջ ու ձախ», ինչպէս «առաջին-երկրորդ» ընդունել հանդիսականների կողմից: Հեղ.

դարսել սեղանի վրայ: Շատ մաքուր հագնված երիտասարդ է, սափրած երեսով և բաւականին կիրթ ձևերով): **Մելանիա, ես սեղանը կամաց-կամաց պատրաստում եմ:**

ՄԵԼԱՆԻԱ (կանգնած է բեմի ձախ անկիւնում և նայում է հեռու, դէպի ձախ: Թեթև ամարային մաքուր հագուստով երիտասարդ կին է, գլուխը բաց: Առանց Գարեգնի կողմը նայելու): **Լաւ ես անում:**

Մի փոքր ժամանակ լռութիւն:

ԳԱՐԵԳԻՆ (իր գործով զբաղված): **Այդ ո՞ւր ես նայում:**

ՄԵԼԱՆԻԱ. Ժայռերին:

ԳԱՐԵԳԻՆ (առանց իր գործն ընդհատելու): **Գրազ կգամ, որ սարի այծն էլի այնտեղ է:**

ՄԵԼԱՆԻԱ (երեսը դարձնելով Գարեգնին): **Մի՛ համարձակւիր անքաղաքավարի խօսել երիտասարդ տիկնոջ մասին: Ես նրան շատ եմ սիրում:** (Երեսը դարձեալ դէպի ձախ է դարձնում):

ԳԱՐԵԳԻՆ. Բան ասաց. «շատ եմ սիրում»: Կարծես, այնպիսի տիկնոջ կարելի է չսիրել: Բայց էլի կասեմ, որ սարի այծ է, ամեն օր բարձրանում է քերծերի գլուխը: (Սկսում է հանդարտ երգել): **«Եար ուզեցի, չգտայ,**

«Սէրը կերաւ իմ սիրտ...

ՄԵԼԱՆԻԱ. Ահա նա, սպիտակ շալը գլխին, երկայն փայտը ձեռքում, բարձրանում է...

ԳԱՐԵԳԻՆ. «Գիշերները քուն չունիմ,

«Բայղուշի պէս բուն չունիմ:

«Ե՛կ, նազելի, նազելի...

ՄԵԼԱՆԻԱ. Նա մի քար վերցրեց, գլորեց ցած, նայում է դէպի ձորը:

ԳԱՐԵԳԻՆ. «Ճամբին ժլատ ժաղկի պէս,

«Թառամում ես մեն-մենակ...

ՄԵԼԱՆԻԱ. Գնաց, հեռացաւ, չի երևում: (Մօտենում է սեղանին և սկսում է Գարեգնին օգնել):

ԳԱՐԵԳԻՆ. «Դու ծայն տուիր ճամբորդին,
«Նա չլսեց, հեռացաւ...

ՄԵԼԱՆԻԱ. Զարմանալի կնիկ է, ինչ ասեմ. սիրում է թափառել անտառներում ու ծորերում: Չի էլ վախենում:

ԳԱՐԵԳԻՆ. Եւ միշտ մենակ, տխուր, մտքերի մէջ թաղուած:

ՄԵԼԱՆԻԱ. Ա՛հ, երանի գիտենայի ինչ ցաւ ունի: Մի՞թէ հարուստներն էլ անբաղդ են:

ԳԱՐԵԳԻՆ. «Ի՞նչ եմ անում ոսկէ տաշտը, որի մէջ արիւն պիտի թքեմ»: Մելանիա, մեր տիկինը բաղդաւոր չէ, ես գիտեմ: Է՛հ, հիմա պառաւ ագռաւը կգայ: Ես գլուխս փախցրի: (Քայլերն ուղղում է դէպի աջ, որ սանդուղքով բարձրանայ: Եղիսաբէթին տեսնելով, կանգ է առնում):

ՏԵՍԻԼ II.

Նոյնք և Եղիսաբէթ.

ԵՂԻՍԱԲԷԹ (գալիս է պատշգամբից ծեռքում մի համարակալ, մատիտ և մի թերթ թուղթ. նիհար, չոր-չոր, խորշոմած, գռեհիկ դէմքով կին է: Հագած է սև շրջազգեստ, գլխին կապած է սև մետաքսեայ թաշկինակ, որի տակից դուրս են ընկած ալեխառը գիսակները: Քայլուածքն ու ձևերը գոռոզ են): Ի՞նչ էք շտապում սեղանը պատրաստել: Ուրիշ գործ չունի՞ք: (Գարեգնին): Այն ո՞վ է պարոնիդ մօտ:

ԳԱՐԵԳԻՆ. Չեմ ճանաչում, նոր մարդ է:

ԵՂԻՍԱԲԷԹ. Մի ամսան էլ աւելացրու, կարելի է Սամսոնը նրան ճաշի պահի:

ԳԱՐԵԳԻՆ. Աչքի՛ս վրայ: (Գնում է պատշգամբով, իսկոյն յետ է գալիս մի մարդու համար սերուիզ ծեռքում, դնում է սեղանի վրայ և հեռանում է պատշգամբով):

ԵՂԻՍԱԲԷԹ (նստում է ծաշի սեղանի քով և սկսում է համարակալի վրայ հաշիւ անել, նայելով Թերթին): **Տիկինդ տանն է։**

ՄԵԼԱՆԻԱ. *Ո՛չ։* (Մօտենում է համակին, վերմակը վերցնում է և սկսում է ծալել):

ԵՂԻՍԱԲԷԹ. Այգումն էլ չի երևում։

ՄԵԼԱՆԻԱ. Այնտեղ էր, դուրս եկաւ, անցաւ գետակի միւս ափը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Մենակ։

ՄԵԼԱՆԻԱ. *Այո։*

ԵՂԻՍԱԲԷԹ. Ինչո՞ւ հետը չգնացիր։

ՄԵԼԱՆԻԱ. *Տիկինը բարկանում է, երբ ես հետևում եմ իրան։ Ասում է, ես երեխայ չեմ, որ դայեակ ունենամ։*

ԵՂԻՍԱԲԷԹ (գրգռելով): *Բարկանում է—բարկանում։ Շատ քաջն է։ Իսկ եթէ մի բան պատահի, պատասխանատուն ես եմ նրա մարդու մօտ։ Գնա, տուն կանչիր. ասա՝ ճաշի ժամանակ է։*

ՄԵԼԱՆԻԱ. Իսկոյն։ (Վերմակը, գիրքը և լրագրները տանում է պատշգամբով և անմիջապէս վերադառնում է, գլխին մի շալ: Դուրս է գալիս ձախ կողմի Թփերի միջով):

ԵՂԻՍԱԲԷԹ (ինքն իրան): **Ես էլ կարող եմ ուրիշ սկեսուրների պէս պարծենալ, որ հարս ունիմ։ Աչքս լոյս։** (Բարկացած, համարակալի հատիկները խառնում է և հաշիւը նորից սկսում): **Թիւ։**

ՏԵՍԻԼ III.

Եղիսաբէթ և Վիրգինէ.

ՎԻՐԳԻՆԷ (երևում է պատշգամբի վրայ այն միջոցին, երբ Եղիսաբէթը պատուիրում է Մելանիային Արմենուհուն կանչելու, այնպէս որ լսում

է նրա վերջին խօսքերը: Շքեղ, բայց ոչ ախորժելի ճաշակով հագնուած կին է, դէմքով նման իր մօրը: Խօսելու միջոցին դէմքը միշտ արտայայտում է նախանձ ու չարութիւն): **Զեմ հասկանում—ինչու ես ուղարկում նրա յետևից:** (Իջնում է սանդուղքով): **Կարծեմ, ինքը պէտք է, առանց ասելու, իմանայ իր պարտականութիւնը:** (Նստում է մօր մօտ):

ԵՂԻՍԱԲԷԹ. **Դէ որ չի իմանում, ինչ անեմ:** (Միշտ զբաղուած է հաշիւներով: Մերթ ընդ մերթ մատիտով ինչ որ նշանակում է թերթի վրայ):

ՎԻՐԳԻՆԷ. **Իհարկէ, այնքան ազատութիւն էք տուել, որ երես է առել:**

ԵՂԻՍԱԲԷԹ. **Էէ՛, Վիրգինիա, կինն իր ծնողների տանը պիտի կրթուած լինի՝ թէ չէ պսակուելուց յետոյ դժուար է նրան փոխել: Արմենուհու հայրն ասում է. «ես իմ աղջկան ազատ եմ մեծացրել»: Լաւ, տեսնենք վերջն ուր պիտի տանի նրան իր ազատութիւնը:**

ՎԻՐԳԻՆԷ. **Նա գիմնազիայումն էլ այդպէս էր, դասընկերս է եղել, միշտ ինքնագլուխ, գոռոզ, ինքնահաւան: Ես աչքով աչք չունէի նրան տեսնելու: Ինքն էլ գիտէր և ատում էր ինձ: Քանի քանի անգամ երեսիս ինձ անուանել է չար, նախանձոտ, ինտրիգան: Այժմ էլ նա ինձ արհամարհում է: Օ՜, կտեսնէք, նա ձեր գլխին մի փորձանք կբերի:**

ԵՂԻՍԱԲԷԹ (հաշիւը շփոթելով): **Էհ, հաշիւներս խառնեցիր:**

ՎԻՐԳԻՆԷ (յափշտակուած, չի լսում իր մօր խօսքերը): **Տասն օր է ամուսնուս հետ այստեղ հիւր եմ, մի անգամ էլ հետս կարգին չի նստել ու զրոյց արել: Գիտեմ, նա իր մտքումն ինձ արժանի չի համարում: Անկիրթ ենք, իհարկէ, նրա նման դաշնամուր նուագել չգիտենք և ոչ էլ պոլկովնիկի աղջիկ ենք: Ա՛հ, քիչ է մնում նախանձից սիրտս տրաքի, երբ**

մտածում եմ, թէ ով է ուտում հօրս թոռած ու եղբօրս վաստակած փողերը։ Մայրի՛կ, լաւ պահիր նրա կապը, լաւ պահիր, թէ չէ մի օր կփոշմանեաս։ (Վեր է կենում)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Լա՛ւ, քիչ գրգռիր ինձ նրա դէմ, առանց այդ էլ չեմ սիրում։ (Վեր է կենում, համարակալի հատիկները խառնելով)։ Ա՛հ, չթողեցիր խոհարարի հաշիւները ստուգեր։ (Տալիս է համարակալն ու թուղթը Վիրգինէին)։ Տա՛ր իմ սենեակը, ճաշից յետոյ կվերջացնեմ։ Կարծեմ, այս ամիս շատ չի գողացել։

ՎԻՐԳԻՆԷ. Ես իմն ասացի, մնացեալը դու գիտես։ (Համարակալն ու թուղթն առնելով գնում է պատշգամբով)։

ՏԵՍԻԼ IV.

Եղիսաբէթ, Կոնստանդին և Ստեփան.

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (գալիս է խորքի ցանկապատի դռնակով։ Ամբակաղմ, առողջ դէմքով տղամարդ է։ Երեսը սափրած է։ Հագած է մուգ գոյնի վեստոն—պանթալոն, սպիտակ ժիլէ և ռուս պաշտօնեայի գնդապետի գդակ)։ Այո՛, բարեկամս, Արմենուհին կատարելապէս իր մայրն է։ Հանդուցեալն էլ վատնգ ասած բանը չգիտէր։ Բարև, խնամի։ (Բարևում է գինուորական ձևով, առանց գդակը բարձրացնելու)։

ՍՏԵՓԱՆ (գալիս է Կոնստանդինի հետ ցանկապատի դռնակով։ Կարճ խուզած միրուքով, խոհուն, համակրելի դէմքով, շատ պարզ ձևերով և պարզ հագնուած տղամարդ է)։ Մայրի՛կ, բարև։

ԵՂԻՍԱԲԷԹ (իւրաքանչիւրին)։ Բարև, բարև։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (շարունակելով իր խօսքերը)։ Մէր դիվիզիայում ոչ մի ապայի կին չէր կարողանում նրա հետ մրցել ձի հեծնելում։ Նա միշտ ընտրում էր ամենակատաղի ձին և

վարում էր նրան ինչպէս առաջնակարգ կաւալերիստ։ Ա՛խ, ընտիր կին էր նա։

ՍՏԵՓԱՆ. Մայրիկ, մենք քաղցած ենք։ (Նայում է իր ժամացոյցին)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Քանի՞ ժամն է։

ՍՏԵՓԱՆ. Երեքին կէս է մնում։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ուրեմն, կէս ժամ էլ պիտի սպասել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (Ստեփանին)։ Զդիտէ՞ք որ աշխարհը տակն ու վրայ լինի, երեքից առաջ մեզ ճաշ չեն տայ այս տանը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Այդ որդուս կարգադրութիւնն է։

ՍՏԵՓԱՆ. Սամսոնը ուզում է գերմանացի ծեւանալ—ճշտապահ։

ԳԱՐԵԳԻՆ (երևում է պատշգամբի վրայ)։ Պարոն Վառլամեանը ուզում է տեսնել պարոն բժշկին։

ՍՏԵՓԱՆ. Աա, Հմայեակը։ Հրաւիրիր նրան իմ սենեակը։

ԳԱՐԵԳԻՆ. Նա պարոնի սենեակումն է։

ՍՏԵՓԱՆ. Իսկոյն։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հմայեակն ո՞վ է։

ՍՏԵՓԱՆ. Իմ մօտիկ բարեկամներից մէկը։ Ես նրան ծանօթացրի Սամսոնի հետ։ Եկել է այցելութեան։ Օ՜, նա հիանալի մարդ է և տաղանդաւոր ճարտարապետ։ Ապրում է միշտ մայրաքաղաքում, բայց երկու ամսով եկել է այստեղ հանդստանալու և իր հայրենիքի բնութեամբ սքանչանալու։ (Բարձրանում է սանդուղքով և հեռանում)։

ՏԵՍԻԼ V.

Կոնստանդին և Եղիսաբէթ.

ԵՂԻՍԱԲԷԹ. Խնամի՛, մի քիչ առաջ դուք իմ փեսայի մօտ ա-

1768 ԿՈ

սացիք, թէ ձեր աղջիկն իր մօրն է նման։ Միթէ հանգուցեալն էլ իմ հարսի պէս է եղել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ծխախոտ է վառում)։ Այո, ի՞նչ էք կամենում ասել դրանով։ (Նստում է սեղանից հեռու դանուող աթոռներից մէկի վրայ և ոտը ոտի վրայ ձգում)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Այն եմ ուզում ասել, պատուելի խնամի, որ, վերջապէս, ժամանակ է ձեր աղջկան բան հասկացնելու։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (անփոյթ, ծխախոտի ծուխը գլխից վեր բաց թողնելով)։ Իմ աղջիկը անհասկացող մէկը չէ, որ նրան բան հասկացնենք դուք և ես։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ո՛վ է ասում. բայց նրա արածն էլ խելօքութիւն չէ։ Նա դեռ չգիտէ, որ բամբասանքն օձ է, չի իմանում՝ անմեղին է կծում թէ մեղաւորին։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ցեռո՞ղ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ինչո՞ւ է նա ամեն օր մեն-մենակ թափառում անտառներում, դաշտերում կամ ժայռերի վրայ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ինչո՞ւ է թափառում։ Որովհետև ամարանոցումն է, նա չորս պատերի մէջ նստելու համար չի եկել այս գեղեցիկ վայրերը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Դուք չէ՞ք վախենում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ինչի՞ց։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ո՛վ գիտէ, հազար ու մի տեսակ մարդ կայ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (հանգիստ)։ Իմ աղջկան ոչ ոք չի համարձակուիլ մի խօսք անգամ ասել։

ԵՂԻՍԱԲԷԹ (հեգնաբար)։ Այո, կվախենան. կասեն հայրը գնդապետ է, մայրը իշխանական ցեղից։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (հեգնութեամբ)։ Տիկի՜ն, դուք շատ էք սիրում Արմենուհու ծնողների տիտղոսները յիշել, այդ ի՞նչ է նշանակում։ Զլինի թէ մեզ արժանի չէք համարում Ձերդ բուրժուական գերազանցութեանը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ահա այդպէս էք խօսում միշտ, որ ձեր աղջիկը կարծում է, թէ ոչ մի պակասութիւն չունի։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Կկամենայի իմանալ, թէ ինչ պակասութիւն էք տեսել Արմենուհու մէջ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Նա չգիտէ իրանից մեծերին յարգել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Մեծերին յարգելն իմ աղջիկն օրօրոցից է սովորել, եթէ, իհարկէ, մեծերն էլ գիտեն նրան յարգել։ Ցեսոյ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Գոռոզ է։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ո՛չ, խնամի. հպարտ է գոռոզների վերաբերմամբ։ Շարունակեցէ՛ք։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ինքնահաւան է։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Դեռ երէկ ձեր փեսան, Ստեփանը պախարակում էր նրա անսահման համեստութիւնը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ծնողութեամբ չի հետաքրքրւում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ալադեանի կինը կարիք չունի խոհանոց մտնելու։ Ուրիշ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Նա ինձ չի հնազանդւում։ Իմ ազգականներին չի սիրում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Սկեսուրների իշխանութեան դարն անցել է։ Գալով ձեր ազգականներին, մեր մէջ ասած, սիրելու պտուղներ չեն։ (Վեր է կենում)։ Էհ, տիկին, դուք չգիտէք վարել ձեր հարսի հետ։ Ես տասն անգամ ասել եմ, որ Արմենուհին այն կանանցից չէ, որոնց ընկճում են խստութեան և սպառնալիքների միջոցով։ Նա ունի քնքոյշ սիրտ, բայց ամուր կամք, ինչպէս իր հանգուցեալ մայրն էր։ Նրան միայն սիրով և փաղաքշանքով կարելի է գրաւել։ Այս լաւ իմացէք։ (Մի երկու քայլ է անում դէպի բեմի խորքը)։

ԵՂԻՍԱԲԷԹ (արհամարհանքով)։ Իհարկէ, ոսկու և արծաթի մէջ է մեծացել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (կանգ առնելով): Տիկին, քիչ դուռդպցէք ձեր ոսկի ու արծաթով։ Եթէ իմ աղջիկը համաձայնուեց այս տունը մտնել, չկարծէք, թէ ձեր հարստութեամբ յափշտակուեց։ Արմենուհին ձեր ասած կանանցից չէ։ Ո՛չ, ոչ ոչ։

ՏԵՍԻԼ VI.

Նոյնք և Մելանիա.

ՄԵԼԱՆԻԱ (գալիս է ձախ կողմից): Տիկին, ես նրան ոչ մի տեղ չգտայ։

ԵՂԻՍԱԲԷԹ (կատաղելով): Ա՛յ, տեսնում էք. տանը հիւրեր, իսկ տանտիկնոջը փնտրում են սարերում, ծորերում ու չեն գտնում։ Մի օր նա իր գլուխը կջարդի, կտեսնէք։ (Գնում է պատշգամբով):

ՏԵՍԻԼ VII.

Կոնստանդին և Մելանիա.

ՄԵԼԱՆԻԱ (նայելով Եղիսաբէթի յետևից երկիւղով: Ցածր ձայնով)։ Ես տեսայ երիտասարդ տիկնոջը։ Գետակի ափում նստած, քարեր էր գցում ջրի մէջ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հապա ինչու՞ ասացիք այդ պառաւին, թէ չը-գտաք։

ՄԵԼԱՆԻԱ. Երիտասարդ տիկինն այնպէս պատուիրեց։ Նա բարկացաւ, երբ ասացի, թէ սկեսուրն է ինձ ուղարկել իրան տուն կանչելու։ Ահա գալիս է ինքը։

ՏԵՍԻԼ VIII.

Նոյնք և Արմենուհի.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գալիս է ձախ կողմից: Սիրուն, համակրելի, համարձակ դէմքով, գեղեցիկ կազմուածքով կին է, բաց-շագանակագոյն թանձր մազերով, հագած է թեթև ամարային շրջազգեստ, դեղնագոյն կօշիկներ: Գլխին գցած է մի սպիտակ շալ, ձեռքում բռնած է մի մեծ փունջ վայրի ծաղիկներից և մի բարակ, սև, երկայն ձիւղաւոր ձեռնափայտ—Ալպենշտոկ): **Հայրիկ, բարև, այսօր ես քեզ չեմ տեսել:** (Համբուրում է Կոնստանդինի հետ):

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այդ ի՞նչ լաւ փունջ ես կազմել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հիանալի է, այնպէս չէ՞: Բարձր տեղերում եմ ժողովել այս ծաղիկները: Շատ նուրբ հոտ ունին: Հապա, տե՛ս: (Փունջը մօտեցնում է Կոնստանդինի դէմքին): **Զգո՞ւմ ես: Մելանիա, խնդրեմ բերէք մի ծաղկաման:**

ՄԵԼԱՆԻԱ. Իսկոյն: (Շտապով գնում է աջ կողմով և անմիջապէս վերադառնում է առանց շալի, ձեռքում մի ծաղկաման):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (փունջը պահելով, ձեռնափայտը յենում է աթոռներից մէկին և գալիս է առաջ): **Հայրիկ, կարծես դու տխուր ես և մի քիչ էլ յուզուած: Ի՞նչ է պատահել:**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Սկեսուրդ արիւնս պղտորեց:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դարձեա՛լ: Ա՛հ, այդ անտանելի է, վերջապէս: (Մելանիային): **Դրէ՛ք ծաղկամանը սեղանի վրայ:** (Փունջը տեղաւորում է ծաղկամանի մէջ): **Այսպէս, տես, հայրիկ, ինչպէ՛ս գեղեցկացնում է սեղանը:** (Շալը գլխից վերցնելով, տալիս է Մելանիային): **Երեխան տա՞նն է:**

ՄԵԼԱՆԻԱ. Ոչ: Դայեակը նրան դուրս տարաւ: (Շալն առնելով, գնում է պատշգամբով):

ՏԵՍԻԼ IX.

Արմենուհի և Կոնստանդին.

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ի՞նչ էր ասում սկեսուրս, հայրիկ:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Էհ, չարժէ ուշադրութիւն դարձնել: Մէկ անկանջով լսեցի, միւսով բաց թողի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այո, չարժէ, իհարկէ. բայց, դժբաղդաբար, այդ կինն իմ կեանքում մեծ դեր է խաղում: Անշուշտ, նա գանգատւում էր իմ դէմ: Անհնազանդ եմ, մեծերիս չեմ յարգում, ամբողջ օրը կամ նւագում եմ ու կարդում կամ զբօսնում: Օհ, միշտ միևնոյն երգը՝ անփոփոխ, ձանձրալի: (Նստում է):

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Զար է այդ կինը, Արնեենուհի, չար է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչ, հայրիկ չար չէ, այլ բռնակալ: Նա կարծում է, որ, լինելով իմ ամուսնու մայրը, իմ գլխի տէրն է: Նա մի տեսակ սուրբ պարտականութիւն է համարում ինձ կրթել: Եւ ի՞նչպէս: Փափագում է, որ ես, առաւօտը զարթնելով, ձեռներս կրծքիս դրած, սպասեմ նրա հրամաններին, ինչպէս ինքն է արել մի ժամանակ իր սկեսրի առաջ: Այս չէ միայն: Նա խառնւում է իմ և Սամսոնի յարաբերութիւնների մէջ, ծգտում է իշխել իմ մտքի, զգացումների և ճաշակի վրայ: Ահա այս մէկն ես տանել չեմ կարողանում, և նա կատաղում է: Հայրիկ, սկզբից և էթ մենք միմեանց չենք սիրել: (Վեր է կենում):

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Պատճառը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պատճառը պարզ է: Այդ կինը վճռած է եղել իր որդուն ամուսնացնել մի ուրիշի հետ: Ո՞վ է—հետաքրքրական չէ, բայց իր ճաշակի մէկն է: Սամսոնը գերադասել է ինձ: Եւ ես այս տունն եմ մտել արդէն իմ դէմ

ունենալով որոշ թշնամութիւն։ Աւելացրու և այն, որ Վիրգինէն, Սամսոնի քոյրը, ինձ ատում է դեռ գիմնազիայից սկսած։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Նրանն ինչ ես արել, որ ատում է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչինչ, հայրիկ, հաւատա։ Միայն հետը վարել չեմ կարողանում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Պէտք է կարողանաս վարել մի կերպ, ինչ արած։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ախ, հայրիկ, հեշտ է այդ ասել, բայց ի՞նչպէս։ Դու գիտես, որ ես զզւում եմ բամբասանքից։ Իսկ Վիրգինէն միայն նրանով է շնչում և ապրում։ Դեռ գիմնազիայում նա սիրում էր ամենքին չարախօսել, նոյնիսկ մեր ընկերուհիների ծնողներին։ Ոչ, հայրիկ, ես չգիտեմ ինչպէս նրա հետ ժամանակ անցկացնեմ, ինչի մասին խօսեմ։ Ինչ որ ինձ է զբաղեցնում, նրան ծանձրացնում է և հակառակը։ Նա սիրում է միշտ սրան պարսաւել, նրան զըրպարտել։ Երէկ, օրինակ, նա անբարոյական անուանեց իմ մօտ մի կնոջ, որին ես սիրում եմ և յարգում։ Նա լրտեսում է ամենքին և ամենից աւելի ինձ։ Եւ շարունակ իր մօրը լարում է իմ դէմ։ (Քայլում է)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Բայց ամուսի՞նդ ինչ է ասում։ Չէ՞ որ նա շատ էլ տգէտ մարդ չէ։ Ինչո՞ւ է թոյլ տալիս իր մօրն ու քրոջը քեզ վրայ իրաւունք բանացնելու։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ձեռով մի տխուր շարժումն անելով)։ Ա՛հ, ամուսինս։ Նա ժամանակ չունի ինձնով հետաքրքրուելու, նա զբաղուած է իր գործերով։ (Երեսը դարձնում է հօրից իր այլայլումները թաղցնելու համար)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (զգացել է Արմենուհու այլայլուելը։ Լռութիւն։ Մօտենում է)։ Արմենուհի, ինչո՞ւ երեսդ դարձրիր ինձնից։ Ի՞նչ ունիս, ասա, մի՛ քաշուիր։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*ուղղելով իրան*): **Թողնե՛նք, հայրիկ, թողնենք: Այս բոլորը հետաքրքրական չէ քեզ համար:**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ես քո ծայնի մէջ զգացի ինչ որ դառնութիւն: (*Բռնում է Արմենուհու ձեռը*): **Աչքերիս նայիր...**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*ձեռն ազատելով Կոնստանդինի ձեռից*): **Ոչինչ, հայրիկ, իմ ամուսինը վատ մարդ չէ... ես գոհ եմ: Ահա գալիս են նրանք: Լռե՛նք:**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Դու ինձ խաբել չես կարող, դու մի բան ունիս սրտումդ...

ՏԵՍԻԼ X.

Նոյնք, Սամսոն, Հմայեակ, Ստեփան և Սողոմ Սողոմեան.

ՍԱՄՍՈՆ (*գալիս է պատշգամբից: Միջահասակ, ամրակազմ մարդ է, տափակ ճակատով, թուխ դէմքով: Սև միրուքը խուզած է կարճ, բարակ ընչացքը հազիւ ծածկում է ամուր սեղմուած բարակ շուրթը: Ցօնքերը միշտ կնճռած են: Անտարբեր, եսամոլ, շահասէր մարդու տիպար: Սովորութիւն ունի մի ձեռը պահել պանթալօնի գրպանում, միւսով խաղալ ժամացոյցի շղթայի հետ*):

ՀՄԱՅԵԱԿ (*գալիս է պատշգամբից Սամսոնի հետ: Պարզ, համակրելի դէմքով, բաց գունի մազերով տղամարդ է: Հագնուած է ճաշակով: Ձեռները մեղմ են և շատ կիրթ: Ձեռում բռնած է կակուղ գլխարկ*):

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (*գալիս է պատշգամբից Սամսոնի յետևից Ստեփանի հետ: Ալեխառը, կարճ խուզած միրուքով, փոքրիկ, խորամանկ աչքերով, դէմքի շողոքորթ արտայայտութեամբ տղամարդ է: Հագած է տձև սիւրտուկ, սպիտակ ժիլէ, որ բաւական մաշուած է, ծալած օձիքով շապիկ, սև, տափակ փողկապ, լայն պանթալօն: Ձեռները ստրկական են*):

ՍԱՄՍՈՆ (*իջնելով պարտէզ*): **Ես հաւանեցի ձեր առաջարկած ոճը իմ նոր տան համար: Կազմեցէք պլանն այդ ոճով,**

եթէ ժամանակ ունիք։ Խնդրե՛մ, ծանօթանաք. կինս, աղջիս։

ՀՄԱՑԵԱԿ. Վառլամեան։ (Նախ ձեռ է տալիս Արմենուհուն, ապա Կոնստանդինին)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Այո, իմ կարծիքով էլ պարոն ճարտարապետի առաջարկած ոճը լաւն է, թէև ուրիշ լաւ ոճեր էլ կան։ (Իբրև տնացի, չի բարևում Արմենուհուն և Կոնստանդինին)։

ՍՏԵՓԱՆ (ծաղրելով)։ Այո, պատուելի քեռի, ինչպէս, օրինակ, դուք լաւ վարժապետ էք եղել, թէև կան և ուրիշ լաւ վարժապետներ էլ. կամ ես բժիշկ եմ, թէև ուրիշ բժիշկներ էլ կան։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Ինձ թւում է, սիրելի փեսայ, որ դուք մի քիչ ծաղրեցիք ինձ, թէև այդ չի կարելի ծաղր համարել։

ՏԵՍԻԼ XI.

Նոյնք և Եղիսաբէթ ու Վիրգինէ.

ԵՂԻՍԱԲԷԹ (երևում է պատշգամբի վրայ)։

ՎԻՐԳԻՆԷ (երևում է պատշգամբի վրայ Եղիսաբէթի հետ)։

ՍԱՄՍՈՆ. Ահա և իմ մայրն ու քոյրը։

ՀՄԱՑԵԱԿ (որ առանձին խօսում էր Արմենուհու հետ, հեռից գլուխ տալով Եղիսաբէթին ու Վիրգինէին, մօտենում է և ձեռ է տալիս)։

ՎԻՐԳԻՆԷ (երևում է թէ չէ, աչքերով փնտրում է Արմենուհուն և, տեսնելով նրան Հմայեակի հետ խօսելիս, դժկամութեան շարժումն է անում։ Բարևում է Հմայեակին սառը)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Կարող էք ճաշի նստել։ (Նստում է սեղանի մի ծայրում)։

ԱՄԵՆՔԸ (նստում են)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նստում է սեղանի հակառակ ծայրում, հրաւիրելով Հմայեակին իր մօտ նստել)։

ՎԻՐԳԻՆԷ (այնպէս է նստում, որ կարողանայ դիտել Արմենուհուն և Հմայեակին)։

ԳԱՐԵԳԻՆ (կերակուր է բաժանում):
ՄԵԼԱՆԻԱ (օգնում է Գարեգնին):
ՍԱՄՍՈՆ (անձեռոցիկը կրծքին կապելով): Այդ ի՞նչ փուռնջ է։
ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Արմենուհին է կազմել։ (Սկսում է ուտել):
ՍԱՄՍՈՆ (Արմենուհուն): Ասա, դու էլի անտառումն ես եղել։ (Սկսում է ուտել):
ԱՐՄԵՆՈՒՀԻ (կերակուր առաջարկելով Հմայեակին): Ո՛չ, լեռն էի բարձրացել։
ՍԱՄՍՈՆ. Երեխայությո՛ւն։ Չե՞ս մտածում, որ կարող է փորձանք պատահել։
ԵՂԻՍԱԲԷԹ. Կարծես, մեր պարտիզում ժաղիկներ չկան, որ լեռներն է վազում։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես գերադասում եմ վայրենի ժաղիկները։
ՎԻՐԳԻՆԷ. Որոնք բոլորովին հոտ չունին։
ՀՄԱՅԵԱԿ. Տիկին, մի՞թէ չէք զգում նրանց բուրմունքը։ (Ուտում է քիչ դանդաղ):
ՎԻՐԳԻՆԷ (կոշտ): Իհարկէ, չեմ զգում։
ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Ծաղկի հոտը կարելի է զգալ և չըզգալ, կախված է տրամադրութիւնից (ուտում է ախորժակով), թէև տրամադրութիւն ասված բանն էլ վիճելի է։
ՍՏԵՓԱՆ. Երևելի՛ փիլիսոփայութիւն։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պարոննե՛ր, այսօր եղանակը բացառապէս գեղեցիկ է, չէի՞ք կամենալ արդեօք ճաշից յետոյ խմբովին մի թեթև զբօսանք կատարել։
ԵՂԻՍԱԲԷԹ. Էլի զբօսա՞նք։
ՎԻՐԳԻՆԷ (մեկուսի): Ցնդուել է։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչ-հեռու, մերձակայ դաշտը։ Ես ծաղիներ եմ ժողովում. ո՞վ է ցանկանում։
ՀՄԱՅԵԱԿ. Ես մեծ ուրախութեամբ։
ԵՂԻՍԱԲԷԹ. Ինձ մի՞ջից դուրս բերէք, պառաւ կին եմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վիրգինէ, դո՞ւ։
ՎԻՐԳԻՆԷ (կոշտ)։ Չեմ ուզում։
ՍԱՄՍՈՆ. Իսկ ես չեմ կարող։
ՍՏԵՓԱՆ. Ես կարող եմ։
ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ես էլ։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երեք ծայն երեքի դէմ։
ՍՏԵՓԱՆ. Հարցը վճռում է քեռին։
ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (նեղն ընկած)։ Ճաշից յետոյ գրօսանքը շատ լաւ բան է, բայց հանգստանալն էլ շատ լաւ բան է, թէև կարելի է և չհանգստանալ։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ուրեմն, չէ՞ք կամենում։
ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Ես ինչպէ՞ս կարող եմ ձեր առաջարկութիւնը չընդունել, բայց միւս կողմից... պէտք է ասած, որ...
ՍՏԵՓԱՆ. Այո՞, վերջապէս, թէ ոչ։
ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Նայելով հանգամանքներին...
ՍՏԵՓԱՆ. Ուրեմն, այո և ոչ։ Մի խօսքով, կատարելապէս Սողոմոն քեռի։
ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Բժի՛շկ, եթէ կամենամ, այդ խօսքերից կարող եմ վիրաւորուել, թէև վիրաւորական բան չկայ։
ԱՐՄԵՆՈՒՀԻ (նկատել է երկու թափառական երաժիշտներ, որոնք անցնում են հեռու փողոցով)։ Օ՛հ, թափառական երաժիշտներ։ Դարեգին, կանչեցէք նրանց։
ԳԱՐԵԳԻՆ (շտապով մօտենում է խորքի ցանկապատին և նշան է անում մօտենալու)։

ՏԵՍԻԼ XII.

Նոյնք և թափառական երաժիշտներ.

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ (մօտենում են ցանկապատին և պատրաստւում են նւագելու)։

ՍԱՄՍՈՆ (ծանծրոյթով): Արմենուհի, թող անցնեն, գնան։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Օհ ոչ, այս մէկն ինձ նեբիր։ Ես շատ եմ սիրում թափառական երաժիշտներին։ (Դէպի երաժիշտները):

Մի հին եղանակ նուագեցէ՛ք։

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ (նուագում են, մէկը քեմանչա, միւսը թառ):

ՍԱՄՍՈՆ. Գոնէ չերգէին։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դրանք չեն երգում։

ՍԱՄՍՈՆ (Հմայեակին): Երևակայեցէք, պարո՛ն Վառլամեան, իմ կնոջ ճաշակը։ Երեք անգամ ինձ հետ ճանապարհորդել է Եւրոպան։ Տեսել է բոլոր մեծ թատրոնները, լսել է ամենարնտիր երաժիշտներին, Բայրէօթում հիացել է Վագների օպերաներով, Պարիզում Կոլոնի և Լամուրէօի օրկեստրներով, Հռոմում Կարուզօի ծայնով և դարձեալ ախորժում է այդ վայրենի երաժշտութիւնից։

ՀՄԱՅԵԱԿ. Ներեցէ՛ք, պարոն Սամսոն, ես ճարտարապետ եմ, հիանում եմ Եւրոպական հին ու նոր ոճերով, բայց այս ինձ չէ խանգարում սիրել և իմ մայրենի երկրի հին վանքերի ճարտարապետութիւնը։ Այն ունի իր առանձին հմայքը։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Բայց եթէ դուք լսէիք Արմենուհու դաշնամուր նուագելը, ամեն բան կմոռանայիք։

ՍՏԵՓԱՆ. Աա, վերջապէս քեռին մի բան գտաւ, որի մասին կարողանում է ասել «այո» և ոչ թէ «և այո և ոչ»։

ՀՄԱՅԵԱԿ (Արմենուհուն): Տիկին, ես յուսով եմ, որ անձամբ կըվայելեմ ձեր նուագման հաճոյքը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պայմանով, որ շատ էլ չհաւատաք քեռու գովասանքին։ Ինձ համար աւելի բարձր են այդ տարրական հնչիւնները։ Լսեցէ՛ք՝ որքան թախիծ, դառը վիշտ, ողբ մի տառապող սրտի։

ՎԻՐԳԻՆԷ. Ես ոչինչ չեմ զգում։

ՍԱՄՍՈՆ. Մուրճի հարուածներ են տալիս մարդու ներսերին։

ՀՄԱՑԵԱԿ. Դժուարանում եմ հաւատալ, որ այդպէս լինի։ Չէ՞ որ մանկութիւնից այդ հնչիւններով է կրթուել մեր լսելիքը։

ՍՏԵՓԱՆ. Իհարկէ. բայց սովորութիւն է դարձել մեզնում պարսաւել բոլորը, ինչ որ մայրենի է։ Դա համարւում է եւրոպականութիւն։ Սնօբի՛զմ...

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Երաժշտութիւնն այնպիսի բան է, որ կարելի է զգալ և չզգալ, նայելով տրամադրութեանը։

ՍՏԵՓԱՆ. Կեցցէ՞ք, քեռի, դարձեալ մի խորը փիլիսոփայական գաղափար արտայայտեցիք։ Ձեր կենացը... (Բաժակը զարկում է Սողոմ Սողոմեանի բաժակին և խմում)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մելանիա՛, վերցրէք պարոնից երեք ռուբլի և տուէք երաժիշտներին։

ԵՂԻՍԱԲԷԹ (զայրանալով)։ Երեք ռուբլի՞։ Գժուել ես, ի՞նչ է։ Դա էլ թատրոն չէ՛, որ ամեն անգամ ութ ռուբլի ծախսէք։ (Սամսոնին)։ Տասը կոպէկն էլ շատ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (վշտացած)։ Հայրի՛կ, տուր նրանց երեք ռուբլի։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Աչքիս վրայ։ (Ձեռը տանելով գրպանը)։ Մեծ բան չէ։

ՎԻՐԳԻՆԷ (մեկուսի)։ Շատ ես մեծ-մեծ կոտրտում, տեսնենք վերջդ ի՛նչ պիտի լինի։

ՍԱՄՍՈՆ (Կոնստանդինին)։ Ներեցէ՛ք, իմ հիւրերն իմ տանն իրաւունք չունին փող ծախսելու։ (Տալով Մելանիային մի ռուբլի)։ Տուր այս մի ռուբլին նրանց, թող կորչեն։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մելանիա՛, շնորհակալութիւն յայտնեցէք նրանց։ Այդ ցնցոտիների տակ մարդկային սիրտ է բաբախում։

ՄԵԼԱՆԻԱ (դրամը տալիս է երաժիշտներին)։

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ (դաղարում են նւագել, գլուխ են տալիս խոնարհ և հեռանում են)։

ՍՏԵՓԱՆ. Մայրիկ, կարելի՞ է վեր կենալ։ (Արմենուհուն)։ Տիկի՞ն։

ԵՂԻՍԱԲԷԹ. **Ճաշը վերջացել է։** (Վեր է կենում)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գլխով համաձայնության նշան է անում Ստեփանին և վեր կենում)։

ԱՄԵՆՔԸ (վեր են կենում)։

ԳԱՐԵԳԻՆ
ՄԵԼԱՆԻԱ } (սկսում են սեղանը ժողովել)։

ՍՏԵՓԱՆ (Կոնստանդինին)։ **Կամենաք, մի քիչ նառդի խաղանք պատշգամբի վրայ։**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ծխախոտ վառելով)։ **Իսկ զբոսանքը։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. **Զկայացաւ, հայրիկ։** (Սկսում է Հմայեակի հետ զրոյց անել)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (Ստեփանին)։ **Գնա՞նք։** (Բարձրանում է պատշգամբ)։

ՍՏԵՓԱՆ (Կոնստանդինին հետևելով)։ **Գարեգի՛ն, նառդին բերէք։**

ԳԱՐԵԳԻՆ (գնում է աջ, սենեակից շտապով մի նառդի է դուրս բերում և դնում պատշգամբի երկրորդ ծայրում)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ
ՍՏԵՓԱՆ } (սկսում են խաղալ)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (Եղիսաբէթին)։ **Քոյր, կարող ես մի բաժակ սուրճ տալ, թէև սուրճը վնասակար է ինձ համար։**

ԵՂԻՍԱԲԷԹ. **Գնա՞նք։** (Քայլերն ուղղում է դէպի պատշգամբ)։

ՎԻՐԳԻՆԷ (աչքերով միշտ հետևել է Արմենուհուն և Հմայեակին։ Եղիսաբէթին առանձին)։ **Տես է՞, քչփչում են։**

ԵՂԻՍԱԲԷԹ (մի արագ թշնամական հայեացք ձգելով Արմենուհու կողմը)։ **Ա՛հ, քանի գնում, այնքան աւելի եմ ատում։ Երեք ռուբլի մուրացկաններին, Տէ՞ր Աստուած։** (Գնում է)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (հետևում է Եղիսաբէթին)։

ՎԻՐԳԻՆԷ (մի չար հայեացք ևս ձգելով Արմենուհու և Հմայեակի վրայ, հետևում է Եղիսաբէթին)։

ՍԱՄՍՈՆ (Հմայեակին)։ **Ես կկամենայի ձեզ հետ աւելի մանրամասն խօսել իմ նոր տան պլանի մասին։ Պէտք է ասած, որ ձեր առաջարկած ոճը քանի գնում ինձ աւելի է գրաւում։**

ՀՄԱՑԵԱԿ. Խնդրե՛մ։ Ես ձեր տրամադրութեան տակ եմ։
ՍԱՄՍՈՆ. Գնանք իմ սենեակը։ (Դիմում է դէպի պատշգամբ)։
ՀՄԱՑԵԱԿ (բարձրանում է պատշգամբ և, մինչ Սամսոնն ու Արմենուհին խօսում են, կանգնում է Կոնստանդինի ու Ստեփանի քով և նայում նրանց խաղին)։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Սամսո՛ն, մի բոպէ։
ՍԱՄՍՈՆ (յետ է դառնում)։

ՏԵՍԻԼ XIII.

Արմենուհի և Սամսոն.

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ասա խնդրեմ, ինչո՞ւ դու միշտ խափանում ես ամեն մի զարճուրթիւն։ Կարծեմ, քեզ համար դժուար չէր լինիլ մի երկու ժամ նուիրել ինձ։
ՍԱՄՍՈՆ. Դրա համար պահեցիր ինձ։ Էհ։ (Ուզում է գնալ)։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Կա՛ց։
ՍԱՄՍՈՆ (կանգ առնելով)։ Ասա՛, լսում եմ։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Բանը զբօսանքը չէ, Սամսո՛ն, հասկացի՛ր, վերջապէս։
ՍԱՄՍՈՆ. Ի՞նչ է պատահել, ասա, որ հասկանամ։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վերջերս մի չար նախազգացում սկսել է ինձ հալածել։ Թւում է, որ շուտով ինձ մի դժբաղդութիւն է պատահելու։ Պաշտպանի՛ր ինձ։
ՍԱՄՍՈՆ. Դատարկ բաներ են, ի՞նչ նախազգացում, ի՞նչ դըժբաղդութիւն։ Մեր հասարակութեան մէջ երբէք կին չըկայ քեզ նման բաղդաւոր։
ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հաւատամ արդեօք։
ՍԱՄՍՈՆ. Իրաւունք չունիս չհաւատալու։ Նայի՛ր շուրջդ, ամենքը նախանձում են քեզ։ Ո՞ւմ ամուսինն ես։ Սամսոն Ալադեանի. ասել է՝ ոչինչ չի պակասում քեզ բացի պակասութիւնից։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՜հ, եթէ իմանայիր ինչ է կատարուում ահա այստեղ, (սրտին դարկելով), այդ չէիր ասիլ։ Կայ մի պակասութիւն, որ ոչ քո հարստութիւնը կարող է լրացնել, ոչ մարդկանց յարգանքն և նախանձը։

ՍԱՄՍՈՆ. Ո՞յն է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Քո անտարբերութիւնը դէպի իմ հոգեկան վիճակը։ Սամսո՛ն, պարզ ասա, աներ կիւղ, ճի՞շտ է, որ քո գործերն են միայն քեզ խլում ինձնից։

ՍԱՄՍՈՆ (թեթև ցնցւում է, բայց և իսկոյն ուղղում է իրան)։ Զարմանալի հարց։ Ուրիշ ես ինչո՞վ կարող եմ յաւիշտակւել, բացի իմ գործերից։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իհարկէ, ես էլ այդպէս եմ կարծում, սակայն մի տխմար կասկած, մի ինչ որ թերահաւատութիւն մտել է սիրտս և ինձ տանջում է...

ՍԱՄՍՈՆ (ձևանում է վիրաւորուած)։ Արմենուհի՛, կարծեմ, ես քեզ ոչ մի կասկածի առիթ չեմ տուել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Լաւ, մի՛ բարկանար։ Երևի, ես յիմար եմ...

ՍԱՄՍՈՆ. Ցիմար չես, Արմենուհի, այլ մի փոքր նեարայինն, և այդ առաջանում է անգործութիւնից։ Զբաղւիր մի բանով և կանցնի։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՜ա, ոչ մի զբաղմունք, ոչ մի գործ ինձ չի հեռաքրքրում։ Ասա՛ ինձ, Սամսոն, սիրո՞ւմ ես քո Արմենուհուն։

ՍԱՄՍՈՆ. Հինգ տարի է ամուսնացած ենք և դեռ հարցնո՞ւմ ես այդ։ Մի՞թէ չգիտես, որ ինձ նման մի մարդու համար բացի իր օրինական ամուսնուց ոչ մի կին գոյութիւն ունենալ չի կարող։ Այդ կողմից ես նահապետական մարդ եմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուրախացած, ինքնամոռացութեան մէջ յարձակւում է Սամսոնին գրկելու)։ Ա՜հ, ես այդ էի փափագում քեզնից լսելու։

ՍԱՄՍՈՆ (մի քայլ յետ է կանգնում, նայելով դէպի պատշգամբը)։ Ի՞նչ է անում, անմիտ, հիւրերի ներկայութեամբ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կանգ է առնում։ Դառը ծիծաղով)։ Ա՜ա, վախեցար, բանականութիւնդ իսկոյն բողոքեց։ Լաւ, մի՛ ամաչիր, կատակ էի անում։ (Հեռանում է Սամսոնից)։ Գիտեմ, չես ուզում, որ քեզ թեթևամիտ մարդ համարեն։ Ո՛չ, բարեկամս, այդպէս չեն սիրում։ Սիրող մարդն այդքան զգոյշ չի լինում։ Հիւրե՞ր։ Ո՞ւր են նրանք։ Պատշգամբի ծայրում։ Այնքան հեռու, որքան քո սիրտն ինձնից։ Գնա՛, էս քեզ համար կեանքի ընկերուհի չեմ, այլ ուրիշ բան...

ՍԱՄՍՈՆ. Չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՛հ, իմ վիշտն էլ այն է, որ չես հասկանում և, երևի, երբէք չես հասկանալ ինձ։ Հինգ տարի է քո կինն եմ, և մի անգամ դու չես կարողացել բաբախել տալ իմ սիրտը։ Ես քո հոգու և արեան բաժինը չեմ, այն, ինչ որ երևակայում էի, թէ պիտի լինի մի կին իր ամուսնու համար։ Քո գլուխը լի է հաշիւներով, քո սիրտը կաշկանդուած է քո գործերի ցանցով։

ՍԱՄՍՈՆ. Ճիշտ է, ճիշտ է, յետո՞յ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դրամի սէրը դարձել է քեզ համար բռնակալ կիրք և յափշտակել է քեզ իսկական կեանքից։ Բայց ի՞նչ եմ անում քո հարստութիւնը, որ այնքան երեսուխս են տալիս քո քոյրն ու մայրը։ Ինձ սիրտ է հարկաւոր, վառվռուն, թրթռուն սիրտ, հարուստ հոգի, կեանք, հասկանո՞ւմ ես, կեա՛նք։ Գնա՛ քո գործերի յետևից։ Ես այն չեմ, ինչ որ հարկաւոր էր քեզ նման մի խելօք մարդու։ Մենք տարբեր աշխարհների մարդիկ ենք։ Մայրդ ու քոյրդ ունին իրաւունք ինձ ատելու։ Ո՞ւմ եմ դիմում ես իմ անմիտ փափաքներով, իմ յիմար երազներով։ Մտի՛ր առանձնասենեակդ, խորասուզի՛ր քո հաշիւների մէջ և յետոյ...

ով գիտէ։ Իսկ ես... թող, որ իմ տխմար երևակայութեամբ երջանկութեան օդային դղեակներ կառուցանեմ։ (Շտապով բարձրանում է պատշգամբ և անհետանում)։

ՍԱՄՍՈՆ. Կաց, սպասիր։ (Մի երկու քայլ է անում Արմենուհու յետևից և, կանգ առնելով, մտածում է)։ **Զարմանալի է, տարօրինակ։**

ՎԱՐԱԳՈՅՐ.

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Տեսարանը ներկայացնում է ամարանոցի ներսը:

Մի մեծ սենեակ, թեթև կահաւորուած: Խորքում երկու լուսամուտներ, մէջտեղ դռներ դէպի այն պատշգամբը, որ I արարուածում կազմում էր բեմի աջ կողմը: Հեռու երևում են պարտիզի ծառերի գագաթները: Աւելի հեռու՝ ժայռեր: Աջ պատի մէջ երկու դռներ, որոնցից առաջինը տանում է Սամսոնի սենեակը, երկրորդը—Արմենուհու բուդուարը: Ձախ պատի մէջ ևս երկու դռներ, որոնցից առաջինը տանում է մի ընդհանուր մուտք, իսկ երկրորդը—Եղիսաբէթի սենեակը:

Բեմի խորքում, աջ լուսամտի առջև դաշնամուր, ձախ լուսամտի առջև մի կլոր սեղան, վրէն վայրի ծաղիկների մի փունջ: Ձախ պատի առջև, երկու դռների միջև զահաւորակ և մի քանի թեթև կիսաբազկաթոռներ: Լուսամուտների վրայ սպիտակ վարագոյրներ:

Խորքի դռներն ու լուսամուտները բաց են:

ՏԵՍԻԼ I.

Կոնստանդին և Ստեփան.

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (*վերադառնում է առաւօտեան զբօսանքից խորքի դռներով: Հագնուած է այնպէս, ինչպէս առաջին արարուածում*): **Շատ ուրախ եմ, որ դուք վճռել էք մի քանի շաբաթ մնալ: Սամսոնի ազգականների մէջ դուք այս տան միակ անկեղծ բարեկամն էք: Իսկ այժմ ձեր ներկայութիւնն այստեղ մինչև անգամ անհրաժեշտ է:**

ՍՏԵՓԱՆ. Ինչո՞ւ է անհրաժեշտ։ (Գալիս է Կոնստանդինի հետ. նույն հագստով է)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (յուզելով)։ Կասեմ, բժի՛շկ, կասեմ։

ՍՏԵՓԱՆ. Ես նկատում եմ, որ վերջին անգամ քաղաք գնալուց յետոյ դուք առհասարակ տխուր էք։ Կարելի՞ է իմանալ ինչ է պատահել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Պատահել է այն, ինչ որ ես վաղուց կասկածում էի։ Բայց մի անգամ էլ պէտք է ստուգել։ Բժիշկ, ուէք ինձ աղնիւ խօսք, որ իմ մի հարցին կպատասխանէք ամենայն անկեղծութեամբ։

ՍՏԵՓԱՆ. Ի՞նչ բանի է վերաբերում ձեր հարցը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Իմ աղջկայ ճակատագրին։

ՍՏԵՓԱՆ (զարմացած)։ Ճակատագրի՞ն անգամ։ Այդ ի՞նչ կարող է լինել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Տալի՞ս էք խօսք, որ կպատասխանէք իմ հարցին։

ՍՏԵՓԱՆ. Դուք այնպիսի բան էք պահանջում, որ ես չեմ կարող մերժել։ Արմենուհու ճակատագիրն ինձ համար այնքան թանգ է, որքան ձեզ համար։ Հարցրէ՛ք ինչ կամենում էք։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (դողդոջուն ձայնով)։ Ի՞նչ էք կարծում, բժիշկ, իմ փեսան, Սամսոն Ալադեանը աղնի՞ւ մարդ է։

ՍՏԵՓԱՆ (զարմացած)։ Ի՞նչ։ Ձեր հարցը տարօրինակ է։ Չեմ հասկանում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Կհասկացնեմ, բարեկամս, կհասկացնեմ։ Ո՛վ է այն անառակ... Բայց սպասեցէ՛ք, կարծեմ գալիս են։ Գնանք իմ սենեակը։ Այնտեղ կբացատրեմ։ Գնա՞նք։ (Գնում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՍՏԵՓԱՆ (հետևում է Կոնստանդինին)։

ՏԵՍԻԼ II.

Եղիսաբէթ, Սիրանոյշ և Վիրգինէ.

ԵՂԻՍԱԲԷԹ (գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով: Հագնուած է այնպէս, ինչպէս առաջին արարուածում): **Ապրի՛ք, որդի, ապրիք։ Հարսը ձեզ պէս պիտի լինի։ Մի կին, որ փողի հաշիւ չգիտէ, պրծաւ, քանդուեց նրա մարդու տունը։ Նստեցէք այստեղ։** (Նստում է):

ՎԻՐԳԻՆԷ (ներս է մտնում ձախ կողմի երկրորդ դռներով Եղիսաբէթից և Սիրանոյշից յետոյ: Հագած է ուրիշ շրջազգեստ, այս անգամ համեմատաբար համեստ): **Իհարկէ։** (Նստում է):

ՍԻՐԱՆՈՅՇ (գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով Եղիսաբէթից յետոյ, Վիրգինէից առաջ: Բաւական գեղեցիկ, բայց ոչ-մեղմ դէմքով կին է: Հագնուած է շքեղ, գլխին շատ մեծ գլխարկ ահագին փետուրով: Ձեռում մի թանկագին քսակ և շքեղ հովանոց): **Հայրս օժիտս տուել է ինձ, ես շահեցնում եմ։** (Նստում է): **Ամուսինս իմ հաշիւներին չի խառնւում և թոյլ էլ չեմ տալ, որ խառնւի։ Նա անհաշիւ մարդ է։**

ԵՂԻՍԱԲԷԹ. Զմոռանամ մի բան հարցնել. Մոսկովումն էլ խոհարարները գողանո՞ւմ են, ինչպէս մեզնում։

ՍԻՐԱՆՈՅՇ. Այո՛, տիկին, այս վերջին տարին իններ խոհարար եմ փոխել։

ՎԻՐԳԻՆԷ. Ես էլ ամիսը մէկը փոխում եմ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ձեր լացարարնե՞րն ինչպէս են։

ՍԻՐԱՆՈՅՇ. Հաշուով տալիս եմ լացքը, հաշուով ընդունում եմ։ Մի բան պակասելիս վարձը կտրում եմ։

ՎԻՐԳԻՆԷ. Ես էլ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Երևակայում եմ, որքան է սիրում ձեզ ձեր սկեսուրը։

ՍԻՐԱՆՈՑՇ. Ես սկեսուր չունիմ։ (Մեկուսի)։ Բարեբաղդաբար։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ախտոս։ Սկեսուրը ընտանիքի խմորն է։ Վիրգինէն էլ չունի։

ՎԻՐԳԻՆԷ (մեկուսի)։ Բարեբաղդաբար։ (Սիրանոյշին)։ Սիրում էք ձեր ամուսնուն։

ՍԻՐԱՆՈՑՇ (ժպտալով)։ Զգիտեմ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Իսկ նա, իհարկէ, սիրում է ձեզ։

ՍԻՐԱՆՈՑՇ. Այդ մասին չեմ էլ մտածում։ Ամուսինս է, իհարկէ, օրէնքով պարտաւոր է սիրել։ Միայն մեր գաղափարները միմեանց հակառակ են, երբեմն վիճում ենք։ (Ինքնագոհ)։ Բայց միշտ ես եմ յաղթում։

ՎԻՐԳԻՆԷ. Իսկ և իսկ ինձ նման։ Բարի մարդ է, երևի։

ՍԻՐԱՆՈՑՇ. Շատ բարի. բայց դիւրագրգիռ է։

ԵՂԻՍԱԲԷԹ. Լաւ պահեցէք, բարի մարդիկ թոյլ են լինում։ (Խորհրդաւոր ժպտում է)։

ՍԻՐԱՆՈՑՇ. Ես դրանից իսկի չեմ վախենում։ Ոչ ոք չի կարող իմ ամուսնուն ձեռքիցս խլել։

ՎԻՐԳԻՆԷ (խորհրդաւոր ժպտալով)։ Ո՞վ գիտէ...

ԵՂԻՍԱԲԷԹ (տեսնելով Արմենուհուն)։ Ահա, հարսս եկաւ։

ՏԵՍԻԼ III.

Նոյնք, Արմենուհի եւ Մելանիա.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գալիս է աջ կողմի երկրորդ դռներով. հագած է ընդունելութեան բաւական շքեղ հագուստ, շատ ճաշակով յարդարած։ Թանձր մազերը պահպանուում են գեղեցիկ կրեայ սանրով։ Կոկորդի վրայ մի հնաշէն քորոց)։ Բարև ձեզ, տիկի՛ն։ (Ձեռ է տալիս Սիրանոյշին սիրալիր եւ նստում է)։

ՍԻՐԱՆՈՑՇ (մի նախանձոտ հայեացքով չափել է Արմենուհուն ոտքից

մինչեւ գլուխ): Հմայեակը բերեց իր կազմած պլանը ձեր ամուսնուն ցոյց տալու, ես էլ կամեցայ ձեզ հետ մի քիչ զրոյց անել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Շատ ուրախ եմ: (Մինչ Եղիսաբէթն ու Մելանիան խօսում են, ձեւերով զրոյց է անում Սիրանոյշի հետ):

ՄԵԼԱՆԻԱ (գալիս է ձախ կողմի առաջին դռներով: Եղիսաբէթին): Տիկի՛ն, գիւղացիները իւղը բերել են:

ԵՂԻՍԱԲԷԹ (արագ ոտքի կանգնելով): Օյ, տեսէք, որ առանց ինձ չկշռեն: Այդ գիւղացիները խաբեբաներ են: Գնա՛, սուրճ բեր տիկիններին համար: (Գնում է ձախ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ IV.

Արմենուհի, Սիրանոյշ եւ Վիրգինէ, մերթ ընդ մերթ Մելանիա.

ՍԻՐԱՆՈՅՇ. Կարդացի ձեր տուած վէպը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հաւանեցի՞ք:

ՍԻՐԱՆՈՅՇ. Ես հաւանեցի միայն այն առաքինի կնոջը, որին մի խելագար ուզում էր զրկել օրինական ամուսնուց:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իսկ այդ օրիորդին, որ խելագար անւանեցիք, չէ՞ք կարեկցում:

ՍԻՐԱՆՈՅՇ. Ամենեւին:

ՎԻՐԳԻՆԷ (ձանձրոյթի նշաններ է անում):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Զէ՞ որ նա անյոյս սիրուց իրան ժայռից գցում է իր սիրեցեալի ոտների տակ և կտոր-կտոր լինում:

ՍԻՐԱՆՈՅՇ. Ի՞նչ իրաւունք ունէր մի օրիորդ սիրահարւելու ամուսնացած մարդու վրայ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ասում են սէրն իրաւունքներ չի ճանաչում, տիկի՛ն:

ՎԻՐԳԻՆԷ. Անառակ սէրը, իհարկէ, չի ճանաչիլ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*Սիրանոյշին*): Հաւանում էք այստեղի բնութիւնը:

ՍԻՐԱՆՈՅՇ. Շատ էլ չէ, զառիվայրեր շատ կան, կառքով զբօսնելը վտանգաւոր է:

ՄԵԼԱՆԻԱ (*երեք գաւաթ սուրճ և շաքարահաց է բերում, դնում է սեղանի վրայ և դնում է միևնոյն, այսինքն՝ ձախ կողմի առաջին դռներով*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իսկ ձեր ամուսինը հիացած է:

ՎԻՐԳԻՆԷ (*մի բաժակ սուրճ վերցնելով*): Ա՛խ, դու արդէն խօսե՞լ ես նրա հետ բնութեան մասին մինչև անգամ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*առանց նայելու Վիրգինէին*): Այո՛, ես պարոն Հմայեակի հետ խօսել եմ ամեն բանի մասին:

ՍԻՐԱՆՈՅՇ. Եւ նա հիացած է ձեզնով: Ասում է, առաջին անգամն եմ հանդիպում մի հայ կնոջ, որ գեղեցկի մասին գաղափար ունի:

ՎԻՐԳԻՆԷ (*մեկուսի*): Օհո՜:

ՍԻՐԱՆՈՅՇ. Իսկ երէկ նա այստեղից վերադարձաւ խելագարուած ձեր դաշնամուր նւագելուց: (*Դիտում է Արմենուհու հագուստը*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես թանգ եմ գնահատում արտիստի կարծիքը:

ՎԻՐԳԻՆԷ (*Սիրանոյշին*): Է՛հ, սիրելիս, այժմ ո՞վ չի դաշնամուր նւագում: Անցէք մեր փողոցներով, իւրաքանչիւր լուսամուտից կլսէք «դի՜նգ-դրնգ, դի՜նգ-դրնգ»... (*Սուրճ է խմում*):

ՍԻՐԱՆՈՅՇ. Ես էլ օրիորդ ժամանակս շատ էի նւագում, բայց հիմա դաշնամուրս փոշի է պատել: (*Արմենուհուն*): Ասացէ՛ք, խնդրեմ, ո՞րտեղ էք կարել տուել այդ հագուստը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*անփոյթ*): Թիֆլիսում: (*Սուրճ է խմում*):

ՍԻՐԱՆՈՅՇ. Հիանալի՜ է: Երևակայեցէ՛ք, գարնանը ես Պարիզում երկու հագուստ պատուիրեցի, փչացրին: (*Շօշափելով Արմենուհու շրջազգեստը*): Եւ ի՜նչ ամուր կտոր է, երկար կը-դիմանայ:

ՎԻՐԳԻՆԷ (*Սիրանոյշին*): Ես ձեր հագուստն աւելի եմ հաւանում: Դուք ճաշակ ունիք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուշադրութիւն չդարձնելով Վիրգինէի խօսքերի վրայ, Սիրանոյշին): Դուք ասացիք, թէ գարնանը Պարիզում էք եղել. տնկասկած, տեսել էք այն պիէսը, որ ներկայացնում է Բեթհովէնի ողբերգական կեանքը: Ասում են, շատ սրտաշարժ է այն տեսարանը, երբ իններ սիմֆոնեաները զալիս են իրանց երկնային ձայնով մխիթարելու հանճարեղ ստեղծագործողին:

ՍԻՐԱՆՈՅՇ (ձանձրոյթով): Զգիտեմ, չեմ յիշում, թատրոններ շատ եմ տեսել: Երկու ամսւայ ընթացքում Պարիզում ծախսեցինք չորս հազար հարիւր քսան ու եօթը ռուբլի:

ՎԻՐԳԻՆԷ (Սիրանոյշին): Դուք ճանաչում էք Մոսկւայում տիկին Մարմառեանին:

ՍԻՐԱՆՈՅՇ. Այո:

ՎԻՐԳԻՆԷ. Նա իմ դասընկերն է եղել. ասում են, իր մարդուն դաւաճանում է, ճի՞շտ է:

ՍԻՐԱՆՈՅՇ. Չեմ լսել:

ՎԻՐԳԻՆԷ. Իսկ ես լսել եմ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կամենալով խօսակցութեան նիւթը փոխել, Սիրանոյշին): Տիկին, Պարիզում տեսաք Ռոդէնի գործերը:

ՍԻՐԱՆՈՅՇ (մտածելով): Ռոդէն... Ռոդէն... միտս չէ... այդ ի՞նչ մարդ է:

ՎԻՐԳԻՆԷ. Կար ու ձեւի վարպետ կլինի, մոդիստ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ո՛չ, Վիրգինէ, Ռոդէնը մեր ժամանակի ամենահանճարեղ արձանագործն է, որին համեմատում են Ֆիդիասի հետ:

ՍԻՐԱՆՈՅՇ. Արձանների մասին ամուսնուս հետ խօսեցէք: Ախ, այդ ի՞նչ հրաշալի քորոց է: Կարելի՞ է մօտիկից տեսնել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (քորոցն իր օձիքից պոկելով, տալիս է Սիրանոյշին): Համեցէ՛ք:

ՍԻՐԱՆՈՅՇ (հիացած դիտելով քորոցը): Ի՞նչ հաղւագիւտ քար է, ի՞նչ պայծառ գոյն ունի և ի՞նչ անենման գործ է: Թանգ արժէ: (Քորոցը տալիս է Արմենուհուն):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (քորոցը իր տեղը կպցնելով): Զգիտեմ, հանգուցեալ մօրս յիշատակն է։ Կամենաք, տիկին, վաղն ինձ հետ բարձրանալ կարմիր լեռան գագաթը արեգակի ելքը տեսնելու։

ՍԻՐԱՆՈՅՇ (զարմացած): Արեգակի ծագումը։ Ի՞նչ էք ասում, մի՞թէ մարդ կարող է այդպէս վաղ զարթնել։

ՎԻՐԳԻՆԷ (չարութեամբ): Ինչո՞ւ չէ, կաթնավաճառները ու հացթուխները զարթնում են։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Կկամենաք։

ՍԻՐԱՆՈՅՇ. Ո՛չ, սիրելիս, անկարող եմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այն ժամանակ այս երեկոյ բարձրանանք արեգակի մայր մտնելը տեսնելու։

ՍԻՐԱՆՈՅՇ. Մի՞թէ հեռաքրքրական է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ոգևորուելով): Օ՜, տիկին, այդ մի սքանչելի տեսարան է։ Մի երազ և այնպիսի երազ, որ միայն մանուկ հասակում կարելի է տեսնել։

ՎԻՐԳԻՆԷ (մեկուսի): Օհ օ, սկսեց։ (Բարձր): Սինեմատոգրաֆումն էլ կարելի է տեսնել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուշադրութիւն չդարձնելով Վիրգինէի վրայ): Ձեր առջև տարածուում է Կովկասեան լեռնաշղթան աջ ու ձախ։ Ձիւնապատ գագաթները ոսկեզօծուած, լայնատարած սառցարանները մանիշակագոյն, ինչպէս երկինքը ամարային երեկոյ։ Վերը սպիտակ ամպերի վիթխարի քուլաները, վարը մթին անդունդներ։ Լոյս և խաւար, կեանք և մահ, աստուածային գեղեցկութիւն և դիւային զօրութիւն։ Եռանդների աննկարագրելի խառնուրդ։ Եւ դուք, նայելով հսկաների վարդագոյն գագաթներին ու նրանց հուժկու կրծքերին, սլանում էք դէպի հեռաւոր, անծանօթ աշխարհներ, ուր չկան մանր կրքեր, չնչին յոյզեր, նիւթամոլութիւն, նախանձ, զրպարտութիւն, բանսարկութիւն, ատելութիւն։ Ա՛հ, այդ սքանչելի է, ինչպէս տիեզերքի գոհար... (Վեր է կենում):

ՍԻՐԱՆՈՑԾ (*կիսահեգնական*): **Կեցցէ՛ք, կեցցէ՛ք, դուք կատարեալ բանաստեղծ էք։** (*Վեր է կենում*):

ՎԻՐԳԻՆԷ (*բռնի ծիծաղելով*): **Պակասում է միայն սազը։** (*Վեր է կենում*): **Է՛հ, այնքան վէպեր է կարդացել, որ կարող էր մի բան անգիր անել։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*նայում է Վիրգինէին հանգիստ արհամարհական հայեացքով*):

ՍԻՐԱՆՈՑԾ (*նայելով իր ժամացոյցին*): **Ա՛հ, արդէն տասներկու ժամն է, Հմայեակն ուշացաւ, ես չեմ կարող նրան սպասել։ Դէ՛հ, ցտեսութիւն, սիրելիս. ես լեռներ բարձրանալ չեմ կարող։ Տափակ տեղ էլ կարելի է զբաղանալ։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*ուղեկցում է Սիրանոյշին մինչև խորքի դռները և յետ է գալիս։ Հառաչում է իբրև մի մեծ ծանծրոյթից ազատած*):

ՎԻՐԳԻՆԷ. Արմենուհի, դու իսկի հիւր զբաղեցնելու շնորհք չունիս։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*անփոյթ*): **Ճշմարիտն ես ասում։** (*Ուզում է գնալ աջ կողմի երկրորդ դռներով, Սամսոնին տեսնելով, կանգ է առնում*):

ՏԵՍԻԼ V.

Արմենուհի, Սամսոն և Վիրգինէ.

ՍԱՄՍՈՆ (*գալիս է աջ կողմի առաջին դռներով։ Հագած է ուրիշ հագուստ—մոխրագոյն կօմպլէ*): **Վիրգինէ՛, աղախնին հրամայիր երկու գաւաթ սուրճ տանել իմ սենեակը։**

ՎԻՐԳԻՆԷ. Իսկոյն։ (*Շտապով գնում է ձախ կողմի առաջին դռներով*):

ՏԵՍԻԼ VI.

Սամսոն եւ Արմենուհի.

ՍԱՄՍՈՆ (*սպասել է, որ Վիրգինէն հեռանայ։ Գրգռած է*): **Լսի՛ր։ Հայրդ իրան խելօք չի պահում. ես պատասխանատու չեմ իմ մասին։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ի՞նչ է պատահել։

ՍԱՄՍՈՆ. Այս բոպէին նա ինձ վիրաւորեց օտարի ներկայութեամբ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վիրաւորե՞ց, քե՞զ, հա՞յրս. այդ անկարելի բան է։

ՍԱՄՍՈՆ. Ակա՛նջ դիր. նա անցնում էր իմ լուսամտի առջևով։ Ես խնդրեցի նրան մտնել իմ սենեակը մի րոպէ. կամենում էի ցոյց տալ նրան Վառլամեանի շինած պլանը մեր նոր տան համար։ Պատիւ էի ուզում անել։ Երևակայի՛ր, նա ինչ պատասխան տուեց. «Թո՛ղ ինձ հանդիստ, ես չեմ ուզում տեսնել քո նոր տունը, որ շինում ես հինը քանդելով»։ Ի՞նչ էր ուզում ասել այդ խօսքերով—չհասկացայ. միայն նրա ասելու ձևը, դէմքը, ձայնը այնքան կոպիտ էին, որ մնացի ամօթահար Վառլամեանի առջև։ Պէտք է ասել, որ առհասարակ վերջերս նա իմ դէմ ինչ որ թշնամական դիրք է բռնել։ Ապրելով իմ տանը, նա կրում է իմ դէմ մի անհասկանալի ոխ։ Այդ ես համբերել չեմ կարող, լսո՞ւմ ես չեմ կարող։ (Ուզում է գնալ)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Սպասի՛ր։ Քո խօսքերն ինձ ապշեցնում են։ Իմ հայրը ոչ չար մարդ է, ոչ անտակտ։ Եթէ արդարև նա քեզ վիրաւորել է, կնշանակի մի պատճառ ունի և, անկասկած, լուրջ պատճառ։

ՍԱՄՍՈՆ. Ես չգիտեմ և չեմ էլ հետաքրքրւում նրա պատճառներով. գիտեմ միայն, որ եթէ այդպէս շարունակւի, ստիպւած կլինեմ... (Զսպում է իրան)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գուշակելով)։ Դուրս անել նրան քո տնից, այնպէս չէ՞։ Շա՛տ լաւ. տունը քոնն է, ունիս իրաւունք։ Բայց լսիր, առանց քո սպառնալիքի էլ իմ հայրը կհեռանայ քո տնից։ Արդէն նա ինքը վաղուց էր ուզում հեռանալ. ես չէի թողնում։ Վաղը նա այլևս քեզ չի անհանգստացնիլ. բաւակա՞ն է։

ՍԱՄՍՈՆ. Ես չեմ ուզում, որ մարդիկ ասեն, թէ Ալադեանն իր աներոջ վերաբերմամբ եղել է անքաղաքավարի։ Միայն ինձ թւում է, որ մեր փոխադարձ յարաբերութիւնների մէջ երրորդ անձի մասնակցութիւնը աւելորդ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՜հ, այդպէ՞ս է, կեցցե՛ս, կեցցե՛ս։ Ես վաղուց էի փափագում լսել այդ քեզնից։ Շատ բարի, իմ հայրը կհեռանայ քո տնից և դու երբէք չես տեսնիլ նրա երեսը։ Բայց կան և ուրիշ անձնաւորութիւններ, որ աւելի են խառնւում մեր փոխադարձ յարաբերութիւնների մէջ, քան իմ հայրը։ Այդ քո մայրն է և քո քոյրը։ Դու էլ նրանց հեռացրու։ Համաձայն ես։

ՍԱՄՍՈՆ (զարմացած)։ Ի՞նչ, ես բաժանւեմ իմ ծնողից։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ինչո՞ւ չէ. չէ՞ որ ես բաժանւում եմ իմ ծնողից։

ՍԱՄՍՈՆ. Դու կին ես, ես այր. դու ես եկել իմ մօր տունը և ոչ նա՝ քո տունը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ահա՜ թէ ինչ։ Եւ դու քեզ համարում ես լուսաւորուած մարդ։ Սամսո՛ն, մեր երջանկութիւնը անկախ հիմքի վրայ պիտի դրուի, եթէ ուզում ենք վայելել փոխադարձ երջանկութիւն։ Ես կյարգեմ քո մօրը բիւր անգամ աւելի, ես սուրբի պէս կպաշտեմ նրան, եթէ նա հեռու լինի մեզնից. գոնէ այնքան հեռու, որ չխառնւի քո և իմ զգացումների մէջ։ Ես աւագ քրոջս պէս կպատուեմ քո քրոջը, եթէ նա ինձ հանգիստ թողնի։ Մի փոքր առաջ, նա տիկին Սիրանոյշի ներկայութեամբ, հինգ անգամ ինձ վիրաւորեց կոպիտ ակնարկներով։ Ես հազիւ կարողացայ ինձ զսպել։

ՄԵԼԱՆԻԱ (գալիս է աջ կողմի առաջին դռներով, երկու գաւաթ սուրճ ձեռքին և բեմով անցնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՍԱՄՍՈՆ (մտածել է Արմենուհու խօսքերի միջոցին)։ Գուցէ դու էլ ունիս իրաւունք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ոգևորուած)։ Աչ, այդ իրաւունքը տալիս է ինձ իմ սրտի պահանջը, իմ զգացումների անկախութիւնը, վերջապէս, իմ սէրը դէպի քեզ։ Բաժանո՛ւեցէք մեր մերձաւորներից նրանց աւելի յարգելու և աւելի սիրելու համար։

ՍԱՄՍՈՆ (վճռական)։ Շատ բարի, ես համաձայն եմ, թող քոասածը լինի։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուրախացած)։ Ա՛հ, վերջապէս։ Եթէ չեմ սխալուում, այդ առաջին զիջումն է, որ անում ես ինձ։ Շնորհակալ եմ։

ՍԱՄՍՈՆ. Բայց ո՛չ, իհարկէ, այժմ։ Սպասենք ամառը վերջանայ։ Փաղաք վերադառնալով, մայրս կերթայ Վիրգինէի տանն ապրելու, իսկ մենք կապրենք առանձին։ Գո՞հ ես ինձանից այժմ։ (Գրկում է Արմենուհուն)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (խանդավառութեամբ գրկելով Սամսոնին)։ Գոհ եմ, անչափ գոհ, որովհետև այդ գոհաբերութիւնը ցոյց է տալիս, որ դու ինձ քիչ թէ շատ սիրում ես։

ՍԱՄՍՈՆ. «Քիչ թէ շատ». թեթևամի՞տ, մի՞թէ կասկածում ես իմ սիրոյ մասին։ (Փաղաքշում է)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Օհ, չեմ ուզում կասկածել, երբէ՛ք։ (Նորից գրկելով Սամսոնին)։ Ա՛հ, այժմ կարող եմ ասել, որ ես սկսում եմ ապրել, վերջապէս...

ՍԱՄՍՈՆ (մեղմիկ հեռացնելով Արմենուհուն)։ Բայց լսիր, ես էլ ունիմ մի պայման։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ասա, կանխաւ ընդունում եմ քո բոլոր պայմանները։

ՍԱՄՍՈՆ. Քո հայրն աղնիւ մարդ է, խօսք չունիմ։ Բայց շատ դիւրահաւանն է և յափշտակուող։ Ինձ թւում է, որ թշնամիներս ինձ զրպարտել են նրա մօտ։ Ո՞վ գիտէ ինչեր են ասել։ Համոզիր նրան, որ փողոցային լուրերի վրայ ուշադրութիւն չդարձնի և դու էլ մի՛ հաւատար նրա լսածներին իմ մասին։ Համաձա՞յն ես։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մի փոքր հիասթափուած)։ Այդ ի՞նչ է նշանակում. քո խօսքերը մութն են ինձ համար։

ՍԱՄՍՈՆ. Լա՛ւ, լաւ, յետոյ կբացատրեմ։ Այնտեղ Վառամեանը ինձ սպասում է, յետոյ կառավարիչը կգայ։ Բայց կէս

Ժամ անցած ես ազատ եմ և կարող եմ գրկել քեզ։ (Գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (խանդագին համբուրելով Սամսոնին)։ *Գնա, ես քեզ կսպասեմ ինչպէս սիրահար։*

ՏԵՍԻԼ VII.

Արմենուհի եւ Մելանիա.

ՄԵԼԱՆԻԱ (գալիս է աջ կողմի առաջին դռներով դատարկ սկուտեղը ձեռքին և ուզում է սեղանի վրայ գտնուող դատարկ գաւաթները ժողովել)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Մելանիա, տե՛ս Արմենակը զարթնե՞լ է։* (Մօտենում է դաշնամուրին եւ մի քանի ուրախ ակորդներ վերցնում)։

ՄԵԼԱՆԻԱ (սկուտեղը դնելով սեղանի վրայ, շտապով անցնում է աջ կողմի երկրորդ դռները եւ իսկոյն յետ գալիս)։ *Զարթնել է։* (Դատարկ գաւաթները ժողովում է)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Դայեակն այնտե՞ղ է։*

ՄԵԼԱՆԻԱ. *Այո։* (Սկուտեղը գաւաթների հետ տանում է ձախ կողմի առաջին դռներով)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ VIII.

Կոնստանդին և Ստեփան.

ՍՏԵՓԱՆ (գալիս է ձախ կողմի առաջին դռներով)։ *Զարմանալի հայր էք. կարծես, դուք ձեր միակ զաւակի թշնամին էք։*

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (գալիս է Ստեփանի հետ նոյն դռներով։ Միշտ յուզուած)։ *Դուք դատում էք ինչպէս բժիշկ, որ վախենում է հիւանդին յայտնել նրա վտանգաւոր կացութիւնը։ Բայց ես բժիշկ չեմ, այլ զինուորական. ես սովոր եմ վտանգների դէմ կանգնել ճակատ ճակատի։*

ՍՏԵՓԱՆ. *Ընտանեկան կեանքը պատերազմի դաշտ չէ, բարեկամ։*

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Գիտեմ, բայց ես էլ Միդաս թագաւորի սափրիչը չեմ, որը ճշմարտութեան լծից ազատւելու համար մի փոս էր փորել և ամեն օր, գլուխը նրա մէջ մտցնելով, ասում էր. «Տէրս իշի ականջներ ունի»: Ոչ, ոչ, իմ աղջիկը պէտք է լսի ճշմարտութիւնը:

ՍՏԵՓԱՆ. Եւ դուք կարծում էք դրանով կբարւոքի՞ նրա վիճակը:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Չգիտեմ, բայց նախ և առաջ ճշմարտութիւնը: Արմենուհին արդէն կասկածում է և մի քանի անգամ փորձել է ինձնից խօսք քաշել: Այժմ, երբ արդէն համոզւած եմ, չեմ թոյլ տալ այլ ևս, որ իմ աղջիկը ամենուրեք ծաղրի առարկայ դառնայ: Ա՛հ, մի քանի րոպէ առաջ քիչ էր մնում լրբին ապտակ տայի լուսամտից՝ Վառլամեանի ներկայութեամբ: (Ծխախոտ է վառում):

ՍՏԵՓԱՆ. Փորձանքի էք ենթարկում ձեր աղջկան, դնդապետ, մի՛ արէք:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ա՜հ, մանկութիւնից է նա սովորել փորձանքներին նայել համարձակ: Հինգ տարեկան էր նա, երբ մի օր կառքով հանգուցեալի հետ Ղուսար էինք գնում: Աւազակները յարձակւեցին մեզ վրայ, կառքը պահեցին: Ես հրացանս առայ, հանգուցեալը ռևոլւերս, իսկ Արմենուհին ոտքի կանգնեց կառքի մէջ համարձակ: Օհ, պէտք է տեսնէիք նրան այդ վայրկեանին: Նրա սիրուն մազերը ցցւել էին ասեղների պէս, նրա վառվռուն աչքերից արցունքի փոխարէն կայծեր էին թափւում: Աւազակապետը հիանալով նրա հրեշտակային կատաղութիւնից, գոռաց իր խմբին. «Թողէք անցնեն, այդ երեխան ինձ յաղթեց»: Եւ Արմենուհին մեզ ազատեց:

ՍՏԵՓԱՆ. Լա՛ւ, դուք գիտէք: Տեսէք միայն, որ յետոյ չզղջաք:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. *Ճշմարտութեան կաթովն է նա սնուել, բժիշկ։ Նա չի կարող ապրել ստի և կեղծիքի մէջ։ (Ցուցում է)։ Ա՛հ, բարեկամս, դառն է, շատ դառն՝ ունենալ մի հատիկ զաւակ և տեսնել նրան դժբաղդ։ (Աչքերը սրբում է թաշկինակով)։*

ՍՏԵՓԱՆ. *Լա՛ւ, հանգստացէք։ Գնանք պարտէզ։*

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. *Գնանք, այժմ ես այս տանը խեղդւում եմ։ (Գնում է խորքի դռներով)։*

ՍՏԵՓԱՆ *(հետևում է Կոնստանդինին)։*

ՏԵՍԻԼ IX.

Արմենուհի և դայեակ, երեխային գրկած.

ԴԱՅԵԱԿ *(գալիս է աջ կողմի երկրորդ դռներով, շքեղ հագցրած մի տարեկան երեխայ գրկած)։*

ԱՐՄԵՆՈՒՀԻ *(գալիս է դայեակի հետ նոյն դռներով)։* ***Տարէ՛ք անուտաւ, թող մի փոքր անուշ օդ շնչի եղևնիների տակ։*** *(Համբուրում է երեխային և ուղեկցում մինչև խորքի դռները)։*

ՏԵՍԻԼ X.

Արմենուհի, յետոյ Հմայեակ.

ԱՐՄԵՆՈՒՀԻ *(մի քանի վայրկեան լուսամտով նայում է երեխայի յետևից, ապա դանդաղօրէն մօտենում է դաշնամուրին, նստում։ Սկսում է նւագել նախ մի փոթորկալի եղանակ, ապա մի թախծալի ռոմանս)։*

ՀՄԱՅԵԱԿ *(նւագումը սկսելուց բաւական անցած գալիս է աջ կողմի առաջին դռներով գլխարկը ձեռքին և աննկատելի նստում է մի անկիւնում։ Հագնւած է այնպէս, ինչպէս առաջին արարւածում։ Ռոմանսի տպաւորութեամբ տխրում է)։*

ԱՐՄԵՆՈՒՀԻ (բաւական ժամանակ չի նկատել Հմայեակին: Երեսը պատահաբար դարձնելով, տեսնում է նրան): Ա՛հ, դուք այստե՞ղ էք: (Գլուխն երկու անգամ շարժում է ի նշան բարևի առանց նւագումը ընդհատելու):

ՀՄԱՅԵԱԿ. Ես վերջացրի իմ գործը: Այժմ ձեր ամուսինը զբաղուած է իր կառավարչի հետ: Շարունակեցէ՛ք, տիկին, շարունակեցէք, խնդրեմ: Անցեալ օրն ես պատիւ ունեցայ ծանօթանալ և այցելել ձեր նախկին ուսուցչին: Այդ վառվռուն ծերունին առանց հիացման չի կարողանում խօսել ձեր մասին:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իմ սեղանի առաջին զարդը նրա համակրելի լուսանկարն է:

ՀՄԱՅԵԱԿ. Իսկ ձեր լուսանկարը ես տեսայ նրա դաշնամուրի վրայ: Նա ասում էր յուզուած ձայնով. «Պարո՛ն, նա Աստուածային տուրք ունի, զգացում, ճաշակ: Նա տաղանդ է և մեծ տաղանդ: Ափսո՜ս, որ այդ տաղանդը թառամում է իր շրջանից դուրս»: Այո՛, տիկին, այլ է ձեր շրջանը. այն արուեստի փշոտ ասպարէզն է, ընտիր հոգիների դրախտավայրը: Նւագեցէ՛ք, նւագեցէք. այդ թախծալի հնչիւնները մարդու սրտից հառաչանքներ են կորզում: (Լռում է):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մի փոքր ևս լուռ նւագելով, դադարում է եւ ոտքի կանգնում): Դուք տխրեցի՞ք: Բարև: (Ձեռ է տալիս):

ՀՄԱՅԵԱԿ (ոտքի կանգնելով): Տիկի՛ն, ես ունիմ մի ընկեր, որի կեանքը անծայն, անարիւն ողբերգութիւն է: Երբ դուք նւագում էիք, իմ առջև կենդանի պատկերացաւ այդ կեանքը: Երևակայեցէք, որ նրա դժբաղդութիւնն ունեցել է երջանիկ նախերգանք և այդ նախերգանքը երգւել է այն ռօմանսով, որ իսկոյն նւագեցիք: Կկամենայի՞ք լսել այդ պատմութիւնը: Նա երկար չէ, և ես այս րոպէին զգում եմ անյաղթելի պահանջ ձեզ պատմելու:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Նստեցէք, խնդրեմ։ (Նստում է, ցոյց տալով իրանից ոչ հեռու մի աթոռ Հմայեակին)։ Ես ձեզ լսում եմ։

ՀՄԱՅԵԱԿ (նստելով)։ Երեսուն և հինգ տարեկան է իմ ընկերը այժմ, ամուսնացած, զաւակների հայր, ընտանեկան կեանք կոչւած հրէշի ստրուկ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Տարօրինակ լեզու։

ՀՄԱՅԵԱԿ. Դա մի հոգի է, ստեղծւած սիրելու փափագով և սիրւելու կրակոտ երազով, բայց ստրուկ։ Զար ոգիները նրան ծերբակալել են և շղթայել։ Ուղիղ տասներկու տարի սրանից առաջ նա ազատ էր, ինչպէս լեռնային զեփիւռը, և կարծում էր այդպէս պիտի մնայ մինչև մահ։ Բայց նա հանդիպեց դևին, որ ընդունել էր հրէշտակի կերպարանք, և յափշտակւեց։ Դա մի զարթ, կայտառ էակ էր, ընդունակ ոչ միայն մտածելու, այլ և զգալու։ Երգում էր, պարում էր, թռչկոտում։ Եւ նւագում էր։ Լաւ էր նւագում թէ վատ—ընկերս չգիտէր, բայց զգացւում էր, որովհետև նրա հոգին ունէր միշտ զգայւելու պահանջ, ինչպէս մանուկն ունի լալու պահանջ։ Օրիորդը հետաքրքրւում է բոլորով, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բանաստեղծական է, ինչ որ զատում է մարդուն անասնից, ինչ որ մաքրում, բիւրեղացնում է նրա հոգին։ (Հառաչում է)։ Ընկերս սիրահարւեց։ Սիրոյ բոցավառ խոստովանութիւնն եղաւ օրւայ ճիշտ այս պահին և ճիշտ այն միջոցին, երբ օրիորդը նւագում էր ձեր նւագած ռօմանսը։ Դուք ծանծրանում էք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Շարունակեցէ՛ք. ձեր պատմելու ձևը նոյնքան հետաքրքրական է, որքան և նիւթը։

ՀՄԱՅԵԱԿ. Օրիորդը չմերժեց, որովհետև իր առջև կանգնած էր մի ոչ տգեղ երիտասարդ, առողջ, կայտառ, որ խոստանում էր փայլուն ապագայ... Նրանք ամուսնացան։ Եւ

այս եղաւ իմ թշուառ ընկերոջ դժբաղդութեան սկիզբը։ Հազիւ մի տարի անցած՝ դևը դէն ձգեց իր քօղն և երևան եկաւ իր իսկական պատկերով։ Ընկերս նայեց և սարսափեց։ Նրա աչքերն այլ ևս վարագուրուած չէին առաջին սիրոյ վարդագոյն մշուշով։ Այդ ուրախ, վառվռուն, գեղեցիկով և գաղափարականով ողևորուող էակը հէնց որ կին դարձաւ, հէնց որ հօրից ստացաւ օժիտը, հէնց որ ճաշակեց ոսկու թունաւոր ժանգը, ազատեց իր հոգին կապանքներից։ Նա դարձաւ այն, ինչ որ էր էապէս։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Եւ ամուսինների մէջ սկսեցին ընդհարումներ...

ՀՄԱՑԵԱԿ. Ա՜, ով չի կրել—չի կարող զգալ այն տաւտանքը, որ կոչւում է ընտանեկան կեանք, երբ ամուսիններն օտար են միմեանց։ Օտար իրանց մտքերով, ճաշակով, օտար հոգու պահանջներով, սրտի զգացումներով։ Եւ խորտակւեցին թշուառ ընկերոջս երազները։ Նա, որ երևակայում էր պօէզիայով զարդարել առօրեայ կեանքի տափակութիւնը, դատապարտւեց անտանելի պրոզայի։ Այդ կնոջ համար գրքերը փոխարինւեցին հօրից ստացած տոկոսաբեր թղթերով, գաղափարները հաշւի տետրակներով, և նրա ճաշակը, թեթև թռիչքից յետոյ, գնաց, թաւ եղաւ թանկագին գլխարկների վրայ։ Նա սկսեց արհամարհել բոլորը, բոլորը, ինչ որ կապ չունէր սնոտի պչրանքի, կուշտ որովայնի և հանգիստ քնի հետ։ Բայց ամենից դառը, ամենից ողբալին իմ ընկերոջ համար եղաւ այն, որ նրա կնոջ դաշնամուրը փոշի պատեց...

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դաշնամուրը փոշի պատե՞ց... (Նայում է խորը Հմայեակին)։

ՀՄԱՑԵԱԿ. Այո, և այն մարդը, որ պաշտում էր երաժշտութիւնը իբրև երկրորդ աստուած ճարտարապետութիւնից յետոյ, այլ ևս բաղդ չունեցաւ սքանչելի վայլը լսելու։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մեկուսի): Ճարտարապետութիւնից յետո՞յ: (Բարձր): Սպասեցէ՛ք, ես, կարծես, ճանաչեցի ձեր ընկերոջը: (Կանգ է առնում ոտքի):

ՀՄԱՅԵԱԿ (վեր կենալով): Լսեցէ՛ք, տիկին, ես դեռ չեմ վերջացրել: Նա գերի է, նա ստրուկ է, նրա ձեռները ու ոտները շղթայուած են այն անողոք շղթայով, որ մարդիկ անւանում են օրինական ամուսնութիւն: Նրա սրտից արիւն է կաթում, երբ ամեն անգամ նայում է փակ դաշնամուրին: Նա ասում է. «Լաւ, ես համաձայն եմ կրելու այս տաժանակիր պատիժը, միայն թէ լսեմ այդ հնչիւնները»: Սակայն դեռ արտաքսել է նրանց: (Հառաջում է, կարձատև լռում): Անցնում են տարիներ, անգոյն, անկրակ գոյութեան տարիներ, որ տափակ գլուխներն անւանում են խաղաղ ընտանեկան կեանք և որ զգայուն մարդու համար գերեզման է: (Դարձեալ հառաջում է, լռում, ձակատը տրորում): Մի օր յանկարծ, ո՞վ գիտէ, գուցէ Նախախնամութեան կամքով իմ ընկերը մի հեռաւոր երկրում, մի անծանօթ շրջանում հանդիպում է մի ընտիր էակի: Դա է լինում իսկական հրեշտակը, դա է լինում նրա երազների կատարեալ մարմնացումը, վասնզի այդ էակը նիւթական կեանքում պահպանած է լինում իր հոգեկանը: Եւ ընկերոջս շղթան, որ մինչև այդ ժամանակ պողպատից էր, փոխւում է փշերի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (շփոթուել է, յուզուած): Կա՛նգ առէք. մնացեալը գիտեմ արդէն:

ՀՄԱՅԵԱԿ. Ո՛չ, տիկին, դեռ չգիտէք էականը: Լսեցէ՛ք ինչ է ասում այսօր այդ թշուառը: Նա ասում է, որ հոգիները մենակ չեն գալիս այս աշխարհ, այլապէս նրանց գոյութիւնը կլինէր յաւիտենական մենակեաց բանտարկութիւն: Նա պնդում է, որ իւրաքանչիւր էակ ունի իր ընկերը,

զուգակիցը։ Փոյթ չէ, թող նրանք բաժանված լինեն իրարից տարածութեամբ, ժամանակով, օրէնքների դաժանութեամբ և աւանդութիւնների բռնութեամբ, նրանք անհանգիստ փնտրում են միմեանց։ Եւ երբ մի օր հանդիպում են իրար, այլ ևս ոչ ոք և ոչինչ չի կարող նրանց բաժանել... Նոյն իսկ սուրը համարւած պարտականութիւնները...

ԱՐՄԵՆՈՒՀԻ (յուզմունքից գունատւել է)։ **Այդպէս է արդեօք։**

ՀՄԱՑԵԱԿ (աւիւնով, յափշտակւած)։ **Այսպէս է, տիկի՛ն, այսպէս պէտք է լինի։ Այս համոզմունքը հիւսւած է իմ ընկերոջ... այժմեան տառապանքներից...**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. **Իսկ եթէ հոգիներից մէկը չունենայ այժ ոտնատակ անելու օրէնքներն ու պարտականութիւնները, այն ժամանակ։**

ՀՄԱՑԵԱԿ. **Այն ժամանակ միւսը... միւսը պէտք է կործանւի... Բայց ի՞նչ պատահեց ձեզ։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գունատւել, նկատելով Վիրգինէին դռների մէջ, յենւել է աթոռներից մէկի կռնակին)։ **Ոչի՛նչ, գլուխս պտտւեց։**

ՏԵՍԻԼ XI.

Նոյնք և Վիրգինէ.

ՎԻՐԳԻՆԷ (հանդարտ բաց է արել ձախ կողմի երկրորդ դռները և ներս մտել մի չարախինդ ժպիտ երեսին)։ **Ա՛հ, ներեցէք, ես կարծում էի ոչ ոք չկայ այստեղ։ Ես կերթամ։** (Ձևանում է թէ յետ է գնում)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (արագութեամբ ժողովել է ուշքը և հպարտ նայում է Վիրգինէին)։

ՀՄԱՑԵԱԿ (ցնցւել է, բայց եւ իսկոյն իշխել իրան)։ **Ցտեսութի՛ւն,**

տիկին։ (*Ձեռ է տալիս Արմենուհուն։ Վիրգինէին*)։ **Ցարգանքներս։** (*Վիրգինէին գլուխ տալով, գնում է խորքի դռներով*)։

ՏԵՍԻԼ XII.

Արմենուհի և Վիրգինէ.

ՎԻՐԳԻՆԷ (*նայել է Հմայեակի յետևից չարախինդ և նոյն ժպիտը երեսին մօտենում է դաշնամուրին ու ձեռը քսում նրա կափարչին։ Բարձրաձայն ծիծաղում է*)։ **Հա՜, հա՜, հա՜...**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*վրդովուելով*)։ **Ինչո՞ւ համար ես ծիծաղում։**

ՎԻՐԳԻՆԷ. **Ոչինչ, կարծում էի դաշնամուրդ փոշի է պատել։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*համբերութիւնը կորցնելով*)։ **Լրտե՞ս, լրտե՞ս։**

ՎԻՐԳԻՆԷ. **Լաւ, մի՛ կատաղիր, ների՛ր, ես գնում եմ։** (*Բարձր ծիծաղելով, գնում է ձախ կողմի առաջին դռներով*)։

ՏԵՍԻԼ XIII.

Արմենուհի եւ Կոնստանդին.

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (*գալիս է խորքի դռներով*)։ **Դու մենա՞կ ես։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. **Ո՛չ, հայրիկ, ես միշտ շրջապատուած եմ խնամակալներով։ Հայրիկ, ինչո՞ւ համար ես Սամսոնին վիրաւորել։**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. **Նրա համար, Արմենուհի, որ քո ամուսինը լիրբ է, լիրբ...**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*վշտացած, դառը յանդիմանութեամբ*)։ **Հայրի՛կ։** (*Նայում է հօրը սուր հայեացքով, վախեցած*)։

(*Թեթև լռութիւն*)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այո՛, որդի, քո կասկածները ճիշտ են։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՛հ։ (Ընկճված ընկնում է բազկաթոռի վրայ)։ Ո՛չ այդ, ոչ այդ։ (Լռություն)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Մարդիկ մեր ժամանակում այդ համարում են սովորական բան, սիրելի։ Էհ, մենք էլ համարենք, ինչով ենք պակաս ուրիշներից։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (առանց հօրը նայելու)։ Ո՞ւմ հետ, ո՞վ է նա։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Սատանան գիտէ, քի՞չ կան։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես ճանաչո՞ւմ եմ նրան։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Աստուած մի՛ արասցէ, որ դու ծանօթ լինես այդպիսիների հետ։ Վարշաւայից է թէ Պետերբուրգից— չգիտեմ, չինովնիկի կնիկ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մաքառել է իր դէմ։ Ոտքի է կանգնում)։ Այդ անկարելի է, այո՛, անհնարին է։ Մի քիչ առաջ նա գրեթէ իր սէրը բացատրեց ինձ։ Սամսո՞նը, այն ժուժկալ մարդը։ Ո՛չ, հայրիկ, նա նախանձողներ շատ ունի, սուտ լուրեր են տարածում նրա մասին։ Հայրի՛կ, չլինի՞ թէ զրպարտում ես նրան։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հարիւր անգամ ուրախ կլինէի զրպարտչի անունը կրել, քան այս լուրը քեզ հաղորդել։ Ես էլ սկզբում չէի հաւատում. ո՞ւմ չեն բամբասում։ Բայց չեղաւ։ Փաստեր շատ ունիմ. հարցրո՛ւ Ստեփանից. նա կհամոզի քեզ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ահա՜ թէ ինչ են նշանակում նրա խօսքերը. «Քո հայրը դիւրահաւան է, համոզիր նրան, որ փողոցային լուրերի վրայ ուշադրութիւն չդարձնի»։ Այժմ հասկանալի է։ Հայրիկ, դու տեսնո՞ւ ես նրան։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Մի անգամ ցոյց են տուել արտիստական կլուբում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երիտասարդ է։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Մի՞թէ կարելի է այժմեան կնոջ հասակը որոշել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դեղեցի՞կ է։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Մի՞թէ կարելի է այժմեան կնոջ գեղեցկութիւնը որոշել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (բոլորովին տիրել է իրան)։ Շնորհակալ եմ, հայրի՛կ։ Աւելի լաւ էր դառը ճշմարտութիւնն իմանալ, քան կեղծ դրութեան մէջ մնալ։ Շատ լաւ, այժմ ես գիտեմ ինչպէս պէտք է վարուեմ նրա հետ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Զմոռանաս, Արմենուհի՛, որ քացի քեզնից ոչ ոք չունիմ այս աշխարհում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ո՛չ, հայրիկ, ես ոչ թոյլ եմ, ոչ յիմար։ Հեռացիր այստեղից։ Նա իսկոյն գալու է։ Ես չեմ ուզում քո ներկայութեամբ հանդիպել նրան։ Օ՜, այժմ նա ինձ կճանաչի։ Ես իր երևակայած կանանցից չեմ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (մի վայրկեան խորհում է, ապա վճռական մի շարժումն անելով հանդարտ քայլերով գնում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ XIV.

Արմենուհի, մենակ.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մնալով մենակ, մի քանի վայրկեան մտածման մէջ է։ Յետոյ նստում է և սկսում է լաց լինել։ Լացը փոխւում է հեկեկանքի։ Այդ տևում է բաւական ժամանակ։ Ոտքի է կանգնում, աչքերը արագ-արագ սրբում է, ուշքը ժողովում այն պահին, երբ Սամսոնը ներս է մտնում)։

ՏԵՍԻԼ XV.

Արմենուհի եւ Սամսոն.

ՍԱՄՍՈՆ (*գալիս է աջ կողմի երկրորդ դռներով*): **Վերջապէս, ազատուեցի գործերից։ Այժմ կարող եմ քեզ համբուրել։** (*Մօտենում է Արմենուհուն*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*բարձր ձայնով*): **Մի՛ համարձակուիլ մօտենալ ինձ։** (*Քայլերն ուղղում է դէպի աջ կողմի երկրորդ դռները*):

ՍԱՄՍՈՆ (*ապշում է*): **Այդ ի՞նչ է նշանակում։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*դռների մօտից*): **Մի քանի րոպէ սրանից առաջ այստեղ մէկն իր կեանքը կտար ինձ, եթէ ես պահանջէի։ Դուք չարժէք նրա գարշապարին անգամ։ Բայց ես փափագում էի ձեզ միայն սիրել, ձեզ միայն բարձր տեսնել։ Այժմ կանգ առէք, իմ սենեակի դռները փակ են ձեզ համար։** (*Գնում է աջ կողմի երկրորդ դռներով*):

ՎԻՐԳԻՆԷ (*ներս է մտել ձախ կողմի առաջին դռներով և կանգնել է դռների առջև Արմենուհու խօսքերի միջոցին*):

ՍԱՄՍՈՆ (*մի քայլ անելով Արմենուհու յետևից, կանգ է առնում*): **Բայց բացատրի՛ր...**

ՎԻՐԳԻՆԷ. Ես կբացատրեմ։

ՎԱՐԱԳՈՅՐ.

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԲԱՐԳ.

Երկրորդ արարուածի տեսարանն անփոփոխ, միայն չկայ ծաղիկների փունջը: Իրիկնադէմ է: Արեգակի ճառագայթները ոսկեզօծել են բեմի յետին մասը:

ՏԵՍԻԼ I.

Մելանիա եւ Գարեգին.

ՄԵԼԱՆԻԱ (*Գարեգնի օգնութեամբ դաշնամուրին շապիկ է հագցնում*): Մի քիչ էլ քո կողմը քաշիր: Այդպէս, բաւական է:

ԳԱՐԵԳԻՆ. Չհասկացայ ինչու համար ենք այսպէս վաղ ծածկում դաշնամուրը: Դեռ քաղաք գնալուն մի ամիս է մնում:

ՄԵԼԱՆԻԱ. Մեր գործը չէ, պառաւը հրամայել է ծածկել, ծածկում ենք:

ԳԱՐԵԳԻՆ (*սկսում է հանդարտ երգել, Մելանիային օգնելով հանդերձ*): «Ես որս էի, դու որսորդ, նետդ դիպաւ չիգարիս»... ահ, գալիս են:

ՄԵԼԱՆԻԱ (*նայելով լուսամտից դէպի դուրս*): Ճարտարապետն է իր կնոջ հետ:

ԳԱՐԵԳԻՆ. Օ՛հ, ես ատում եմ այդ կնոջը... ժլատ է,... անց-

եալները կէս գիշերին վազեցի, կառք գտայ, ճանապարհ դրեցի, մի բան չբաշխեց։ Բայց մարդը շատ լաւ մարդ է։ Էհ, վերջացաւ։ (*Գնում է ձախ կողմի առաջին դռներով*)։ *«Ես որս էի, դու որսորդ»...*

ՏԵՍԻԼ II.

Հմայեակ, Սիրանոյշ և Մելանիա.

ՍԻՐԱՆՈՅՇ (*գալիս է խորքի դռներով Հմայեակից առաջ։ Հագած է առաջւայ համեմատ համեստ հագուստ։ Ցուզած է*)։ ***Բարև, Մելանիա, տանն ո՞վ կայ։***

ՄԵԼԱՆԻԱ. ***Մեծ տիկինը։***

ՀՄԱՅԵԱԿ (*գալիս է խորքի դռներով Սիրանոյշից յետոյ։ Հագած է ուրիշ հագուստ — ժակետ, շատ բաց մանիշակագոյն ժիլէ։ Ձեռքում բռնած է մի թղթէ կապոց*)։ ***Իսկ պարո՞նդ։***

ՄԵԼԱՆԻԱ. ***Անտառ գնաց, երևի շուտով կգայ։***

ՀՄԱՅԵԱԿ (*նստում է բազկաթոռի վրայ, գլխարկն ու թուղթը դնելով մի կողմը*)։ ***Ես կսպասեմ նրան։***

ՍԻՐԱՆՈՅՇ. ***Ասացէք մեծ տիկնոջը, որ ես այստեղ եմ։***

ՄԵԼԱՆԻԱ. ***Լա՛ւ։*** (*Գնում է ձախ կողմի առաջին դռներով*)։

ՏԵՍԻԼ III.

Սիրանոյշ և Հմայեակ.

ՍԻՐԱՆՈՅՇ (*հեգնաբար, սրտմտութեամբ*)։ ***Կարծեմ դու կարող էիր պարոն Սամսոնին սպասել իր սենեակում։***

ՀՄԱՅԵԱԿ (*ծխախոտ է վառում*)։ ***Ինչո՞ւ ոչ այստեղ։***

ՍԻՐԱՆՈՅՇ (նոյն եղանակով): Որովհետև գործով ես եկել: («Գործով» բառը շեշտում է առանձին հեգնութեամբ):

ՀՄԱՅԵԱԿ (խորը յանդիմանական եղանակով): Սիրանոյշ:

ՍԻՐԱՆՈՅՇ (աւելի գրգռուած): Աստուած իմ, Աստուած իմ, ո՞վ կարող էր երևակայել:

ՀՄԱՅԵԱԿ (վրդովուելով): Եթէ սկսում ես, ես կհեռանամ: (Վեր է կենում):

ՍԻՐԱՆՈՅՇ. Աւելի լաւ կանես, որ իսկի ոտ չդնես այս տունը:

ՀՄԱՅԵԱԿ. Զարմը մի՛ անցնիր, խնդրում եմ: Մենք օտար տան մէջ ենք:

ՍԻՐԱՆՈՅՇ. Հիմա քեզ համար օտար չէ այս տունը: Տէ՛ր Աստուած, ես էլ ասում եմ, ինչո՞ւ համար է ամեն օր վազում այստեղ: Դուրս է գալիս, որ այդ արկածախնդիր կինը դրան խելքից հանել է:

ՀՄԱՅԵԱԿ. Գիտե՞ս, դու կարող ես ինձ վիրաւորել որքան կամենաս, բայց նրան հանդիստ թող:

ՍԻՐԱՆՈՅՇ. Աա՛, դու դեռ համարձակւում ես պաշտպանե՞լ նրան: Չե՞ս ամաչում:

ՀՄԱՅԵԱԿ. Մինչև այսօր ես դեռ իմ զգացումների և մտքերի համար չեմ ամաչել, յոյս ունիմ այսուհետև էլ չամաչել:

ՍԻՐԱՆՈՅՇ (ծաղրով): Իհարկէ, ձեզ նմանների զգացումներն ու մտքերն անարատ են: Բաւական է. ճանաչում եմ իդէալ փնտրողներիդ: Դուք միշտ սկսում էք երկնքում և վերջացնում երկրում: Մի քանի վայրկեան ճանճի պէս թռչում էք օդում, յետոյ նստում... աղբի վրայ: (Վեր է կենում և սկսում է անցուդարձ անել):

ՀՄԱՅԵԱԿ (կանգ է առել և նայել Սիրանոյշին: Ցնցւում է նրա վերջին խօսքերից): Ահ, ի՞նչ լեզու, ի՞նչ համեմատութիւն: Ես անկարող եմ վիճել այդ եղանակով:

ՍԻՐԱՆՈՑՇ (շարունակում է, ուշադրութիւն չդարձնելով Հմայեակի խօսքերի վրայ): Եւ ինչպէս է յափշտակուած, ինչպէս, Աստուած իմ: Գիշերներն էլ երազում նրա հետ է խօսում: Երբէք, երբէք ինձնով այդպէս յափշտակուած չի եղել:

ՀՄԱՑԵԱԿ. Զրպարտում ես քեզ, Սիրանոյշ, զրպարտում ես: Կար ժամանակ, որ քեզ, միմիայն քեզ էի երազում: Ես որոնում էի քո սէրը, ինչպէս մի ծարաւ ճամբորդ ջուր է որոնում ամայի անապատում: Քանի-քանի անգամ աշխատանքից յոգնած, տուն վերադառնալիս, երևակայել եմ հանդիպել մի ուրախ թռչուն, որ անհոգ բազմէր ուսերիս վրայ, շոյէր իր թևերով իմ յոգնած ճակատը և մուռացնել տար կեանքի սպանիչ ծանծրոյթը:

ՍԻՐԱՆՈՑՇ (հեգնաբար): Մի՞թէ:

ՀՄԱՑԵԱԿ. Եւ ի՞նչ եմ տեսել փոխարէնը: Ունքերը կիտած, շրթունքները սեղմած մի դէմք, խորասուզուած իր մանրմունր հաշիւների մէջ: Ինձ տեսնելով, առանց տեղից դշարժուելու, յայտնել ես քո ուրախութիւնը, որ այս ինչ աքցիաներում վաստակել ես այսքան, այն ինչ տոկոսաբեր թղթի արժէքը բարձրացել է: Դու եղել ես քո հօր կատարելատիպը, հրճուել ես քո վաստակով, ուրիշների կորստով: Դու եղել ես ամեն ինչ, բացի այն, ինչ որ իմ հոգին է փափագել: Քո արդ ու զարդը աւելի է հետաքրքրել քեզ, քան իմ ներքին աշխարհը: Մի շքեղ գլխարկով աւելի ես զբաւել, քան իմ զգացումների ամբողջ թափով: Եւ դու համարել ես խելօք կին, օրինակելի ամուսին և ամենքը նախանձել են ինձ: Մինչդեռ ես չեմ իմացել գլուխս ուր թաղցնեմ դայրոյթից, ծանծրոյթից և... ամօթից: (Անցնում է քեմի խորքը):

ՍԻՐԱՆՈՑՇ. Լռի՞ր, լռի՞ր, դու ցնորուել ես, դու ինքդ չգիտես ինչ ես ասում. բայց սպասի՛ր, ես քեզ հետ տանը

կնստեմ հաշվի։ Այստեղ ամօթ է, դու խայտառակում ես ինձ և քեզ...

ՏԵՍԻԼ IV.

Նոյնք եւ Եղիսաբէթ.

ԵՂԻՍԱԲԷԹ (գալիս է ձախ կողմի առաջին դռներով։ Հագնված է դարձեալ նոյն տեսակ)։ **Ծառաների համար ամսական թէյ ու շաքար էի կշռում. ի՞նչ անեմ, ամբողջ տունն ինձ վրայ է։** (Սիրանոյշին բարևում է սիրալիր, Հմայեակին տեսնելով, աչքունքը թթուեցնում է։ Հազիւ գլխի թեթև շարժումով պատասխանում է նրա բարևին)։ **Որդիս գնաց իր սենեակը։**

ՀՄԱՅԵԱԿ. **Շնորհակալ եմ։** (Վերցնելով գլխարկն ու թղթերը, գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ V.

Եղիսաբէթ և Սիրանոյշ.

ԵՂԻՍԱԲԷԹ (նայել է Հմայեակի յետևից չար հայեացքով)։ **Հէնց առաջին օրից աչքիս դուր չեկաւ այս մարդը, ի՞նչ թագցնեմ։**

ՍԻՐԱՆՈՅՇ. **Ա՛հ, չգիտեմ ինչ պիտի լինի վերջը, բայց նա օրէցօր խելքը կորցնում է։**

ԵՂԻՍԱԲԷԹ. **Ես իմ տան հոգսն արդէն տեսել եմ։** (Ցոյց տալով դաշնամուրը)։ **Այնտեղ մտիկ արէք։**

ՍԻՐԱՆՈՅՇ (նայելով դաշնամուրին)։ **Աա, հասկանում եմ։**

ԵՂԻՍԱԲԷԹ (ինքնագոհ)։ **Այո, չար օձը հէնց նրա մէջ է նստած։ Ես հրամայեցի կապել նրա բերանը։ Օ՜, Վիրգինէն աչքաբաց կին է. հէնց առաջին օրը նա նախազգաց, ասաց։**

«Մայրիկ, լաւ հետևիր նրանց»։ Լաւ է, որ ժամանակին հասկացանք։ Բան ունիք ասելու ինձ։

ՍԻՐԱՆՈՑՇ. Հէնց դրա համար եմ եկել. պէտք է փորձանքի առաջն առնել։

ԵՂԻՍԱԲԷԹ. Հեռացրէք ձեր մարդուն այստեղից, պրժաւ—գնաց։

ՍԻՐԱՆՈՑՇ. Բայց նա չի ուզում հեռանալ։ Նա ասում է. «Ես փախչելու պատճառ չունիմ»։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ունի թէ չունի, բայց նրա ոտքը այս օրանից պիտի կտրուի իմ տնից։

ՍԻՐԱՆՈՑՇ. Դրսերում կհանդիպեն միմեանց։

ԵՂԻՍԱԲԷԹ. Աշխատեցէք, որ չհանդիպեն։

ՍԻՐԱՆՈՑՇ. Դուք պիտի աշխատէք, մայրիկ, որովհետև ձերը կին է, իմը տղամարդ։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ձեր ամուսինն է ձեր ձեռքից գնում և ոչ իմը։

ՍԻՐԱՆՈՑՇ. Իմ ամուսնուն ճանապարհից շեղողը ձեր հարսն է։

ԵՂԻՍԱԲԷԹ. Մինչև ձեր մարդու գալը իմ հարսը հանգիստ էր իր համար։

ՍԻՐԱՆՈՑՇ. Իմ մարդն էլ հանգիստ էր մինչև ձեր հարսին տեսնելը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Մի տղամարդ, որ իրան կարող է պահել, ոչ մի կին չի կարող նրան խելքից հանել։

ՍԻՐԱՆՈՑՇ. Մի կնիկ, որ իր պատիւը ճանաչի, ոչ մի տղամարդ չի կարող նրան մոլորեցնել։

ԵՂԻՍԱԲԷԹ (անհամբեր)։ Ուրեմն ի՞նչ էք ուզում ինձնից։ Ես ինչ որ կարող եմ, անում եմ։

ՍԻՐԱՆՈՑՇ. Լռե՛նք. ես լսեցի նրա հօր ձայնը։

ԵՂԻՍԱԲԷԹ (նայելով լուսամտով դուրս)։ Այո՛, նա է, գալիս է փեսայիս հետ։ Միշտ միասին են, խօսում են, քչփչում,

չգիտեմ նրանց մէջ ինչ կայ։ Գնանք իմ սենեակը։ Պատիւը մերն է, պէտք է պաշտպանենք միմեանց։ (Վեր է կենում և դիմում է դէպի ձախ կողմի երկրորդ դռները)։

ՍԻՐԱՆՈՑՇ. Այո՛, պէտք է պաշտպանէք ինձ, մայրիկ։ (Հետևում է Եղիսաբէթին)։

ՏԵՍԻԼ VI.

Կոնստանդին և Ստեփան.

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (գալիս է խորքի դռներով։ Նկատելի ընկճված է)։ Հապա այս բոլորից յետոյ ինչպէ՞ս չասել. «Ամօ՞թ քեզ, հաստարակութիւն, որ այդպիսիներին յարգում ես, պատւում, ազնիւ մարդ հռչակում։

ՍՏԵՓԱՆ (գալիս է խորքի դռներով Կոնստանդինի հետ)։ Ես կկամենայի իմանալ՝ ի՞նչ շահեցիք արդեօք, խորտակելով ձեր աղջկայ Իլլիւզիան իր մարդու առաքինութեան մասին։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ես թունաւոր ժահրը դուրս քաշեցի իմ աղջկայ կեանքից. բժշկելն իր կամքից է կախուած այժմ։ Օ՜, հանգիստ կացէք, նա ինձնից շնորհակալ է։

ՏԵՍԻԼ VII.

Նոյնք, Սամսոն և Հմայեակ.

ՍԱՄՍՈՆ (գալիս է աջ կողմի ածաջին դռներով)։ Այսօր, դժբաղդաբար, չեմ կարող ձեր նախահաշուով զբաղուել։

ՀՄԱՅԵԱԿ (գալիս է աջ կողմի առաջին դռներով Սամսոնի հետ, թղթէ փաթեթը ձեռքին)։ Փոյթ չէ, վաղը կպարապենք։ (Ձեռք է տալիս Կոնստանդինին և Ստեփանին)։

ՍԱՄՍՈՆ (բաւական սառը)։ **Զգիտեմ, կարող եմ արդեօք վաղը կամ միւս օրն էլ պարապել։**

ՀՄԱՑԵԱԿ (նայում է Սամսոնին զարմացած։ Զգալով նրա տրամադրութիւնը, շրթունքները սեղմում է իր վրդովմունքը զսպելու համար)։ **Լաւ, ինչպէս կամենաք։ Մնացէք բարև։** (Առանց ձեռ տալու, գլուխ է տալիս և գնում խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ VIII.

Նոյնք, առանց Հմայեակի.

ՍԱՄՍՈՆ (մի նշանակալից հայեացք է ձգում Կոնստանդինի վրայ)։ **Ստեփան, ես քեզ հետ առանձին խօսելիք ունիմ։**

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (հեռուից դիտել է տեսարանը. հանդարտ հեռանում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ IX.

Սամսոն և Ստեփան.

ՍԱՄՍՈՆ. Ա՛հ, փառք Աստծոյ, ազատուեցի։ (Նստում է, հառաչելով)։ **Գլուխս տրաքում է։**

ՍՏԵՓԱՆ (հեռուից դիտել է նախընթաց տեսարանը)։ **Այդ ի՞նչ արիր. մի՞թէ կարելի էր այդպէս վարուել Հմայեակի հետ։ Դու գրեթէ վռնդեցիր նրան քո տնից։**

ՍԱՄՍՈՆ. Ո՞վ է այդ քո Հմայեակը։

ՍՏԵՓԱՆ. Ով էլ լինի, յամենայն դէպս, այն մարդկանցից չէ, որոնց դու սովոր ես քո աղայական բարձրութիւնից նայել։

ՍԱՄՍՈՆ. Չլինի թէ ուզում ես, որ ես քեզ դեռ շնորհակա-

լութիւն էլ յայտնեմ նրան իմ տունը մտցնելու համար։ (Վեր է կենում)։

ՍՏԵՓԱՆ. Ես քո տունը մտցրել եմ մի մարդ, որ հարիւր անգամ աւելի ազնիւ ու մաքուր է, քան թէ դու և ես միասին վերցրած։

ՍԱՄՍՈՆ. Համոզմունքո՞վ ես ասում այդ։

ՍՏԵՓԱՆ (յանդիմանօրէն)։ Սամսո՛ն, միլլիոնների գործեր ես վարում, հարիւրաւոր մարդկանց հետ յարաբերութիւն ունիս առանց մէկի հետ խորհրդակցելու, իսկ քո ընտանեկան կեանքում խաղալիք ես երկու կանանց ձեռքում։ Ամօթ է, ամօ՛թ է։ (Անցուդարձ է անում)։

ՍԱՄՍՈՆ. Մէկն այդ կանանցից իմ մայրն է, միւսն իմ քոյրը։ Երկուսն էլ իմ պատուին նախանձախնդիր են։

ՍՏԵՓԱՆ. Մէկը նրանցից հին նախապաշարումներով վարակուած մի պառաւ է, միւսը կասկածամիտ, մանրակրկիտ և նախանձոտ։ Այսօր ես խոշոր ընդհարում ունեցայ Վիրգինէի հետ։ Զեմ հերքում, Արմենուհին և Հմայեակը համակրում են միմեանց, բայց ահա բոլորը ինչ որ կայ։ Խելքի եկ, Սամսո՛ն, քո կինն այն կանանցից չէ, որոնք մէկի հացն ուտում են, միւսին շոյում։ Խօսք չունիմ, Արմենուհին մի օր կարող է սիրել մի ուրիշին, բայց այդ դէպքում նա ճշմարտութիւնը չի թաղցնիլ քեզնից։

ՍԱՄՍՈՆ (խորհել է)։ Այո՛, ունիս իրաւունք։ Արմենուհին կեղծել և խաբել չգիտէ։ Բայց ի՞նչ անեմ, այստեղ (զարկելով սրտին) այժմ մի հնոց է վառուել։ Ամօ՛թ է ասել, Ստեփան, ես տանջուում եմ։ (Նորից նստում է և ձակատը սեղմում է ձեռքով)։

ՍՏԵՓԱՆ (կանգ է առնում հեգնական ծիծաղով)։ Մի՞թէ, այդպէս շո՞ւտ. զարմանալի է, հա՜, հա՜, հա՜։

ՍԱՄՍՈՆ. Դու ծիծաղում ես, դու սիրտ չունիս։

ՍՏԵՓԱՆ. Այո՛։ Այդ ո՞ր ժամանակից է, որ սկսել ես սիրտը

գնահատել մարդկանց մէջ, ով դու ուղեղի գերի և հաշիւների ստրուկ։ Բաւական է, ես չեմ ծիծաղում, այլ ներքուստ արտասւում եմ քո մասին։ Թշուառ, տեղը եկել է, կասեմ ճշմարտութիւնը։ Դու երբէք արժանի չես եղել Արմենուհուն, իսկ այժմ—նամանաւանդ։

ՍԱՄՍՈՆ (Թոյլ)։ Ինչո՞ւ։

ՍՏԵՓԱՆ. Որովհետև դու և նա երկու հակառակ խառնուածքներ էք։ Որովհետև նա, իբրև երազող հոգի, կեանքից կեանք է պահանջում։ Իսկ դու ամէն ինչ դարձրել ես չոր ու ցամաք պռօզա։ Փող, փող, փող, ահա՛ քո ալ՝ֆան և օմեգան։ Խե՜ղճ մարդ, դու կանգնած էիր մի սքանչելի արձանի պատանդանի մօտ և, որովհետև շատ էիր մօտ, չէիր տեսնում նրա աննման գեղեցկութիւնը։ Եւ այժմ, երբ նա քեզնից հեռացել է, ով գիտէ, դուցէ առ միշտ, այժմ հիանում ես նրանով, կարօտում և տանջւում։ Իսկ նա քեզ ատում է։ Եւ ունի իրաւունք. դու ոչ միայն չգնահատեցիր նրան, այլ և (ձայնը ցածրացնելով) ցեխ շպրտեցիր նրա վրայ։ (Քայլում է)։

ՍԱՄՍՈՆ. Ես միշտ նրան սիրել իմ սրտի խորքում։

ՍՏԵՓԱՆ. Լաւ ապացուցեցիր քո սէրը, մի իսկական ադամանդ փոխարինելով վաճառքի դուրս բերուած կեղծ քարով։

ՍԱՄՍՈՆ. Մոլորւում են ամենքը, մոլորւեցի և ես։

ՍՏԵՓԱՆ. Կրի՛ր ուրեմն քո արժանի պատիժը։ Ո՞ւմ դէմ ես բողոքում։ Դու կարծում էիր Արմենուհին մէկն է այն ողորմելիներից, որոնք մի փոր հացի համար տանում են իրանց մարդկանց բոլոր վիրաւորանքները, բոլոր ստորութիւնները։ Դու մեծ յոյս ունէիր քո հարստութեան և նրա երախտագիտութեան վրայ։ Բայց չեղաւ, սխալւեցիր։ Ա՛հ, որքան ուրախ եմ, որ, վերջապէս, գտնւեց մէկը, որ

ընդունակ է կուելու։ Կաց, դու դեռ կտեսնես նա ինչպէս կպատժի քեզ։

ՍԱՄՍՈՆ (ոտքի է կանգնում արագութեամբ)։ Բաւական է, լռի՛ր։ առանց քո յանդիմանութեան էլ զգում եմ ամեն ինչ։ Ատում եմ, որքան անտարբեր է նա դէպի ինձ և որքա՜ն փոխուել է։ Ես նրան չեմ ճանաչում։

ՍՏԵՓԱՆ. Նա միայն քո աչքումն է փոխուել. նա միևնոյն Արմենուհին է։

ՍԱՄՍՈՆ. Լսի՛ր։ երկու ժամ սրանից առաջ, լուսամտից նրան տեսնելով պարտիզում մենակ, տխուր, չկարողացայ համբերել։ Ինքնասիրութիւնս զսպելով, դուրս եկայ։ Ուզում էի մի անգամ էլ փորձել հետը խօսելու։ Բայց ինձ տեսնելով, նա հանդարտ քայլերով դուրս եկաւ պարտիզից, իջաւ ձորը։ Ես ևս իջայ, առաջին անգամ։ Նա անցաւ գետակով։ Ես ևս անցայ։ Եւ սկսեց բարձրանալ քարքարոտ ուղիով, թփերը ճեղքելով, դէպի ժայռը. ես մի փոքրը հետևեցի նրան և կանգ առայ։

ՍՏԵՓԱՆ. Իհարկէ, չկարողացար աւելի հետևել նրան։

ՍԱՄՍՈՆ. Ա՛հ, նա դարմանալի ոտիկներ ունի, մինչև այսօր ուշադրութիւն չէի դարձրել։ Սուր քարերի վրայով քայլում էր, ինչպէս վայրենի այծ։ Բարձրանում էր, շարունակ բարձրանում։ Երբ հասաւ ժայռը, նստեց և իր հպարտ հայեացքը ձգեց դէպի հեռաւոր լեռները։

ՍՏԵՓԱՆ. Եւ այդ պահին նա նման էր մի հպարտ արծուի, իսկ դու մի ապիկար որսորդի։

ՍԱՄՍՈՆ. Ես մնացի ներքևումս։ Ինձ տիրեց մի ամօթալի երկիւղ, ոտներս չհնազանդուեցին ինձ, երբ կամեցայ բարձրանալ։

ՍՏԵՓԱՆ. Եւ բաւականացար ժայռի ստորոտից դիտելով նրան անմերձենալի բարձունքի վրայ։ Ահա քո և նրա մէջ եղած

տարբերութիւնը. դու երբէք, երբէք չես կարողացել բարձրանալ մինչև նա։

ՍԱՄՍՈՆ (յանկարծ լուսամտից նկատել է Արմենուհուն)։ Ահա, նա գալիս է։ Մնացի՛ր այստեղ, Ստեփան, եթէ ինձ մենակ տեսնի, ներս չի մտնիլ։ Օգնի՛ր ինձ նրա հետ հաշտելու։

ՏԵՍԻԼ X.

Նոյնք, Արմենուհի, յետոյ Կոնստանդին.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գալիս է խորքի դռներով։ Հագնուած է այնպէս, ինչպէս առաջին արարուածում։ Ձեռնափայտը թողնում է պատշգամբի վրայ։ Ներս է մտնում յոգնած. ուսերի շալը ձգում է աթոռի վրայ)։ Ա՛հ, յոգնեցի։ (Նստում է։ Սամսոնին չի նկատել)։

ՍՏԵՓԱՆ. Առաջին անգամն եմ լսում ձեզնից յոգնեցի բառը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ժպտալով)։ Երևի պառաւել եմ։ (Սամսոնին տեսնելով, արագ ոտքի է կանգնում և դիմում է դէպի աջ կողմի երկրորդ դռները։ Նկատում է դաշնամուրը ծածկուած և թեթև ձչում)։ Ա՛հ։ (Կանգ է առնում)։

ՍՏԵՓԱՆ (վախեցած, մօտենալով)։ Ի՞նչ պատահեց։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Տեսէ՛ք, ի՛նչ էն արել, բժիշկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (երևում է ձախ կողմի առաջին դռների միջև)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հայրիկ, նայիր, նրանք ուզում են ինձնից խլել իմ մխիթարութիւնը։ Ո՞ւմն է այդ դաշնամուրը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Քոնը։ Հանգուցեալ մօրդ նուէրն է։

ՍԱՄՍՈՆ (կանգնած է դէպի ձախ և ակնածութեամբ դիտում է տեսարանը)։ Ճիշտ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուշադրութիւն չդարձնելով Սամսոնի կողմը)։ Ուրեմն ի՞նչ իրաւունքով են ինձ զրկում նրանից։ Հայրիկ, դու գիտես՝ ես առանց նուագելու մի օր անգամ չեմ կարող ապրել,

իսկ նրանք ծածկել են դաշնամուրը, որպէսզի ես չնւագեմ։ Բայց այդ ես թոյլ չեմ տալ։ Ո՜չ։ (*Արագ քայլերով մօտենում է ձախ կողմի առաջին դռներին*)։ **Մելանիա։** (*Աւելի բարձր*)։ **Մելանիա։**

ՏԵՍԻԼ XI.

Նոյնք, Մելանիա, յետոյ Եղիսաբէթ և Վիրգինէ.

ՄԵԼԱՆԻԱ. (*շտապով գալիս է ձախ կողմի առաջին դռներով*)։ **Այստեղ եմ, տիկին։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Ո՞վ է ծածկել դաշնամուրը։*

ՄԵԼԱՆԻԱ. *Ես ու Գարեգինը։*

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Ո՞ւմ հրամանով։*

ՄԵԼԱՆԻԱ. *Մեծ տիկնոջ։*

ԵՂԻՍԱԲԷԹ (*երևում է ձախ կողմի երկրորդ դռների միջև*)։

ՎԻՐԳԻՆԷ (*երևում է մօր կողքին, դուրս գալով ձախ կողմի առաջին դռներով*)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Ո՞ւր են իմ նօտաները։*

ՄԵԼԱՆԻԱ. *Մեծ տիկնոջ սենեակում։*

ԱՐՄԵՆՈՒՀԻ. *Գնացէ՛ք, բերէք, դաշնամուրը բա՛ց արէք։*

ՄԵԼԱՆԻԱ (*քայլերն ուղղում է դէպի ձախ կողմի երկրորդ դռները, բայց Եղիսաբէթին տեսնելով, կանգ է առնում*)։

ԵՂԻՍԱԲԷԹ. *Խայտառակուեցինք օտարների մօտ։* (*Վիրգինէին*)։ *Այն կինն իմ սենեակումն է։ Գնա՛, նրան ճանապարհ դիր միւս դռներով, որ դրա ձայնը չլսի։*

ՎԻՐԳԻՆԷ (*շտապով գնում է ձախ կողմի երկրորդ դռներով և քիչ անցած յետ է գալիս*)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*Մելանիային*)։ *Բա՛ց արէք, ասում եմ, դաշնամուրը։*

ԵՂԻՍԱԲԷԹ. Թող մարդդ հրամայի, բաց կանենք։ (Մելանիային)։ Կորի՛ր այստեղից։

ՄԵԼԱՆԻԱ (շտապով գնում է ձախ կողմի առաջին դռներով)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Շատ լաւ, թող այդպէս լինի։ Ես ձեզնից դեռ աւելին եմ սպասում։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հանգստացի՛ր զաւակս, դաշնամուրն ի՞նչ է, որ նրա համար արիւնդ պղտորում ես։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՛հ, դաշնամուրը չէ դլխաւորը, հայրիկ, այլ դրանց նպատակը։ (Եղիսաբէթին)։ Բարբարոսնե՞ր, ես տարել եմ ձեր բոլոր հալածանքները, բայց այդ մէկը տանել չեմ կարող։ Վախից չէ, որ լռել եմ մինչև այսօր, այլ ամօթից։ Դուք թունաւորել էք իմ կեանքի իւրաքանչիւր վայրկեանը ձեր անտեղի կասկածներով. դուք հետևել էք իմ ամեն մի քայլին։ Եւ ի՞նչ է եղել ձեր նպատակը։ Կոտրել իմ կամքը, դարձնել ինձ ստրուկ տնտեսական չնչին պարտականութիւններին և ձեր հնամաշ աւանդութիւններին։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ինչե՞ր է ասում, Աստուած իմ, ինչե՞ր է ասում։

ՍԱՄՍՈՆ. Թող ասի, մայրի՛կ, թող ասի։

ՎԻՐԳԻՆԷ. Հարբած է կամ խելագարւել է։

ՍՏԵՓԱՆ (վրդովւած, Վիրգինէին)։ Դու մի՛ խառնւիր, ի սէր Աստծոյ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Խելագարւե՞լ։ Ո՞վ չէր խելագարւիլ ձեր երկուսի ձեռքում։ Մայր և աղջիկ՝ դուք աշխատել էք ամեն իրաւունք բանեցնել իմ վրայ։ Մանկութիւնից սոլոր ազատ մտածելու, ազատ զգալու, այս տունը մտնելու օրից զգացել եմ ստրկութեան գարշելի լուծը։ Եւ որքան ծանր է եղել այդ լուծը, այնքան աւելի եմ ատել ձեզ։ (Վիրգինէին)։ Ինչ վերաբերում է ձեզ, զզւելով զզւում եմ ձեզնից... ՕԴ...

ՎԻՐԳԻՆԷ. Մայրիկ, լսեցի՞ր։ Լսեցի՞ր, եղբայր։ Ինչո՞ւ ես լռում, ինչո՞ւ չես խօսում։ Քո մօր ու քրոջ պատիւը գին չունի՞ քեզ համար։ Ա՛հ, ես կտրաքեմ։

ՍԱՄՍՈՆ. Ստեփան, հեռացրու նրան այստեղից։

ՍՏԵՓԱՆ (բռնելով Վիրգինէի թևից)։ Գնանք, գնանք, ասում եմ. դու կրակի վրայ իւղ ես ածում։ (Գրեթէ ուժով տանում է Վիրգինէին ձախ կողմի առաջին դռներով և յետ է գալիս)։

ՏԵՍԻԼ XII.

Նոյնք, առանց Վիրգինէի.

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Զգիտեմ, ո՞ր բարոյական օրէնքով է մէկն իշխում միւսի վրայ։ Ա՛հ, գիշեր,—ցերեկ իմ ականջներին հնչել է մի ձայն, անախորժ ձայն. «Դու կին ես, ուրեմն ստրուկ ես, որովհետև ես էլ ժամանակին ստրուկ եմ եղել։ Ինչպէս ինձ հետ են վարուել, նոյնպէս և ես պիտի վարուեմ քեզ հետ։ Խեղդիր քո մէջ քո կամքը և լսիր ինձ, քո ամուսնուն, նրա ազգականներին։ Վարիր բուսական կեանք, կեր, խմիր, պճնուիր, ծախսիր—այս բոլորը թոյլ ենք տալիս, բայց ազատ մի՛ զգար քեզ, այդ արգելուած է։ Դու քո ամուսնու ընկերը չես, հաւասարը, այլ նրա հիւրին, նրա ազատ րոպէների զուարճալիքը։ Վերջապէս, դու պէտք է փառաբանես քո ճակատագիրը, որ քեզ գցել է մի հարուստ տուն»...

ԵՂԻՍԱԲԷԹ (Սամսոնին)։ Ինչո՞ւ չես ասում, որ քաղցածութիւնից ենք ազատել նրան, պատուաւոր կօշիկներից ենք դուրս բերել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (բարկութիւնից դողալով)։ Սո՞ւտ է, սո՞ւտ է. մենք

երբէք քաղցած չենք եղել։ Օ՛հ, ինչո՞ւ դու տղամարդ չես, պառաւ, ՇՀ...

ՍՏԵՓԱՆ (բռնելով Կոնստանդինի թևը)։ Զսպեցէ՛ք ձեզ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ի՞նչ պիտի անէի։ Ես կռուելու համար չէի եկել այս տունը, այլ ապրելու։ Պատերը կապստամբուէին, եթէ ես թշնամութիւն գցէի որդու և մօր մէջ։ Ճարահատեալ սկսեցի յարմարուել իմ վիճակին, ինչպէս որսած թռչուն, որ ընտելանում է իր վանդակին։ Բայց թռչունն իր վանդակում իսկ պահպանում է երգելու, թռչկոտելու իրաւունքը, մինչդեռ ինձնից այն էլ են խլում։ (Լալիս է հանդարտ)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ասացի՞ր բոլորը, վերջացրի՞ր։ (Կոնստանդինին) Դէ՛հ, տարէք նրան այստեղից։ Երբ ուշքի կգայ, ես կխօսեմ նրա հետ։ Ամո՜թ, ամո՜թ ձեզ նման հօրը։

ՍԱՄՍՈՆ (սրտմտութեամբ)։ Մայրի՛կ... Ես խնդրում եմ, գնա՛ք ո՛ սենեակը։

ԵՂԻՍԱԲԷԹ. Կգնամ, ես չեմ կարող այս անպատուութիւնը տեսնել... Անզգա՜մ։ (Գնում է դէպի ձախ կողմի երկրորդ դռները. լսելով Վիրգինէի ձայնը, կանգ է առնում)։

ՏԵՍԻԼ XIII.

Նոյնք և Վիրգինէ.

ՎԻՐԳԻՆԷ (գալիս է ձախ կողմի առաջին դռներով։ Վերարկու և գլխարկ հագած, ձեռքին հովանոց և մի քսակ)։ Մայրիկ, մնաս բարով։

ՍՏԵՓԱՆ. Ո՞ւր ես գնում։

ՎԻՐԳԻՆԷ (արագ-արագ ձեռնոցները հագնելով)։ Քաղաք, իմ տունը։ Խայտառակուեցի, հերիք է։ (Սամսոնին)։ Եղբայր, ներողութիւն, ինչպէս երևում է, այդ բոլորի պատճառն ես եմ։

Ես չպիտի պաշտպանէի իմ հօր տան պատիւը։ Մնաս բարով։

ՍԱՄՍՈՆ (գրգռած)։ Վիրգինէ՛, խելօք կաց։

ՎԻՐԳԻՆԷ. Լաւ, մի՛ կատաղիր. գիտեմ, որ քոյրը եղբօր համար մի մեծ բան չէ։ Գնում եմ։

ՍՏԵՓԱՆ. Վիրգինէ՛, մինչև անգամ իմ համբերութիւնն էլ չափ ունի։ Վերցրու գլխարկդ, հանի՛ր վերարկուդ։ Մենք քաղաք կերթանք միասին։

ԵՂԻՍԱԲԷԹ (բռնելով Վիրգինէի թևը)։ Արի, աղջիկս, գնանք իմ սենեակը։ Քիչ էլ համբերենք, տեսնենք ինչ է լինում։ (Տանում է Վիրգինէին իր սենեակը ձախ կողմի երկրորդ դռներով)։

ՍՏԵՓԱՆ (Կոնստանդինին)։ Մենք էլ հեռանանք այստեղից։ Մենք աւելորդ ենք ամուսինների մէջ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (աչքերը սրբել է, ուշքը ժողովել. անտարբեր դէպի կատարուող տեսարանը, աչքերը յառել է յատակի մի կէտին)։ Գնա՛, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (մի ծուռ հայեացք ձգելով Սամսոնի վրայ, թոյլ է տալիս, որ Ստեփանն իրան տանի ձախ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ XIV.

Արմենուհի և Սամսոն.

(Մի քանի վայրկեան լռութիւն).

ԱՐՄԵՆՈՒՀԻ (չի զգում Սամսոնի ներկայութիւնը)։

ՍԱՄՍՈՆ. Ես լռեցի մինչև վերջը։ (Մօտենում է դաշնամուրին և բաց է անում)։ Ահա՛ քո բոլոր ասածների պատասխանը։ Սրանով ես վիրաւորում եմ իմ մօրն ու քրոջը։ Ես թոյլ

եմ տալիս մինչև անգամ, որ այդ մարդը շարունակի այցելել իմ տունը։ Բաւական է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (վեր է կենում և քայլերն ուղղում է դէպի աջ կողմի երկրորդ դռները)։

ՍԱՄՍՈՆ. Սպասիր, դու ոչինչ չե՞ս ասում։ Դաշնամուրը բաց է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այլ ևս ինձ համար միևնոյնն է։

ՍԱՄՍՈՆ. Լսի՛ր. ես խօսքի մարդ չեմ, կարճ կասեմ։ Երբ դու բորբոքած ծգում էիր իմ մօր երեսին քո նախատինքները, ես մտածում էի։ Խոստովանում եմ, դու մասամբ իրաւացի ես։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (առանց երեսը Սամսոնին դարձնելու, դառը հեգնութեամբ)։ Մի՞թէ։

ՍԱՄՍՈՆ (մօտենում է Արմենուհուն, ձեռը մեկնում է նրան)։ Տո՛ւր ինձ ձեռդ։ Ես քեզնից ներումն եմ խնդրում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նոյն եղանակով)։ Այդպէս շո՞ւտ։

ՍԱՄՍՈՆ. Ի՞նչ արած. այն օրից դէս դու ինձ թոյլ չես տալիս քեզ բացատրութիւն տալու։ Դու փախչում ես ինձնից, ինչպէս անբուժելի ախտաւորից, այն ինչ՝ ես անբուժելի չեմ։ Ո՞վ չի սխալւում։ Տուր ինձ ձեռդ հաշտե՛նք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նորից քայլերն ուղղում է դէպի աջ կողմի երկրորդ դռները)։

ՍԱՄՍՈՆ. Ուրեմն չե՞ս ներում։ Պատժո՞ւմ ես։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կանգ առնելով)։ Ես չունիմ իրաւունք ոչ ներելու, ոչ պատժելու։

ՍԱՄՍՈՆ. Բայց դու արդէն պատժել ես ինձ խիստ։ Ատժուն է յայտնի, թէ ինչ տանջանքներ եմ կրում։ Ես քուն չունիմ, հանգիստ չունիմ, գործերս մնացել են անտէր. ոչ պարապել եմ կարողանում և ոչ մտածել նրանց մասին։ Ես կկործանւեմ, եթէ այդպէս շարունակւի։ Արմենուհի, մի՛ լինիր ոխակալ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես ձեր դէմ ոխ չունիմ։

ՍԱՄՍՈՆ. Ունիս և շատ մեծ ոխ։ Այսօր մեր զաւակի ծնընդեան առաջին տարեդարձն է, և դու այսօր էլ ինձ հետ ճաշին մի սեղանի չնստեցիր։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ծանր հառաչելով)։ Լաւ տօնեցինք։ Ա՛հ, թողէք ինձ, մոռացէք իմ գոյութիւնը։

ՍԱՄՍՈՆ. Քո գոյութիւնն երբէք այնքան թանգ չի եղել ինձ համար, որքան այժմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (երկարատև դառը հեգնական ծիծաղ)։ Հա՜, հա՜, հա՜...

ՍԱՄՍՈՆ. Մի՛ ծիծաղիր. ես խօսքերը սապնի պղպեակների պէս օդը շպրտողներից չեմ։ Ասա՛, վերջապէս, ներո՞ւմ ես թէ ոչ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ո՛չ։

ՍԱՄՍՈՆ. Ուրեմն ո՞չ մի հաշտութիւն, ո՞չ մի պայման։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մենք կմնանք միևնոյն յարկի տակ մեր զաւակի համար, բայց կապրենք ինչպէս օտարներ։

ՍԱՄՍՈՆ. Ա՞յդ է քո վերջին խօսքը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այս է։

ՍԱՄՍՈՆ (քիչ մտածելով)։ Շատ բարի, թող այդպէս լինի, այժմ խօսենք ինչպէս օտարներ։ (Դէմքն ընդունում է խիստ արտայայտութիւն)։ Արդեօք ձեր այդ յամառութեան հիմքը իմ անհաւատարմութիւնն է, թէ՞ մի ուրիշ, աւելի խոշոր պատճառ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գլուխը համարձակ բարձրացնելով)։ Ի՞նչ էք կամենում ասել դրանով։

ՍԱՄՍՈՆ. Այն, որ իմ մայրն ու քոյրը չեն սխալւում։ Դուք ոչ թէ համակրում էք այդ Հմայեակին, այլ սիրում էք նրան և սիրում էք... յանցաւոր սիրով։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (սառը)։ Զե՞զ ինչ, մենք օտարներ ենք։

ՍԱՄՍՈՆ. Եւ դուք համարձակւում էք, դուք, իմ օրինական կի՞նը, իմ զաւակների մայրը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իսկ դուք իմ օրինական ամուսինը, իմ զաւակի հայրը չէի՞ք, երբ դաւաճանում էիք ինձ։

ՍԱՄՍՈՆ. Ես տղամարդ եմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Արհամարհում եմ այդ զայրելի արտօնութիւնը տղամարդու համար, ինչպէս մի ստոր աւանդութիւն։

ՍԱՄՍՈՆ (դառը ծիծաղով)։ Ահա թէ ինչ, ուրեմն դուք ուզում էք տակն ու վրայ անել մեր վարք ու բարքերը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Եթէ ձեռքիս լինէր, ես նրանց կխորտակէի հիմնովին։

ՍԱՄՍՈՆ (հետզհետէ կատաղելով)։ Ձեզ կատիպեն յարգել և խոնարհուել նրանց առջև։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (արհամարհանքով)։ Ո՛վ արդեօք։

ՍԱՄՍՈՆ. Ես։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Փորձեցէ՛ք։

ՍԱՄՍՈՆ. Ուրեմն չէ՞ք հերքում ձեր սէրը դէպի այդ մարդը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Առաջ ես կպատասխանէի ձեր հարցին ամենայն համարձակութեամբ, այժմ պարտաւոր չեմ։ (Շուռ է գալիս գնալու)։

ՍԱՄՍՈՆ (բարձր ձայնով)։ Անառա՛կ, ես քո գլուխը կջախջախեմ։ (Աթոռը բարձրացնում է Արմենուհու վրայ)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (երեսը համարձակ Սամսոնին դարձնելով և գլուխը աներկիւղ բարձրացնելով)։ Ջախջախեցէ՛ք։

ՏԵՍԻԼ XV.

Նոյնք, Ստեփան, Եղիսաբէթ և Վիրգինէ.

ՍՏԵՓԱՆ (Սամսոնի գոռոցին շտապով վազել է ձախ կողմի առաջին

դռներից): **Ի՞նչ ես անում, խելագար։** (Ընկնում է Սամսոնի և Արմենուհու մէջ):

ԵՂԻՍԱԲԷԹ (գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով Ստեփանից յետոյ):

ՎԻՐԳԻՆԷ (գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով Եղիսաբէթից յետոյ):

ՍԱՄՍՈՆ (նայել է Արմենուհու համարձակ դէմքին: Անթոռը ցած է իջեցնում):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Քաջութիւն չունեցաք մի հարւածով վերջ տալու խնդրին։

ՍԱՄՍՈՆ. Ձեզ նմաններին չեն սպանում, այլ խեղդում են շանպէս։ (Անթոռը շպրտում է մի կողմը):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այդ չէ, ձեր խիղճը բողոքեց։ Դուք զգացիք, որ զրպարտում էք ինձ կարծելով, թէ ես նոյնն եմ, ինչ որ դուք։ Ոչ, եթէ ես կամենամ անել ձեր արածը, գոնէ ես մի վայրկեան անգամ չեմ մնալ ձեր տանը։

ՍՏԵՓԱՆ. Այդ այնքան ճիշտ է, որքան ինքը ճշմարտութիւնը, կարող եմ երդուել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ինչո՞ւ գազանացաք։ Ո՞ւր էիք այն ժամանակ, երբ ես պատրաստ էի կեանքս զոհել մի օր սիրելու և սիրուելու համար։ Մի՞թէ իմ սիրտը ժամացոյցի մեքենայ էր պողպատից շինուած։ Մի՞թէ այն չէ՞ր եռում բուռն զգացումներից ձեզ համար, երբ դուք գործերով էիք զբաղուած։ Մի՞թէ ես չէ՞ի փափագում իմ երազների մարմնացումը տեսնել ձեր մէջ և միմիայն ձեր մէջ։ Մի՞թէ ձեր յետևից վազելով ամեն վայրկեան չէ՞ի փաթաթուում ձեր պարանոցին։ Ո՞ւր էիք այն ժամանակ։ Ինչո՞ւ էիք ինձ հրում։ Զբաղուած էիք, հա՛ հա՛ հա՛։ (Դառը ծիծաղ): Ա՜հ, արժէ՞ր միթէ ուշադրութիւն դարձնել ինձ վրայ, ինձ, որ ձեր ապարանքի զարդերից մէկն էի։

ՍՏԵՓԱՆ (Սամսոնին): Լսիր, լսի՛ր։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (աւելի ոգևորուած): Ա՛հ, դուք մտածում էիք. «Ի՞նչ

կայ, նա իմ սեփականութիւնն է, իմ հարստութեան հրապոյրով գնուած։ Ոչ ոք չի կարող նրան խլել ինձնից։ Պահապաններ կան նրա վրայ—մայրս, քոյրս, ազգականներս, հասարակական կարծիքը։ Ինչո՞ւ իմ թանկագին զգացումները միայն նրա վրայ շռայլեմ։ Ես հարուստ եմ, կարող եմ ամենագեղեցիկ կանանց սէրը գնել շուկայում, ինչպէս գնում եմ իմ ձեռնոցները, իմ կօշիկները։ Իսկ նա թող տանը մնայ, այնպէս, ի միջի այլոց»։ Եւ գնեցիք, և վայելեցիք։ Ի՞նչ էք ուզում այժմ ինձնից։ Ես ոչ նախանձում եմ, ոչ բողոքում, ես... զզւում եմ ձեզնից։ (Արագ քայլերով գնում է աջ կողմի երկրորդ դռներով)։

ՏԵՍԻԼ XVI.

Նոյնք, առանց Արմենուհու.

ՍԱՄՍՈՆ (*կատաղած, շնչասպառ*)։ Մայրի՛կ, այժմ ամեն ինչ վերջացաւ։ Հրամայիր ծառաներին, որ այդ մարդը գալիս վռնդեն իմ տնից։ Թո՛ղ Գարեգինը դուրս գայ տնից և ասի. «Կորէ՛ք, պարոն, դուք պատի գող էք»։

ՎԻՐԳԻՆԷ. Ես քո հրամանը իսկոյն կյայտնեմ Գարեգնին։ (Ուզում է գնալ)։

ՍՏԵՓԱՆ (*բռնելով Վիրգինէի թևը*)։ Կա՛ց, քո գործը չէ։

ՎԻՐԳԻՆԷ (*ստիպւած կանգ է առնում, կատաղութիւնից ատամները կրճտելով*)։

ՍԱՄՍՈՆ (*Ստեփանին*)։ Այո՛, ազատամիտ բարեկամ, նայիր ինձ զարմացած։ Համարի՛ր ինձ ասիացի, վայրենի, այնուամենայնիւ ես պիտի գործադրեմ իմ իրաւունքները։ Ցիմար չէին մեր հայրերն ու պապերը, որ մտրակով էին խրատում իրանց կանանց։

ՎԻՐԳԻՆԷ. Իհարկէ, կապը կտրած կանանց։

ՍՏԵՓԱՆ. Լռելո՞ւ ես, վերջապէս, թէ չէ։

ՍԱՄՍՈՆ. Օրէնքով իմ կինն է, էապէս էլ ինձ պիտի պատկանի։ Ես անձեռոցիկ չեմ, որ կեղտոտելուց յետոյ դէն շպրտի և մի ուրիշը վերցնի։ Գիտեմ ինչ ասել է փոխադարձ համակրանք, գաղափարական ձգտում և այլն։ Այսօր հոգով են միացած, վաղը մարմնով կմիանան։

ԵՂԻՍԱԲԷԹ. Ա՛յ, ես էլ հէնց այդ եմ ասում։

ՎԻՐԳԻՆԷ. Վերջապէս։

ՍՏԵՓԱՆ (անհամբեր)։ Քիչ գրգռեցէք այդ մարդուն, քիչ գրգռեցէք։

ՍԱՄՍՈՆ (սպառնալով դէպի աջ կողմի երկրորդ դռները)։ Սպասի՛ր, գոռոզ արարած, այժմ ես քեզ ցոյց կտամ իմ ատամները։ (Գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՍՏԵՓԱՆ (Սամսոնի յետևից)։ Գլորուիր, գլորուիր մինչև անդնդի յատակը։ (Դառնալով Եղիսաբէթին և Վիրգինէին)։ Դուք կղզաք ձեր վարմունքի համար, բայց ուշ կլինի։ (Գնում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՎԻՐԳԻՆԷ. Դու ոչինչ չես հասկանում։ (Գնում է Ստեփանի յետևից)։

ԵՂԻՍԱԲԷԹ. Մենք մեր պարտքն ենք կատարում։ (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով)։

ՎԱՐԱԳՈՅՐ.

ԱՐԱՐԻԱԾ ՁՈՐԲՈՐԴ.

Առաջին արարուածի տեսարանը, միայն ճաշի սեղանի փոխարէն դրուած են մի թեթև եղէգնեայ գահաւորակ, մի փոքրիկ սեղան և պարտիզի ածուներ: Համակի վրայ զցած է Արմենուհու շալը և երկայն ծեռափայտը:

ՏԵՍԻԼ I.

Ստեփան և Վիրգինէ.

ՍՏԵՓԱՆ (*նստած է փոքրիկ սեղանի մօտ. ծխում է*): Գնա՛նք Վիրգինէ, հաւատա, այդ լաւ կլինի: Բաւական է, ինչքան հիւր եղանք այստեղ:

ՎԻՐԳԻՆԷ. Ես չեմ ուզում եղբօրս այդ դրութեան մէջ թողնել ու հեռանալ: (*Կանգնած էր, նստում է*):

ՍՏԵՓԱՆ. Այն ժամանակ ինձ ներիր, ես կերթամ մենակ:

ՎԻՐԳԻՆԷ. Չեմ հասկանում, ինչո՞ւ ես այդպէս շտապում:

ՍՏԵՓԱՆ. Շտապում եմ, որովհետև անտանելի է այս ընտանիքի կեանքը: Մայր, որդի ու աղջիկ խօսք մի էք արել մի ազնիւ էակ հալածելու: Ես չեմ կարող տեսնել անմեղութիւնը այդ հալածանքի տակ և լռել: (*Վեր է կենում*):

ՎԻՐԳԻՆԷ. Գետինը մտնի քո անմեղը հա՞, գետինը մտնի:

ՍՏԵՓԱՆ (*զրգռուած*): Կէկէլ ես դու, Վիրգինէ, կատարեալ կէ-

կէլ։ Մաղձս է շարժւում, երբ դու խօսում ես այդ եղանակով։ (Քալլում է)։

ՎԻՐԳԻՆԷ. Կէկէլ եմ թէ փէփէլ, բայց քեզ հաւատարիմ եմ, նրա նման չեմ։

ՍՏԵՓԱՆ. Իսկ նա հաւատարիմ չէ՞։

ՎԻՐԳԻՆԷ. Լսեցի՞ր ինչ ասաց երէկ եղբայրս. «Այսօր հոգով են միացած, վաղը մարմնով կմիանան»։ Խե՛ղճ եղբայր, ինչպէ՞ս է տանջւում։ Եւ ո՞ւմ համար, Աստուած իմ, ո՞ւմ համար։

ՍՏԵՓԱՆ (կանգ առնելով)։ Ա՛խ, կարճամիտ, կարճամիտ։ Եթէ դու մի քիչ խելք ունենայիր, հալածելու փոխարէն, կը-պաշտպանէիր նրան։

ՎԻՐԳԻՆԷ (հեգնութեամբ)։ Ահա թէ ի՞նչ։ Հետաքրքրական է իմանալ, ինչո՞ւ պիտի պաշտպանէի։

ՍՏԵՓԱՆ. Որովհետև նա մի կենդանի բողոք է կնոջ վիրաւորական և ստորացուցիչ կացութեան դէմ։ Նա չի ուզում ոչխարի հեզութեամբ տանել իր վիճակը։ Բայց ես ինչպէս քեզ բան հասկացնեմ։ Էհ, արէք ինչ որ ուզում էք, ես ձեռներս լւանում եմ։ (Դիմում է դէպի պատշգամբը)։

ՎԻՐԳԻՆԷ. Դու այսօր ես ուզում գնալ։ (Հետևում է Ստեփանին)։

ՍՏԵՓԱՆ. Հէնց այս րոպէին։ (Հեռանում է)։

ՏԵՍԻԼ II.

Կոնստանդին և Սողոմ Սողոմեան.

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (գալիս է խորքի դռնակով Սողոմ Սողոմեանի հետ)։ Ես չեմ հասկանում ձեր լեզուն՝ «թէև այնպէս է, բայց և այնպէս», «հանգամանքների նրբութեան պատճառով» և այլն և այլն։ Խնդրեմ պարզ խօսէք։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (գալիս է խորքի դռնակով, միշտ հետևելով Կոնստանդինին, մի քայլ յետ): Պարոն գնդապետ, իսկապէս խնդիրը շատ պարզ է, թէև բացատրելու և լուսաբանելու կողմեր շատ ունի: Բանն այն է, որ...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (անհամբեր): Բանն ի՞նչ է, ես հէնց այդ եմ ուզում իմանալ:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Բարեկամական և ազգակցական կապերն ինձ հարկադրում են ասել, որ դուք կոչված էք մի ընտանեկան թիւրիմացութիւն հեռացնելու: Իսկապէս ասած թիւրիմացութիւն էլ չկայ, բայց և այնպէս թիւրիմացութիւն պիտի համարել, քանի որ երկու կողմերն էլ համահաւասար իրաւացի են:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (մեկուսի): Տէր ողորմած Աստուած: (Սողոմ Սողոմեանին): Ասացէք, ի սեր երկնաւորի, դուք ի՞նչ յանձնարարութիւն ունիք իմ վերաբերմամբ:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Կարելի է յանձնարարութիւն համարել, կարելի է և պարտականութիւն, նայելով թէ խնդրին որ կողմից կբարեհաճէք մօտենալ:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (հասնելով բեմի կենտրոնը կանգ է առել): Լսեցէ՛ք, պարոն: Ես մի պարզ զինուորական եմ, դուք՝ նախկին ուսուցիչ: Մենք դիպլոմատներ չենք, որ տաւարը ասեղով մորթենք: Պատասխանեցէք, առանց պատէպատ ընկնելու: Ի՞նչ է հրամայել ձեզ իմ փեսան ինձ ասելու: Գիտէ՛ք, ես զրգռուում եմ, ես զգացմունքի մարդ եմ:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Զգացմունքի մարդ լինելը աղնիւ բան է, թէև վնասակար: Մի փիլիսոփայ ասել է.—կեանքը ողբերգութիւն է նրանց համար, որոնք զգում են, և կոմեդիա նրանց համար, որոնք մտածում են: Մարդ, դուք զգացող, ես մտածող՝ միանանք և այնպէս մօտենանք խնդրին:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ամուր բռնում է Սողոմ Սողոմեանի թևը, թափահարում

է)։ Ասելու էք, վերջապէս, թէ չէ... Ի՞նչ է պահանջում ինձնից ձեր քրոջ որդին, իմ աղջկայ ամուսինը։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ (ցաւ զգալով)։ Պահանջում է, որ...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (լրացնելով)։ ... Որ ես հեռանամ այս տնից, այնպէս չէ՞։ Գնամ, կորչեմ... աա՜։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Թէև կատարելապէս այդպէս չէ, բայց և այնպէս։ Սակայն թեւս բաց թողէք... ցաւեցնում էք։ Մի իմաստասէր ասել է.—ով ուրիշին... ցաւում է...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (բաց թողնելով նրա թեւը)։ Դէ՛, հեռացէք. այժմ հասկացայ ձեզ, պարոն դիպլոմատ։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Ինձ թւում է, որ աւելորդ չէր լինիլ մի քանի դէտայլներ բացատրել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (բարձր ձայնով)։ Հեռացէ՛ք։ (Նստում է վրդովուած և մտածում է)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄԵԱՆ. Չնայելով, որ շատ բարի մարդ էք, բայց և այնպէս բարի չէք... Սակայն թէև... Իսկապէս ասած... (Հեռանում է պատշգամբով, մի քանի անգամ երկիւղով յետ ու յետ նայելով)։

ՏԵՍԻԼ III.

Կոնստանդին և Արմենուհի.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (գալիս է պատշգամբից։ Հագած է ուրիշ ամարային հագուստ։ Համեմատաբար զարթ է արտաքուստ)։ Ի՞նչ էր ասում, մեր պատուելին, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (գրգիռը զսպել է)։ Ասում էր, թէև այսօր չորեքշաբթի է, բայց կարող էր և հինգշաբթի լինել։ Դու, երևի, ուզում ես տնից դուրս գալ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մտեցել է համակին և շալը վերցրել)։ Այո՛, հայրիկ, գնում եմ իմ ռոմորական զբօսանքը կատարելու։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Սպասիր մի քանի րոպէ։ Խօսք ունիմ քեզ ասելու։ (Նստում է)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (շալը յետ դնելով, դալիս է բեմի կենտրոնը)։ Հրամայի՛ր, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այս երեկոյ ես հեռանում եմ այստեղից և երբէք ոտ չեմ դնելու այս տունը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (հառաչելով)։ Հասկանում եմ, հայրիկ։ (Նստում է)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ես կարծում էի իմ ներկայութիւնը կարող է քեզ օգնել, բայց դուրս է գալիս հակառակը։ Ինչ և է, խնդիրը ես չեմ։ Ասա, Արմենուհի, մտադի՞ր ես Սամսոնի հետ հաշուելու։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (դրական)։ Ո՛չ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այժմ չեմ ասում, այլ յետոյ, մի քիչ անցած։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (աւելի դրական)։ Ո՛չ այժմ, ո՛չ յետոյ, ո՛չ երբէք։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ուրեմն այդ վճռա՞ծ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վճռա՛ծ է։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հրա՞։ (Մտածում է մի փոքր, զսպում է իր դժկամակութիւնը)։ Լաւ, շատ լաւ, վարուիր ինչպէս սիրտդ է ուզում։ Ես չեմ կարող լինել մէկն այն հայրերից, որոնք հասարակական կարծիքի անունով ճնշում են գործ դնում իրանց զաւակների վրայ։ Իհարկէ, ես էլ ունիմ որոշ հայեացքներ, բայց ամեն բանից առաջ քո բարեդաւորութիւնն է ինձ համար։ Մի հարց ևս։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (անհանգիստ)։ Լսում եմ, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Ասա ինձ, սիրո՞ւմ ես այդ ճարտարապետին։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (շփոթելով)։ Հայրի՛կ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (հանգիստ)։ Մի՛ շփոթուիր. ասա՛, աղջիկս։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (տատանւում է, մտածում է քիչ, յետոյ վճռական)։ Այո՛, սիրում եմ, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ցնցում է. լետոյ իսկոյն զսպում իրան)։ Լաւ, շատ լաւ։ Ամուսինդ գիտէ՞։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ամուսինս կապ չունի իմ զգացումների հետ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Աղջիկս, դու դեռ նրա տանն ես, նրա անունն ես կրում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ուրի՞շ, հայրիկ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Կկամենայի իմանալ՝ ի՞նչ ես մտածում անելու։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչինչ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Կարելի է մտադիր ես բաժանե՞լ Ալադեանից։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչ, չեմ ուզում բաժանել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Հապա ինչպէ՞ս. ապրելով մէկի տանը, սիրել... (Ցանկարծ կատաղում է, ձեռն ուժգին զարկում է սեղանին, բարձրաձայն)։ Արմենուհի՞։ (Վեր է կենում)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (անփոյթ, նայում է հօրը խոր յանդիմանութեամբ)։ Հայրի՛կ։ (Լռութիւն)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (նայել է Արմենուհու համարձակ աչքերին։ Զսպում է իրան. հանգստանում է)։ Լաւ, լաւ, ներիր, մի վայրկեան յիմարացայ։ Գիտեմ, որ դու այն կանանցից չես։ Հասկանում եմ, դու չես ուզում թողնել քո զաւակին։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այդ չէ գլխաւոր պատճառը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (զարմանալով)։ Այդ չէ՞. ուրեմն ի՞նչ է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես չեմ ուզում հետևել շատերի օրինակին։ Ինձ համար կարևորը սէրն է, որին այնքան կարօտում էի։ Այժմ ես սիրում եմ և սիրւած եմ—այսքանը բաւական է ինձ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Սիրում ես, սիրւած ես և պիտի տանջւես յաւիտեան։ Ինչո՞ւ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ցանուն սիրոյ, հայրիկ. յանուն այն բարձր զգացման, որ կեանք է ներշնչում կնոջ անգոյն գոյութեանը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Զեմ հասկանում, ինձ համար պարզ չէ այդ։ Աստ, խնդրեմ, նա քանի՞ զաւակ ունի։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երկուսը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Դու տեսնո՞ւմ ես նրա հետ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երբեմն։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Կարելի է այժմ էլ տեսակցութեան ես գնում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (տանջելով)։ Հայրի՛կ։ (Վեր է կենում)։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (զղջալով)։ Լաւ, լաւ. այլեւս ո՛չ մի հարց։ Դէ՛հ, ես գնում եմ ճանապարհի պատրաստութիւն տեսնելու։ (Վեր է կենում)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հայրիկ, դու մտքումդ ինձ անիծո՞ւմ ես։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Քա՜ւ լիցի։ Ընդհակառակը, օրհնում եմ քո անկեղծութիւնը։ Շնորհակալ եմ, զաւակս, շատ շնորհակալ եմ, որ բոլորն ասացիր։ (Ուզում է գնալ դէպի պատշգամբ, Ստեփանին տեսնելով, կանգ է առնում)։

ՏԵՍԻԼ IV.

Նոյնք և Ստեփան.

ՍՏԵՓԱՆ (գալիս է պատշգամբից վերարկուով, ուսին պայուսակ, ձեռքին մի ճամբարկղ)։ Մնացէ՛ք բարև, բարեկամներս։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Դուք արդէն գնո՞ւմ էք։

ՍՏԵՓԱՆ. Ինչպէս տեսնում էք։ (Ձեռ է տալիս Կոնստանդինին։ Ճամբարկղը դնելով գետնի վրայ, գլխարկը բարձրացնում է)։ Արմենուհի՛, թոյլ տուէք իմ շնորհակալութիւնը յայտնել ոչ ձեր հիւրասիրութեան, այլ պարզ և անկեղծ վարմունքի համար։ Ինչ որ էլ պատահի, իմացէք, որ ես ձեր կողմն եմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ջերմագին սեղմելով Ստեփանի ձեռը)։ Օ՜, շատ շնոր-

հակալ եմ. դուք ինձ համար հաւասար էք հարազատ եղբօր, որից զուրկ եմ։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Պարոն Ստեփանը Ալադեանների ազգականների մէջ միակ մարդն է, որին ես յարգում եմ։ (Ստեփանին)։ Բայց ինչու՞ չէք ապասում մինչև երեկոյ. միասին կերթայինք։

ՍՏԵՓԱՆ (գլխարկը գլխին դնելով, ձամբարկղը վերցնելով)։ Օ՜, ոչ, լեզուս շատ անհանգիստ լեզու է։ Իսկ այս տանը ճշմարտութիւնը շատ էլ յարգւած կերակուր չէ։ Ով գիտէ, ի՞նչ կարող եմ ասել, մէկ էլ տեսար ինձ էլ դուրս արին այս տնից, ինչպէս ձեզ...

ԱՐՄԵՆՈՒՀԻ (զայրանալով)։ Հայրիկ, ի՞նչ է ասում բժիշկը։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այո՛, զաւակս, մի փոքր առաջ ինձ հրամայեցին կորչել այստեղից։

ՍՏԵՓԱՆ. Մի աղէսի բերանով։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (Թուլացած նստում է աթոռի վրայ)։ Մի հարւած էս։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Դատարկ բան է. մի՛ վրդովւիր։

ՍՏԵՓԱՆ. Մնացէք բարև։ (Գնում է խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ V.

Արմենուհի եւ Կոնստանդին.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ուշքը ժողովելով, արագ ոտքի է կանգնում)։ Հայրիկ, դնա՛, ճանապարհի պատրաստութիւն տես։ Նրանք ամէն բանի ընդունակ են։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ. Այո, պէտք է գնալ։ (Գնում է աջ կողմը)։

ՏԵՍԻԼ VI.

Արմենուհի, Եղիսաբէթ, յետոյ Մելանիա.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*նայել է հօր յետևից: Մօտենում է համակին, շալը գցում է գլխին, ձեռնափայտը վերցնում է և դիմում է դէպի խորքի դռնակը*): **Ուր ես գնում:**

ԵՂԻՍԱԲԷԹ (*երևում է խորքի դռնակի յետևում: Հագած է դրսի հագուստ. մետաքսեայ սև շրջազգեստ, գլխին թասակրաւ, ձեռքին հովանոց*): **Ուր ես գնում:**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*ձեռը հանգիստ բարձրացնելով, ցոյց է տալիս կանաչազարդ լեռները*): **Այնտեղ:**

ԵՂԻՍԱԲԷԹ (*մօտենում է արագ քայլերով սանդուղքին*): **Մելանիա՜:** (*Արմենուհուն*): **Սպասի՛ր:**

ՄԵԼԱՆԻԱ (*երևում է պատշգամբի վրայ*): **Այստեղ եմ, տիկին:**

ԵՂԻՍԱԲԷԹ. Տիրուհուդ հետ գնա, ուր որ նա գնում է: (*Խորհրդաւոր*): **Իմացար:**

ՄԵԼԱՆԻԱ (*Թոյլ*): **Լաւ:** (*Իջնում է պարտիզակ*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*Ցուզուած*): **Ամօթ է, ամօթ է, տիկի՛ն:**

ԵՂԻՍԱԲԷԹ. Ես էլ գիտեմ ամօթ է, բայց թէ ո՞ւմ համար:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*Մելանիային*): **Հեռացի՛ր:** (*Սրտմտութիւնից դողում է, բայց իրան զսպելով, շալը նորից վերցնում է և ձեռնափայտի հետ ձգում համակի վրայ*):

ՄԵԼԱՆԻԱ (*հեռանում է պատշգամբով*):

ԵՂԻՍԱԲԷԹ (*ինքնագոհ*): **Այդպէս:**

ՏԵՍԻԼ VII.

Արմենուհի, Եղիսաբէթ և Սամսոն.

ՍԱՄՍՈՆ (*երևում է պատշգամբի վրայ. տխուր է, նեարդալին*):

ԵՂԻՍԱԲԷԹ. Ուզում էր մենակ դուրս գալ, հրամանդ կատարեցի։ (Զար ուրախությամբ)։ Հնազանդվեց։

ՍԱՄՍՈՆ (թոյլ)։ Լա՜վ։ (Նշան է անում Եղիսաբէթին հեռանալու։ Իջնում է պարտիզակ)։

ԵՂԻՍԱԲԷԹ (հեռանում է պատշգամբով, յետ ու յետ նայելով)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նստել է ձախ կողմի աթոռներից մէկի վրայ։ Աշխատում է հանգիստ ձևանալ)։

ՏԵՍԻԼ VIII.

Սամսոն եւ Արմենուհի.

ՍԱՄՍՈՆ (գալիս է բեմի կենտրոնը։ Նոյնպէս աշխատում է հանգիստ ձևանալ)։ Զգում եմ, դժվար է ազատությունից զրկվելը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (չի նայում Սամսոնին և ոչ էլ որևէ շարժումն է անում)։

ՍԱՄՍՈՆ. Ի՛նչ արած, դուք ինքներդ այդպէս կամեցաք։ Դուք ի չարը գործ դրեցիք իմ բարությունը. այժմ ես ստիպված եմ խիստ վարվել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նոյն դիրքում)։ Վարվեցէք, ինչպէս կամենաք։

ՍԱՄՍՈՆ. Թոյլատրություն չէ՞ք խնդրում։ Ես կարող եմ դարձեալ ազատություն տալ ձեզ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (վեր է կենում և դիմում է դէպի պատշգամբ)։

ՍԱՄՍՈՆ. Ո՞ւր էք գնում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իմ երեխային համբուրելու։

ՍԱՄՍՈՆ. Իսկ եթէ այդ էլ թոյլ չտամ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իմ շրթունքները դեռ արատաւորված չեն։ (Ուզում է գնալ)։

ՍԱՄՍՈՆ (Արմենուհուն ճանապարհը կտրելով)։ Կանգ առէք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կանգ է առնում)։

ՍԱՄՍՈՆ. Ասում են, ձեր սիրահարութեան լուրն արդէն տարածւել է բոլոր ամարանոցներում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (սառը)։ Կարելի է։

ՍԱՄՍՈՆ. Ասում են, նրա կինը այնքան է կատաղած, որ մտադիր է ձեզ հրապարակական վիրաւորանք հասցնել, եթէ համարձակւիք երևալ հասարակութեան մէջ։ Ի՞նչ կասէք դրա դէմ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչինչ։

ՍԱՄՍՈՆ. Լուրն այսօր-վաղը կանցնի քաղաք, և ես կդառնամ ամբողջ հասարակութեան ծաղրի և արհամարհանքի առարկան։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Կարող է պատահել։

ՍԱՄՍՈՆ (աւելի ու աւելի վրդովւելով)։ Ես, Սամսոն Ալադեանս, որ ամենքի յարգանքն է վայելում և որ իր շրջանի ամենախելօք մարդն է համարւում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (թոյլ հեգնանքով)։ Այո, համարւում է։

ՍԱՄՍՈՆ. Եւ դուք կարողանում էք այս բոլորը լսել սառնութեամբ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ամենայն սառնութեամբ։

ՍԱՄՍՈՆ. Գոնէ ձեր պատւի մասին մտածեցէք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իմ պատիւը ձեզ հետ կապ չունի։

ՍԱՄՍՈՆ. Բայց չէ՞ որ դուք իմ անունն էք կրում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վերադարձնում եմ ձեզ այդ անունը ամենայն պատրաստակամութեամբ։

ՍԱՄՍՈՆ (ձայնը բարձրացնելով)։ Իսկ իմ տունը, իմ հացը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վռնդեցէք ինձ էլ ձեր տնից, ինչպէս վռնդեցիք իմ հօրը։

ՍԱՄՍՈՆ. Դուք կորցրել էք ամեն մի մարդկային զգացում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (առաջին անգամ երեսը դարձնելով Սամսոնին)։ Խօսեցէք ինչի մասին կամենաք, բացի զգացումից։

ՍԱՄՍՈՆ (յուսահատ)։ Դուք բարոյապէս մեռել էք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ինչո՞ւ չէք մեռցնում և մարմնապէս։

ՍԱՄՍՈՆ (խեղդուկ ձայնով)։ Բաւական է. ես կարող եմ ցնորուել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նորից ուզում է պատշգամբով բարձրանալ)։

ՍԱՄՍՈՆ. Սպասեցէ՛ք. ես վերջին անգամն եմ ձեզ հետ խօսում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կանգ է առնում)։

ՍԱՄՍՈՆ. Ես փորձեցի ձեզ բացատրութիւն տալու —չընդունեցիք, մեղքս յանձն առայ—չմեղմացաք, ներումն խընդրեցի—չներեցիք, աղերսեցի, ստորացայ—չապդեց։ Վճռեցի խստութեան դիմել. կարծում էի դրանով կկոտրեմ ձեր կամակորութիւնը։ Այժմ տեսնում եմ, որ այդ էլ չի օգնում։ Ես սառն եմ վերաբերուել ձեզ—ճիշտ է։ Զեմ ճանաչել և գնահատել ձեր հոգին—գուցէ։ Ես դաւաճանել եմ ձեզ—չեմ հերքում։ Բայց այս բոլորն անցել է։ Ես քաւել եմ մեղքերս անքուն գիշերներով, անհուն տանջանքներով։ Ես այլ ևս այն չեմ, ինչ որ էի։ Մնում է ձեր արածը։ Այդ է նշանաւորը, այդ է սարսափելին։ Ես թոյլ եմ տալիս ինձ հաւատալու, որ ձեր շրթունքները դեռ արատաւորուած չեն, թոյլ եմ տալիս հաւատալու, որ նա, այդ պարոնը շատ մաքուր, շատ ազնիւ մարդ է։ Բայց ո՞վ հաշուի կառնի այդ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մի ապականուած հասարակութեան մէջ ոչ ոք։

ՍԱՄՍՈՆ. Ա՜ա, զգո՞ւմ էք այդ։ Այո՛, բոլորը կքամբասեն, բոլորը կծաղրեն։ Եւ մէջ տեղ դէս ու դէն կշպրտուի իմ պատիւը, ինչպէս մի թքուած, արհամարհուած պատառ։ Ճի՞շտ եմ ասում, թէ չէ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ճիշտ էք ասում։

ՍԱՄՍՈՆ. Ուրեմն, լսեցէք։ Ես յետ եմ վերցնում եմ խստու-

թիւնը։ Նորից տալիս եմ ձեզ ազատութիւն։ Բայց մի պայմանով։ Հեռացրէք ձեզնից այդ մարդուն։ Չեմ ասում վիրաւորեցէք, այլ ցոյց տուէք սառնութիւն, արհամարհանք։ Ես կմոռանամ ձեր վարմունքը, բայց դուք ևս պիտի մոռանաք իմը։ Մենք կհաշտուենք և վաղն և եթէ կուզևորուենք արտասահման մի քանի ամսով կամ ամբողջ տարով։ Այս անհրաժեշտ է։ Մեր բացակայութեամբ հասարակութիւնը կմոռանայ մեզ, և մեր անունը կազատուի բամբասանքից։ Ընդունում էք իմ առաջարկութիւնը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (լսել է ուշադիր. մտածել է)։ Զգիտեմ։

ՍԱՄՍՈՆ. Ցանուն մեր զաւակի։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Զգիտեմ, չեմ կարող ասել։

ՍԱՄՍՈՆ. Լա՜։ Ես ձեզ ժամանակ կտամ մտածելու, միայն մինչև երեկոյ, ոչ աւելի։ Կրկնում եմ, այս իմ վերջին խօսքն է։ Կընդունէք—լաւ, չէք ընդունիլ—խնդիրը կվճռի ահա այս։ (Ցոյց է տալիս ատրճանակը և իսկոյն յետ դնում գրպանը)։ **Երէկւանից դէս իմ ամբողջ էութիւնը տակն ու վրայ է եղել։ Այս երեկոյ ես կսպասեմ ձեր վերջնական պատասխանին։** (Գնում է պատշգամբով)։

ՏԵՍԻԼ IX.

Արմենուհի, մենակ.

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մնալով մենակ, մի բոպէի չափ մտածում է, թեթև շարժումն է անում, բարձրանում է սանդուղքը մի երկու աստիճան։ Ցանկարծ կանգ է առնում, վճռական շարժումն է անում, իջնում է և նստում առաջին աստիճանի վրայ։ Գլուխը բռնում է ձեռների մէջ և մտածում)։

ՏԵՍԻԼ X.

Արմենուհի և Հմայեակ.

ՀՄԱՑԵԱԿ (*երևում է խորքի դռնակի մէջ: Ցուզված է, գունատ, նիհար, բայց ընկճված չէ, այլ վճռական, համարձակ*): **Տիկի՛ն:**

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*գլուխը բարձրացնում է, նայում, ցնցում, ոտքի կանգնում*): **Ա՛հ, դո՞ւք, այստե՞ղ: Նա իսկոյն հեռացաւ. կարող է վերադառնալ:**

ՀՄԱՑԵԱԿ. Զտեսնելով ձեզ սովորական ժամին ժայռի վրայ, ինձ թւաց, որ մի դժբաղդութիւն է պատահել, և վճռեցի ամեն վտանգ յանձն առնել: Պէտք է վերջ տալ այս անտանելի կացութեանը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հեռացէք, Աստուած սիրէք, հեռացէք:

ՀՄԱՑԵԱԿ. Առանց ձեզ մի քայլ անգամ չեմ անիլ այստեղից: Կամ այսօր, կամ երբէք: Ես այլևս տառապելու ոյժ չունիմ: Պէտք է հանգոյցը լուծել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*յուսահատ*): **Դիւրին է ասել, բայց ինչպէս լուծել:**

ՀՄԱՑԵԱԿ. Այնպէս, ինչպէս պահանջում է ամենազօր, ամենայաղթ սէրը, որի համար չպիտի լինի խոչընդոտ: Ստել և խաբել ոչ դուք կարող էք և ոչ ես: Մինչդեռ մեզ արդէն համարում են սովորական խաբեբաներ: Արմենուհի՛, ապացուցանենք, որ մենք ընդունակ չենք ամօթալի դաշինք կապելու հասարակական հնամաշ աւանդութիւնների հետ: Մեր սէրը չի կարող և չպիտի կերակրուի ամբոխի սեղանի փշրանքներով: Ես վճռեցի զոհել ամեն բան:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ամեն բան, հարկաւ, բացի զաւակներից:

ՀՄԱՑԵԱԿ. Նոյն իսկ զաւակներիս:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (բաւական անտարբեր)։ Նոյն իսկ զաւակներիդ։ Շատ չէ՞, արդեօք, այդ ինձ համար։

ՀՄԱՑԵԱԿ. Արմենուհի, չի կարող լինել իսկական սէր առանց խոշոր զոհաբերութեան։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Բայց մի այդպիսի զոհ կարող է թունաւորել ամեն մի սէր, որքան և այն զօրաւոր լինի։

ՀՄԱՑԵԱԿ. Ամենագեղեցիկ ծաղիկն ամենասոսկալի թոյն է պարունակում իր մէջ։ Անունն է այդ ծաղկի բելադոն։ Ես բարւոք եմ համարում նրա բուրմունքով մահ ընդունել, քան անվերջ սողալ բուսական կեանքի ծանծրոյթում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դուք չունիք իրաւունք զրկելու այդ անմեղներին իրանց հօրից. այդ կլինի ոճիր, եթէ անէք։

ՀՄԱՑԵԱԿ. Բայց մի՞թէ աւելի մեծ ոճիր չէ՞ մարդկային ամենավեհ զգացման հետ առևտրական դաշինք կապելը։ Ես գերադասում եմ իմ զաւակներին զրկել իրանց հօրից, քան թողնել նրանց առանց ծնողների։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Չեմ հասկանում այդ։

ՀՄԱՑԵԱԿ. Ա՛հ, տիկին, իմ զաւակներն արդէն ծնողներ չունին։ Այն օրից, երբ ես հանդիպել եմ ձեզ, նրանց մայրն և ես նրանց թշնամիներ ենք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (մեկուսի, տանջանքով)։ Ասաւած իմ։

ՀՄԱՑԵԱԿ. Ի՞նչ է այդ ողորմելիների տեսածն ու լսածը մեզնից։ Փոխադարձ ատելութիւն, հալածանք, զզւանք։ Արդէն նրանց մանուկ աչքերը յոգնել են մեր ամենօրեայ ընդհարումները տեսնելուց. արդէն նրանց քնքոյշ լսելիքը աղաւաղել է իրանց մօր անզուսպ անէծքներից և յիշոցներից։ Երէկ առաւօտ կրտսերը հարցնում է ինձ. «Հայրիկ, քո անունը լի՞ըբ է»։ Ահա ամենաթոյլ ածականը, որ տալիս է ինձ նրանց մայրը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (տառապանքով)։ Եւ մեղաւորն ես եմ, ա՜հ։

ՀՄԱՑԵԱԿ. Կարող է լինել աւելի մեծ ոճիր, քան ամեն օր, ամեն ժամ կաթիլ-կաթիլ թոյն ածել մանկական սրտերի մէջ, որոնք սպունգի նման ծծում են: Ասացէք, ո՞րն է աւելի մեծ յանցանք՝ զրկել նրանց հօրից թէ՞ պատրաստել նրանց համար մի դժբաղդ ապագայ և հասարակութեան համար բարոյական անդամալոյծներ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ընկճուած): Չգիտեմ. այդքանը հասկանալու ոյժ չունիմ:

ՀՄԱՑԵԱԿ. Թող այժմենից իսկ ընկնի ստի և փարիսեցիութեան քօղը, որով օրօրոցից արդէն կապում են մեր աչքերը: Երբ նրանք կհասունան, կեանքը կճանաչեն, կհասկանան, որ իմ արածը դաժանութիւն չէր իրանց վերաբերմամբ, այլ մի անխուսափելի տուրք յաւիտենական ճշմարտութեանը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Կհասկանա՞ն արդեօք: Մայրը նրանց փափուկ սրտերի մէջ կանուցանի խորին ատելութիւն դէպի ծեզ, դուք կդառնաք նրանց աչքում մի անսիրտ հրէշ, և նրանք երբէք, երբէք չեն ներիլ ծեզ ծեր արարքը:

ՀՄԱՑԵԱԿ. Օ՜, ո՛չ. մայրական կրթութիւնն այնքան զօրաւոր չէ, որքան ընդունուած է կարծել: Վաղ թէ ուշ նրանց ուղեղը կազատուի կապանքներից և կսկսի գործել ինքնուրոյն, ազատ: Ահա այն ժամանակ նրանք կհասկանան ինձ և կներեն: Չէ՞ որ կեանքը նրանց համար ևս դպրոց է դառնալու: Արմենուհի, եթէ ամուր է մեր սիրոյ կապը, եթէ առողջ է նրա սաղմը, պէտք է բաժանուենք մեր ամուսիններից, պէտք է խորտակենք կեղծ կապը և միանանք բնութեան օրհնուած կապով: Այս է պահանջում մեզնից ոչ միայն մեր փոխադարձ երջանկութիւնը, այլ և բոլոր նախապաշարումներից, բոլոր աւանդութիւններից ազատ ազնւութիւնը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իսկ ես կարծում եմ, որքան հեռու լինենք միմեանցից, այնքան յարգած կլինենք սիրոյ զգացումը և այնքան խորը կզգանք նրա մեծութիւնը։ Տարիներով երազած մի աշխարհ եմ ձեռք բերել։ Նա լի է անուշ բուրմունքով և հեռաւորութեան փշերը չեն, որ պիտի արգելեն ինձ վայելել այն։

ՀՄԱՑԵԱԿ. Դուք դեռ շարունակում էք երազել, տիկին, դուք դեռ չէք հասել այդ աշխարհը, այլապէս կշտապէք վայելել այն։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ծառը ուրախ, զարթ ու դեղեցիկ է իր ծաղիկներով ու կոկոններով, իսկ երբ նա բեռնաւորուում է պտուղներով, թեքւում է դէպի երկիր և տառապում։ Հեռու լինենք երկրից, Հմայեակ, և բարձր պահենք մեր զգացումները։

ՀՄԱՑԵԱԿ. Այդ է ուրեմն ձեր վերջին խօսքը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Առ այժմ, այո, ապագայի մասին պատասխանատու չեմ։

ՀՄԱՑԵԱԿ. Եւ պիտի բաժանւենք չմիացած։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պիտի բաժանւենք, հոգով աւելի ամուր կապւելու համար։

ՀՄԱՑԵԱԿ (տառապանքով)։ Ա՛հ, որքան միամիտ էի ես, որ երևակայում էի մի նոր կեանք, որքա՜ն խաբւած, որ մի կտրւած ծաղիկ չի կարելի մի ուրիշ բունի վրայ հաստատել։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (փաղաքշանքով)։ Մի՛ վշտանաք. այդ կրկնապատկում է իմ տառապանքը։ Մի՛ պահանջէք անկարելին, մենք միայն մեր սեփական կեանքերի վրայ ունինք իրաւունք և ոչ ուրիշների բաղդաւորութեան և պատուի։ Հեռացէ՛ք, նա ամեն վայրկեան կարող է գալ. ես չեմ ուզում ձեզ վտանգի ենթարկել։ Նա ատրճանակ ունի իր գրպանում։

ՀՄԱՑԵԱԿ. Աղաւաղում էք ձեր սքանչելի բնոյթը, որ այնքան համարձակ է և անկեղծ։ Փոքրիկից սարսափելով, դուք ուզում էք գործել մի մեծ յանցանք։ Ձեր զաւակը կունենայ հայր, իմ զաւակները կունենան մայր, իսկ մեր սէրը կմնայ կատարեալ որը, լքւած, անիծւած։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ո՛չ, նա միայն կմնայ անապական և սուրբ։

ՀՄԱՑԵԱԿ. Սէրը սիրահարների միութեամբ երբէք չի կարող ապականւել։ Այն միայն կկործանի ձեզ և ինձ, եթէ չմիանանք։ Մի՛ լինիք երկչոտ, եղէք բարձր ամբոխի բարոյական ցածր մակերևոյթից։ Արժիւը չի կարող և չպիտի ապրէ հաւաքնում։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՛խ, դուք ճնշումն էք գործ դնում ինձ վրայ, այդ լաւ չէ, լաւ չէ։

ՀՄԱՑԵԱԿ. Ես ունիմ իրաւունք մինչև անգամ բռնանալու, եթէ միայն ձեր սէրը սէր է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ապագան ցոյց կտայ, թէ որքան ամուր է այն։

ՀՄԱՑԵԱԿ. Ինձ համար չկայ ապագայ առանց ձեզ և ոչ մի օր, ոչ մի ժամ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երեխայ մի՛ լինիք. մտածեցէք։

ՀՄԱՑԵԱԿ. Ես այրել եմ այն կամուրջը, որով անցել եմ ձեզ հասնելու համար, ինձ համար դարձ չկայ։ Ահա՛, տեսէք։ (Հանում է մատից պսակի մատանին)։ Այս իմ ստրկական շղթայի վերջին օղակն է։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ի՞նչ էք ուզում անել։

ՀՄԱՑԵԱԿ. Շպրտել դէն։ (Ձգում է մատանին ձախ կողմը, հեռու)։ Ահա այդպէս, գնաց, ընկաւ ծորը։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Խելագա՞ր։

ՀՄԱՑԵԱԿ. Ես դէն ձգեցի այն բռնակալական կապը, որ կոչւում է ամուսնութիւն։ Բաւական է, որքան կրեցի այն՝ իբրև խորին վիրաւորանք անհատի ազատութեան։ (Մոտե-

նում է Արմենուհուն): Գնանք, հեռանանք, հեռանանք այս մի-
ջավայրից, ուր հինը խառնված է նորին և կազմել ստով
ստոգուած մի մթնոլորտ: Այնտեղ, հեռու երկրներում,
ուր մեզ չեն ճանաչում, մեզ սպասում է նոր կեանք,
անկախ, ազատ, հիմնուած բոլորովին այլ սկզբունքների
վրայ: Մի մոռանաք ձեր կոչումը, Արմենուհի՛, այդ յան-
ցանք է: Դուք դիտէք նւադել սքանչելի, դուք ստեղծուած
էք ազատ գեղարուեստի, ազատ սիրոյ համար: (Բռնում է
Արմենուհու ձեռը): Լսում էք, ձեզ կանչում է ճշմարտութեան
ձայնը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (կռուելով ինքն իր հետ): Ա՜խ, այդ ձայնը... Այն վա-
ղուց է ինձ կանչում:

ՀՄԱՑԵԱԿ. Հետևեցէ՛ք նրան, ուրեմն, այդ է ձեր կոչումը,
այդ է ձեր սուրբ պարտականութիւնն անգամ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Բայց ո՞ւր կտանի ինձ այն:

ՀՄԱՑԵԱԿ. Լաւագոյնը աշխարհներից — գեղարուեստների դը-
րախտը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Արժանի՞ եմ ես, արդեօք, այնտեղ ընդունելու:

ՀՄԱՑԵԱԿ. Աւելի քան արժանի էք, որովհետև դուք ունիք
աստուածային տուրք և մեծ տուրք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՜խ, այդ ամենքն ասում են, ամենքը, և ես
զգում եմ, որ ունիմ, զգում եմ մանկութիւնից — ահա՛ իմ
թշուառութեան աղբիւրը:

ՀՄԱՑԵԱԿ. Դէն ձգեցէք սնոտի երկիւղի և կեղծ ամօթի կա-
պանքները: Միայն մի քայլ, և դուք փրկուած էք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ոգևորուելով): Ասացէք, թո՞ղ կտան ինձ այնտեղ
նւադելու:

ՀՄԱՑԵԱԿ. Երբ կամենաք, որքան կամենաք և ինչ կամենաք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ (հետզհետէ ինքնամոռացութեան մէջ ընկնելով): Եւ ոչ
ոք չի խանգարիլ ինձ, ոչ մի ձայն, ոչ մի տրտունջ:

ՀՄԱՑԵԱԿ. Ոչ ոք, ոչինչ։

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Եւ ես կլինեմ այնտեղ արտիստների շրջանում։ Օհ, այդ իմ լաւագոյն երազն է։ Ինձ չեն արհամարհիլ։ Նրանք ինձ պատիւ կանեն արւեստների մասին հետս խօսելու։ Եւ ես այլևս չեմ լսիլ առևտուրի, շահ և. վնասի, մուրհակների ու մատեանների մասին։ Իմ յոգնած լսելիքն այլևս չի ընդունիլ համարակալի չխկչխկոցը։ Ա՛հ, տարէք ինձ, փախցրէք այստեղից, ես փափագում եմ այդ աշխարհում շնչել և ապրել։

ՀՄԱՑԵԱԿ. Աա՜, վերջապէս, դուք խօսեցիք ձեր բնական ձայնով։ (Գրկում է Արմենուհուն)։ Այժմ ես այլևս երկիւղ չունիմ։ Մենք տարանք յաղթանակը. մեր թշնամիները չեն կարող հրեւել։ Գնանք, շտապեցէ՛ք։ Ես արդէն ամեն ինչ պատրաստել եմ փախչելու համար։ (Մղում է Արմենուհուն բեմի խորքը)։ Ցիսուն քայլ հեռու, անտառի մօտ մեզ սպասում է մի կառք։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (ազատելով Հմայեակի գրկից)։ Բայց ոչ, սպասեցէք, հեռո՜ւ, ես խելագարւում եմ, հա՜յրս, զաւա՜կս։ Ո՛չ, ոչ ոչ։

ՏԵՍԻԼ XI.

Նոյնք, Սամսոն, Վիրգինէ, Եղիսաբէթ, Կոնստանդին և ծառաներ.

ՀՄԱՑԵԱԿ. Մի՛ թուլանաք, եկէք։ (Նորից գրկում է Արմենուհուն)։ Դուրս գանք այս երկաթէ ցանկապատից, և յաղթանակը մերն է։

ՎԻՐԳԻՆԷ (երևում է պատշգամբի մի ծայրում և արագ անցնում է միւս ծայրը)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ (նկատում է Վիրգինէին, ազատւում է նորից Հմայեակի գրկից և ճչում)։ Ա՜հ։

ՀՄԱՑԵԱԿ (*վախեցած*): **Ի՞նչ պատահեց։**

ԱՐՄԵՆՈՒՀԻ. **Զարհուրելի ուրուականը։ Փախի՛ր, եթէ չես ուզում կործանուել։**

ՍԱՄՍՈՆ (*բեմի յետևից բարձրաձայն*): **Աա՜...**

ՀՄԱՑԵԱԿ. **Մի քայլ անգամ չեմ անիլ առանց քեզ, թոռ զա՛յ։**

ՍԱՄՍՈՆ (*երևում է պատշգամբի վրայ, ձեռքին ատրճանակ: Խելակորոյս*): **Սրիկա՜յ։** (*Արագ-արագ իջնում է պարտիզակ*): **Ստացի՛ր քո պատիժը։** (*Ատրճանակը բարձրացնում է*):

(*Վիրգինէ, Կոնստանդին, Մելանիա, Գարեգին, Եղիսաբէթ միմեանց յետևից երևում են պատշգամբի վրայ*):

ՀՄԱՑԵԱԿ (*կանգ է առել աներկիւղ և նայում է Սամսոնին*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*ընկնելով Հմայեակի առաջ, ծածկում է նրան իր մարմնով*) **Առաջ ինձ, յետոյ նրան։**

ՍԱՄՍՈՆ. **Եւ քեզ, և՛ նրան։** (*Ուզում է ատրճանակը արձակել, չի կարողանում, թուլանում է*): **Ահ, չեմ կարող, չեմ կարող։** (*Ատրճանակը գցում է գետին: Տանջւում է: Քիչ լռութիւն: Խեղդւած ձայնով*): **Գնա՛ նրա հետ, ազատ ես։** (*Հեկեկում է*):

ԱՐՄԵՆՈՒՀԻ (*գրկում է Հմայեակին*):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր.

* * *

Անգիր և անյայտ և անլիշատակ
Ամայի դաշտում կայ մի գերեզման.
—Ո՞վ է հող դառնում այս լուռ քարի տակ,
—Ո՞վ է լաց եղել այս քարի վրան:

Համր քայլերով դարերն են անցնում,
Արտուտն է հնչում իր գովքը գարնան,
Շուրջը դաշտերն են ոսկեվառ ծրփում...
—Ո՞վ է երազել և սիրել նրան...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

---

* * *

Հեծկըլտող քամին, հեծկըլտող քամին,
Թևը վիրաւոր,
Եկաւ ու փարեց, եկաւ ու փարեց
Սրտիս վիրաւոր...

Ես բախտի բոյրին, ես բախտի բոյրին
Կարօտ մնացի.
Սիրոյ համբոյրին, սիրոյ համբոյրին
Մարաւ մնացի։

Օրրս լալագար, օրրս լալագար
Մանկուց սեւացաւ.
Ա՜խ, երազներիս, ա՜խ, երազներիս
Գարունը անցաւ...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

---

* * *

Գիշերը պատեց իմ դուռն ու երթիկ,
Եւ օրեր կանցնին ու չի լուսանայ.
—Իմ քնքուշ մանկիկ, իմ սիրուն մանկիկ,
Մի՛ դիպչիր սրտիս,—փշրուած է նա։

Իմ գլխին պայթեց բախտի գոռ մրրիկ
Ու տունս դարձուց տխուր, վերանայ.
—Իմ անուշ մանկիկ, իմ սիրուն մանկիկ
Մի՛ դիպչիր սրտիս,—փշրուած է նա։

Կուգան ու կերթան ճաճանչ ու ծաղիկ,
Ամ՛ս, միևնոյն է ինձ համար հիմա.
—Իմ քնքուշ մանկիկ, իմ երազ-մանկիկ,
Մի՛ դիպչիր սրտիս,—փշրուած է նա...

Ահ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

ԱՆՅԱՂԹ ԽԱԼԻՖԱՆ

Յաւէրժական Բաղդադում, խալիֆաների ալմաստէ գահի վրայ նստել էր մի երիտասարդ խալիֆայ։

Երեք անգամ օրհնւած լինի նրա մոռացւած անունը։

Հարուն Ալ-Ռաշիդի յաղթական սուրը, որի շողքից դողում էին ժողովուրդները Տաւրոսեան լեռներից մինչև Մսրայ դարբասները—նա ձեռք չառաւ։

Ազատ թողեց իշխանութեան սանձերը և յայտարարեց բոլոր հպատակներին.

— Թող ապրի ամեն մարդ, ինչպէս ուզում է, միայն թէ թողնէ, որ ուրիշն էլ ապրի։

Եւ հաւաքեց իր ոսկեղէն ֆէօշքում պետութեան մէջ ապրող ընտիր երգիչներին և նւագածուներին.—Թող երգեն և նւագեն, և զմրուխտէ հէքիաթներ հիւսեն...

Եւ խալիֆան գիշեր-ցերեկ լսում էր երգիչներին և նրա հոգին երաղական թևերով սաւառնում էր շքեղ հէքիաթների մէջ։

Իսկ ժողովուրդը ապրում էր գոհ և բաղդաւոր. աշխատում էր և օրհնում Թագաւորի կեանքը։

Եւ բուրաւէտ տարիները արշալոյսների պէս ոսկեվառւելով սահում էին Բաղդադի վրայից...

Եւ մի օր, երբ նա լսում էր նւագածուները՝ ներս ընկաւ սահմանապահ իշխանի մօտից մի սուրհանդակ և գուժեց.

— Մե՛ծ արքայ, թշնամին ներս խուժեց հարաւից և տիրեց Ձեր պետութեան մի ամբողջ նահանգին։

Լռութիւն տիրեց։

— Նրանք չեն կարող տիրել իմ պետութեան մի բուռն հողն անգամ, հանգիստ պատասխանեց խալիֆան, իսկ դուք շարունակեցէք նւագել։

Մի քանի օրից յետոյ եկաւ նորից մի գուժաբեր սուրհանդակ.

— Մե՛ծ խալիֆայ, թշնամին արշաւեց հիւսիսից և տիրեց մի ամբողջ նահանգին։

— Սուտ ես ասում, որոտաց խալիֆան, ոչ ոք չի կարող ոտք կոխել իմ պետութեան սահմանները, իսկ դուք նւագեցէք աւելի եռանդագին, դիմեց նա երաժիշտներին։

Եւ նւագում էին երաժիշտները և հիւսում էին զմրուխտէ հէքիաթներ, և խալիֆայի հոգին երազական թեւերով սաւառնում էր այդ շքեղ հէքիաթների մէջ։

Մի քանի օրից յետոյ եկաւ նորից մի գուժկան.

— Տէ՛ր արքայ, արևելքից մի իշխան եկաւ ահագին բանակով և գրաւեց մի քանի նահանգ. պատերազմ է յայտարարել նա քո պետութեան դէմ և յաղթանակով արշաւում է դէպի Բաղդադ...

Ի՜նչ խորին լռութիւն. նախարարները խոժոռ կանգնած՝ սպասում էին մարտական հրամանի. դուրսը, Քէօշքի պարիսպների տակ աղմկում էր ամբոխը և պատերազմ էր պահանջում։

Եւ անյողդողդ հանդգնութեամբ ասաց խալիֆան.

— Նւագեցէ՛ք, մի դադարէք, երբ դուք կդադարէք նւագելուց, այն ժամանակ կնւաճեի իմ պետութիւնը... Դուք նւագեցէք ձեր մարգարտահիւս երգերը, երբ ես լսում եմ մի շքեղ երգ՝ իմ պետութեան սահմանները լայնանում են, մեծանում

են և փուռում—տիրում անեզր հեռուները մինչև աշխարհի ծայրերը. թող ներս խուժեն իմ անմիտ թշնամիները. նրանք հողն են տենչում միայն. թող հողով լցեն նրանց ունայն հոգիները. իսկ իմ պետությունը—երգն է. և ոչ ոք չի կարող մտնել իմ հզոր պետության անառիկ, անծայր սահմանները. նվաղեցէ՛ք, յաւէրժ նվաղեցէ՛ք...

Իսկ յաջորդ օրը ապստամբ Բաղդադը գահընկէց արաւ խալիֆային և փոխարէն գահը նստեցրեց նրա եղբօրը, որը արիւնով և յաղթանակներով ծածկեց պետության սահմանները։

Սակայն յաւէրժապէս օրհնված լինի անյաղթ խալիֆայի մոռացված անունը...

Ա.Հ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

ԹՈՎԱՆՔ

(Անծանօթ Թրքուհիի մը)

Ո՞ւրկէ եկար դուն յանկարծ ճամբուս վրայ, չեմ գիտեր.
Կառախումբին ճիշտ քովի խցիկին մէջ տեսայ քեզ։
Իրիկուն էր. դաշտին մէջ, հորիզոնին վրայ, դեռ
Արևը կը տատամէր—յոգնած ճամբորդ ինծի պէս.
Ուրկէ եկար դուն յանկարծ ճամբուս վրայ, չեմ գիտեր։

Հմայքներու գոց սրուակ, ինչո՞ւ անցար դուն քովէս,
Խորհրդաւոր մարմինիդ գիծերը ճոխ ու ճկուն
Եւ սլացիկ հասակիդ ըմբոստացող գիծը վէս
Սև մետաքսի ծալէծալ խաւերուն մէջը թաքուն.
Հմայքներու գոց սրուակ, ինչո՞ւ անցար դուն քովէս։

Ես ի՞նչ տեսայ հուրիի քու կախարդող դիւթանքէդ.
Ո՛չ թաւիշը մորթիդ, ոչ քօղին տակէն հազիւ թէ
Ընդնշմարուող դէմքիդ, ոչ ալ աչքերուդ փայլը դէթ.
Ամբողջ գեղիդ սևի մէջ թաղուած, պահուած չէ՞ր միթէ.
Ես ի՞նչ տեսայ հուրիի քու կախարդող դիւթանքէդ։

Բայց տարիները անցան, քու թովանքըդ կ'ապրի դեռ.
Աղուորութեանըդ աննիւթ սարսուռն էր ան, որ բոլոր
Շղարշներուն, քօղերուն մէջէն ինծի հասած էր
Եւ հոգիիս խռովքներ կը վերարկէ մեղմօրօր։
Տարիները անցած են, քու թովանքըդ կապրի դեռ.
Ո՞ւրկէ եկար դուն լանկարծ ճամբուս վրայ, չեմ գիտեր...

ՓԱՅԼԱԿ.

ՉԵՄ ԿՐՆԱՐ

Հեռուն, դալար մարգերի
Եւ ջրերի անուշիկ
Համբոյր տալով կը փախչի
Վերջալոյսը գեղեցիկ։

Կ'ուզեմ թռչիլ, սլանալ
Ծոցը մարող արևին,
Բայց ափսոս որ չեմ կրնար
Նորա շողերն կը մարին։

Հեռուն, դալար մարգերի
Եւ լեռների աննման
Համբոյր տալով կը մարի
Վերջալոյսը իրիկուան։

ԱՐՍԷՆ-ԵՐԿԱԹ.

ԻՉՆԻԿԻ ԼԻՃԸ

(ՀԷՔԻԱԹ)

Ա.

Իչնիկի լիճին արևմուտքի եզրը շրջանակի մը պէս կլոր ու արծաթէ թելի մը պէս նրբին գիծով մը աչքի կուգայ։ Հիւսիսի ու հարաւի ափերուն վրայ դեղնող կնիւնները կը դադրեն ջուրին վրայ պղտորելէ, կամ գարնան թարմութիւններուն՝ կապոյտին վրայ կանանչ կապելէ։

Այդ ափին վրայ ազնուական աւազ մը կը քնանայ, տեղ տեղ ալիւրի պէս բարակ ու փափուկ, տեղ տեղ քար կտրած, երկանի կարծրութեամբ գետինը կաղապարելով։ Եզերքէն քիչ մը վար եղեգներու ոսկեբաշ անտառն է որ կը տոժկայ, մռայլ սպառնալից փսփսուքներով կանգնած կանանչ ջուրերուն վրայ։ Հովը վախնալով կը գլլի անոնց մազերուն մէջէն։ Մութ թաւիշէ, երկար օղակներով զրահուած շամբերուն ահարկու բանակը կը ծփայ յամրաբար, գորտերու երգին հետ համաչափելով կարծես իր շարժումը։

Եղդիւրի այս բարբարոս ու մռայլ տիրապետութիւնը

կ'երկննայ բաւական հեռուներ մինչև հերկուած բլուրներուն ոտքը, ուրկէ վեր տարտամ միջոցէն մեծնալով ու անուշնալով գոյն գոյն հատուածները կը տեսնուին այգիներուն, պարտէզներուն ու ցորեններուն։

Ու կը քալես։ Փիչ քիչ ճահիճը ափունքէն կը հեռանայ. կարճ, փշոտ թուփեր ճամբուն մէջ հոս հոն կը կենան փոշիով քօղուած կամ հեռուներէն փախչող երդերուն դեղին թաւիշովը զարդարուն։ Աջիդ ծովն է որ իր ջուրերը կ'օղակէ, տարօրինակ օձերու կռնակներ ուռեցնելով ափերն իվեր. ու վարը՝ աչքիդ առաջին չափ ջուրն է որ կը ճերմկի, կը դեղնի, կը կապուտնայ, փոխնիփոխ հազար գոյն հագնելով, ցերեկուան դալուկ արևներուկ տակ հրաշալի վերջալոյսներ ծաղկեցնելով իր երեսին վրայ։

Ու կը քալես։ Ճահիճները կը հալին, կը հատնին, գորտերուն երգը կը մեռնի. գաճաճ թուփերը կը կլորնան, կը լայնան, պզտիկ որբ մանուկի տխրութեամբ ծառիկներ կը դառնան, որոնց վրայ յաճախ ճայերու և մարթիներու ծիւնի պէս մաքուր մարմինը կուգայ քիչ մը ճերմակ դնելու. շատ անգամ ալ ագռաւներով սգաւոր կը դառնան։

Ու յանկարծ այս բոլորովին տափակ գետնին վրայ կը բուանին երեք բլուրներ, քով քովի դրուած. թևերնին իրարու դպած, իրարու ետևէ շարունակուելով։

Ճամբէն դէպ արևմուտք կորսուող շամբուտներէն վար դաշտը կը քաշուի երկար երկար. բլուրներէն անդին գետինը նորէն թուղթի պէս հարթ կը տարածուի երազկոտ. բայց չես հասկնար թէ լեռներէն այսքան հեռու, ծովուն այսքան մօտիկ, ետևէն ընդարձակ ու անտառատիպ ճահիճներով շրջանակուած այս բլուրները ուրտեղէն ինկած են հոս։

Ճամբուն մէջ ցրուած թուփիկները բլուրներուն վրայ կը

Թոփիկնան, ծառի մը պարոյրը կը գծեն միջոցին մէջ, գետնէն բարձրանալով քիչ քիչ, միշտ վախկոտ ելքով մը։

Ու հատիկ հատիկ՝ կլոր ծառերուն տակուանքը մանիշակի գոյնով, բայց մշտապէս ապրող ծաղիկի ծղօտներ կը դողդղան նիհար խոտերուն վրայ։ Փռնալները իրենց կուզկուռ ոտերուն գռուզ դալարէն կը կախեն, աւազներով մարգարտուած մարմանդը երբէք չի դեղներ հոն։

Ու բլուրները իրենց կողերէն անցք կուտան ջուրի յստակ թելի մը, որ չես տեսներ ինչպէս կը քակուի լիճէն, բայց որ ճահիճներուն արիւնը կը սեպուի։

Մէջտեղի բլուրին ոտքը, հողէն ներս մտած հսկայ քարայր մը կը մխայ շարունակ, կը մխայ, հովէն հալածուող քուլաներ իրար կ'անցնեն, իրարու կը պլլուին գրկուողներու տաքութեամբ։ Դէմդ, մեծ զանգուածով լեռը մուխի մէջ փաթթուած կը քաշուի դէպ վեր։

Ջուր-Ելածէն անդին ալ ծառները կը հալին բարակ մշուշի մը մէջ. բլուրներուն ալեկոծումը և շուքերուն տրտմութիւնը աչքերուդ ուժը կը կտրեն, կ'առնեն մինչև աւելի վերը, լեռան ճիշտ փորը, ուր հսկայ վէրքի մը պէս պատառուածք մը, Սայանը, կը դեղնի կանանչին վրայ։

Ու բլուրներուն վրայ կեցած կը հարցնեմ. ո՞վ բերած է ասոնք հոս։

Բ.

Ու քարայրի ձկնորսը պատմեց ինծի։

... Մենէ դարեր առաջ աս լիճը չի կար հոս։ Ջուրերուն բռնած տեղը կար քաղաք մը մեծ այնքան՝ որուն նմանը ալ արևը տեսնալիք չունի երկրի վրայ։

Լեռներուն փէշերէն, երկու եզերքի վրայ ծայը կ'առնէին

տուները. մեծ, ճերմակ, խաս մարմարէ։ Ամէն տուն իր պարտէզն ունէր հորովն ու արիշովը։

Ու քաղաքին մէջտեղէն կ՚անցնէր գետը, հարուստ ու յրատակ։ Անոր ջուրերը անուշ էին զարունի անծրևին նման ու բարի։ Ջուրի աղջիկներ ալիքներուն իվար կռնակի վրայ կը քնանային։

Հարաւի լեռան, Սօղուճախի մէկ բազուկը կը մտնէր քաղաքէն ներս. ու այդ բազուկին տակ ու անոր մէջ չենք գիտեր, ի՞նչպէս, շինուած էր Արև—Աղջիկին պալատը։

Պալատը կռնակէն՝ փակած էր ապառաժին. ոտքերը, դարձել քարէ՝ կը նստէին շատ խորունկները. ջուրերու ակերուն վրայ որոնք երբէք լոյս չի տեսան ու պիտի չի տեսնին ալ։

Պալատը մեծ էր, շատ մեծ. ամէն մէկ պատուհանէ լուծք մը գոմէշ կրնար առանց նեղուելու ներս մտնել։ Դռները թերթուած, տաշուած լեռան երեսէ էին, նիգերուն տեղը թռչուններ բոյն կը լարէին, այնքան քիչ կը բացուէին։ Ու կաթի ճերմակ մը կը լողար լման շէնքին վրայ. իրկուններուն ու առտուներուն արիւնի բարակ հոսանքներ ծիրանի մը դնէին անոր վրայ, շուտ անցնող ծիածանում մը կը թրթռար քարերն իվար ու քարերն իվեր, պատուհաններուն ընդմէջէն մոխիր դառնալով։

Ներսը մարդ մտած չունէր։ Մենակ աղջիկը կը տեսնէին իր պատշգամին վրայ ճառագայթող երեսներով։ Անոր աչքերէն կայծակներ կը փախէին, պռունքներէն նուռ կը կաթէր, մազերէն լոյս, ծովի պէս լոյս կը վազէր։ Մէկը չէր գիտեր, ամպերը ծգած էին թէ լեռը ծնած էր անի։

Անոր համբաւն ու անունը լեռներն ու ծովերը չափած անցած էին։ Շատ հսկաներ, էժտահարի պէս իկիտներ ճամբայ էին ընկած անի տեսնալու համար։

Աղջիկը սիրտ ունէր թէ ոչ. յայտնի չէ։ Մինակ շատ կը սիրէր պալատին առջև փլած հսկաներուն տաքուկ, արիւնոտ սիրտը որ հում հում կ'ուտէր. դիակնին թողելով դռան նիգերուն փորուածքին մէջ ծաղ նստող ագռաւներուն։

Ու սարսափը կը քալէր անոր համբաւին ետևէն։

Հսկաները, որոնք շատ վարերէ կը փրթէին, պալատին մօտենալու համար ստիպուած էին գետէն անցնել։ Հոն կը կռուէին ջուրի աղջիկներուն հետ որոնք իրենց հոլանի միսերուն տարօրինակ համովը կը գինովցնէին ամէհի քաջերը, կը քնացնէին ու կը քաշէին վար անդունդներու մէջ...

Աւելի կորովիները կը փետտէին ծիւն բազուկներու այդ ցանցը, ծիծի ալիքներուն շղթայող թուլութիւնը, ու երբ ոտքերնին փակցնէին դէմի ափին, հողը կը փախէր անոնց առջևէն, հողը խմոր կը դառնար ու հսկաներուն հաստ մարմինը բեւեռուած կը մնար լոյծ տիղմին մէջ, որ հեռուէն կանանչ կախարդանք մը ցոյց կուտար դիտողներուն։

Էժտահարի չափ ուժով մարդը ճանճի նման կը թապլկէր այդ նենգող ափերուն վրայ։ Իր մռնչիւնէն պատուհան կուգար աղջիկը. խարդախ, մարդուն ժուժը ոսկորին մէջ եփելու ուժ ունեցող ժպիտով մը։

Ու երբ մարդը դամուած մնար իր գերեզմանին մէջ, թևերն ալ ծիւթ հողին տակ անքակօրէն կապուած ու դերի, կրսեն թէ աղջիկը կ'իջնէր վար։ Ծեր դուռները ճարճատիւնով կը դառնային ծխնիներուն վրայ. ագռաւները թափ կուտային թևերնուն, բաբախուն սև ամպ մը կթրթռար աղջիկին ետևէն որ անծայն նոյն կապող խնդալն երեսին՝ կուգար ոսկի դանկով մը ողջ հսկային կուրծքը կը ճեղքէր, կ'առնէր սիրտը ուր արիւնը դեռ կը խժար. կը տանէր ռունգերուն, ետքը բերնին ու մազերուն ոսկի պատմուճանովը գոցելով իր աչքերուն վայրագ ուրախութիւնը՝ կը ծծէր պուտ պուտ կեանքի հեղուկը, կը

ծծէր այնչափ որ լակած կոկով մը դառնար սիրտը, ետքը կուլ կուտար...

Աղռաւները իրենց ծագերով կ'անցնէին միսերը մաքրելու քանի մը ժամէն հսկայէն կը մնար կարմիրով օծուն ոսկորներու ահարկու և այլանդակ զանգուած մը, կմախք մը կատարել, որ քանի մը օրէն կը ճերմակնար ու կանանչ բակին մէջ կը մնար տարիներ, մինչև որ օր մը ալիւր դարձած՝ հալէր ու գետին լցուէր։

Եկող հսկաներուն կը պատմուէին բոլոր այս բաները։ Դիմացի ափին վրայ տարտամօրէն նշմարուող կանանչին մէջ ճերմակ ստուերներու, վարուած կմախքներու մեռած հսկումը մտածել կուտար իկիտներուն։ Բայց պատշգամի Աղջիկին լոյսերն այնքան անուշ, աղուորութիւնը այնքան ողողող էր որ վարանքը կը փախէր քաջերուն մտքէն, ջուրը կը նետուէին խենդեցած ու գինով։

Օր մը ալ խոշոր հսկայ մը յայտնուեցաւ։

Վարի աշխարհքէն էր ելեր կարծես, այնչափ բարձր ու սև էր ան։ Իր պատմածին նայելով վեց եղբայրներն ալ եկած էին այդ աղջիկին համար ու ալ ետ չ'դարձած։ Պալատին դէմ, գետի ափին կեցաւ ան։

Իր հասակը այնքան բարձր էր որ կրցաւ տեսնել կանանչ մարմանդին վրայ խարսխուած կմախքներուն ճերմակ գերեզմանը։ Ոսկորները թնդացին իր միսին մէջ երբ ճանչցաւ հոգիով իր եղբայրներուն կմախքները որոնք իրար ետևէ շարուած կը սպասէին։ Իրմէն անմիջապէս առաջ եկողը դռան հասնելու քիչ էր թողած։

Տխուր էր շատ տեսարանը։ Իրենց սերունդը հոդ այդպէս արձանացած՝ զոհ էր եղած այդ խարդախ աղջիկին։ Ոսկորներուն վրայ մլիկ մլիկ լոյսեր կը դողային, երբեմն երբեմն մէկէն միւսը անցնելով։ Հեռաւորութեան մէջ լոյսերու այդ երթևեկը

տեսակ մը կեանք կը ստեղծէր կմախքներուն շուրջը և հսկային ծուծին մէջ անտես երակներ այրելէն ուղեղը կը գանէին։ Գոյն գոյն ցոլքեր, արիւնոտ ու կանանչ մանաւանդ՝ գետին վրայ մինչև կ'երկննային։

Եղբայրութեան կապերը շուտով խելքը թռցուցին հսկային։ Ճիշտ նոյն պահուն պաշտպամին վրայ ծագեց աղջիկը ու անոր նայուածքը կրակէ ջուրի պէս ինկաւ հսկային սիրտը։ Հմայքն էր թէ վրէժն էր իր մէջը արթնցողը, ստոյգ չի գիտցուիր։ Հսկան ջուրը նետուեցաւ։

Շուտով ոտքերը կտրեցան գետնէն և պղտոր, գալարուն ալիքներուն վրայ ծաղկեցան սպիտակ միսերու, կնկան միսերու հրաշալի կլորութիւններ։ Անոնք կուգային իրենց ծիծերը կախել հսկային լողացող բաղուկներուն վրայ. կամ իրենց պորտին թրթռուն հեշտութիւնովը գինովցնել անոր աչքերը։ Շատ էին այդ աղջիկները ու գետը անոնց մազերուն տակ ոսկի ալիքներ կը գլլէր։ Բայց հսկան ուժով էր և միտքը մեծ։

Անդունդներուն վրայ պահ մը դարձաւ. քանի մը հեզ աղջիկներուն փետուրէ ծանրութիւնը իրեն յաղթելու պէս եղաւ, բայց կախարդանքը թէ վրէ՞ժը չի գիտցուիր, սիրտ տուաւ անոր, քակեց ելաւ ջուրէն։

Հողը կը փախէր ոտքերուն տակ, կը փախէր կամաց կամաց շոյելով իր ներբանը։

Աչ ու ձախ չոր, խարդած գանկերէն կոյր աչքի փոսեր սոսկում կը պարպէին կանանչին վրայ։ Կուրծքի լայն վանդակներուն լարուածքը դեռ իր պարոյրը կը պահէր։ Նորեր, հիներ, մեծեր, պզտիկներ, բոլոր կմախքները ցցուած էին միօրինակ սեւեռումի մը մէջ։ Կմախքներուն մօտիկ կանանչը քիչ մը նուաղուն էր և նուազ, ատոր տեղ կարմիր ծաղիկներ ազդրերն իվեր բարակուկ բարակուկ կը կենային։

Ագռաւները իրենց սև կառաչը թող տուին։ Միւս կողմ-

մէն, պատուհաններուն ներսերէն ճառագայթումը շատցաւ. լոյսը լեցուց ու ալեկոծեց առաստաղներուն մարմարէ մաքրութիւնը ու պատշգամն իվար Աղջիկը ժռեցաւ, լոյս ու բոց թոթուելով իր ծիծերէն ու պորտէն...

Այս տեսիլքէն ետքը հողը կը դաւէր։ Հսկան իր հասակին բարձրութեանը վստահած քալեց որչափ կրցաւ, թևերը վեր բռնած։ Բայց տիղմը կը քաշէր անի. կը քաշէր այնքան ծանր ու բռնի որ հսկան կը կարծէր թէ իր ուսերուն վրայ լեռներ են նստեր։

Հողը կուլ տուաւ անոր լման իրանը։ Դուռը ալ մօտ էր, շատ մօտ։ Ու ապառաժէ դռան առջև երբ վերջին թափով մը նետեց թևերը քարը բռնելու համար, ինչպէս եղաւ, քարը փախաւ թէ հողը կապեց, թևերն ընկան կանանչին ու մնացին...

Աղջիկն եկաւ։ Ոսկի դանակը ափին պահ մը նայեցաւ այդ ողջ աչքերուն խորունկը ու յետոյ մի ոտքը դուռին մէջ միւսը կանանչին վրայ որ կարծես կը պաշնէր անի, բացաւ սիրտը։

Խոշոր էր ան ու արիւնը սև. կտրած արիւն մըն էր, տարակարգ համով մը։ Ծծեց, ծծեց, ծծեց... իր հաճոյքը այնքան սաստիկ եղաւ որ փոխանակ սիրտը կուլ տալու, վեր տարաւ, պատշգամը և կանանչ կրակներու վրայ դրաւ եփելու համար։

Բայց այդ սիրտը հալեցաւ. կարմիր շոգիի փոխուած թռաւ օդին մէջ ու աներևոյթ եղաւ։

Քաղաքը այն օրը օդին մէջ ճամբորդող արիւնի մուխեր տեսաւ և վախցաւ։

Գ.

Անանկ հսկայ տակաւին քաղաքը չէր ճանչցած։ Հազար տարի ապրողներուն սերունդն անգամ հիացաւ նոր եկողին արտակարգ հասակին վրայ։ Է՛ն մեծ սօսերուն քով շուք կուտար։

Ու քաղաքը իրար անցաւ.—Եօթը կտրիճներուն պապն էր եկողը։ Արիւնոտ մուխերը գացած անոր ըսած էին զարհուրելի ոճիրը ու պապը իր աղիքներուն մէջ կտրուած՝ ճամբայ էր ինկեր վրէժի անդառնալի երդումով։

Իր օրերը անցած էին։ Փիր մօրուքով այդ հսկան մոռցած ըլլալու էր կնկան մը երեսէն ցաթող բաներուն փափկութիւնը։ Կարմիր մուխերը անոր արիւնին մէջ այնքան բոց դրած էին որ կարելի չէր ենթադրել թէ կնիկ է մը բղխող համն ու սարսուռները պիտի ցնցէին իր սիրտը։

Պապը լացաւ երբ գետի ափին հեռուէն տեսաւ իր եօթ զաւկրներուն ճերմակ կմախքները. լացաւ ու իր աչքերէն առուներ ինկան գետին։ Իր սաստիկ ցաւին մէջ սակայն փորձութիւնը չունեցաւ գետէն անցնելու։ Աւելորդ յոգնութիւն մըն էր աղի։

Ու վայրկենական կատաղութեան մը մէջ երկնցաւ լեռան ծոցը խնդացող բլուրին, բռնեց տակի ժայռէն ու ցաւի սպաննող տագնապի մը մէջ փետտեց բլուրը և նետեց գետին մէջ։

Գետը կեցաւ։ Ջուրերը ետ ետ գացին։ Ափէն բարձրանալով կոխեցին կանանչ պարտէզը և պալատին դուռը թրջեցին։ Աղջիկը պատշգամին վրայէն իր կապող ժպիտովը կ՚ուզէր կախարդել այս խենդ վրիժառուն։

Բլուրը բաւական խոշոր էր, բայց գետն ալ հարուստ էր. պահ մը ետքը կեցող ջուրերը սկսան բլուրին կողերն իվար իրենց աւազանը սողալ։ Գետը քանի մը ժամէն կուտէր այդ բլուրը։

Հսկան աճապարեց. ուրիշ լեռ մըն ալ շալկելով բերաւ դրաւ առաջինին քով. յետոյ երրորդ մըն ալ։ Ամբողջ գետը կապուած էր։ Ջուրերը առջևէն շղթայուած տարածուեցան դէպ ետ. քաղաքը օրուան մը մէջ թաղուեցաւ. ջուրը պալատին պատուհաններէն ալ ներս մտաւ։

Դեռ պատշգամին վրայ ահաբեկ աղջիկը իր դիւթանքը կը թափէր այդ ծերունի հօր վրայ, որ անտարբեր կը սպասէր պալատին կլլուելուն։

Բայց Սողուճախը բարձր է. ու պալատն ալ դեռ կէս տեղէն վեր զերծ էր ջուրէն։

Գետը բլուրներուն փէշերէն քամուել էր առեր։ Հսկան հասկցաւ թէ եթէ այդպէս թողուր, իր շինած ծովը կը փլէր ու աղջիկը կ'ազատէր։ Շուտով մը աւլեց լեռներուն վրայի կաղնիներն ու սօսիները, թուրթի ճիւղերու պէս կոտրտեց անոնց բունները, խոտերն ու տերևները իրար հիւսեց ու կոխեց բլուրներուն կողերուն վրայ։ Փխրուն լեռ մըն ալ թափթփելէն բերաւ կործեց անոնց վրայ։

Ջուրը դանկի պէս կտրեցաւ։ Ու ջուրը լայնցաւ, լայնցաւ դէպ առաջ, յետոյ պօյին տուաւ. չափուեցաւ Սողուճախին հետ։ Հեռուն Պաշ-Քերազի ծիւնազարդ գագաթը կար։ Ու ջուրը ելաւ, ելաւ, պալատին պատշգամն ալ գտաւ, աղջիկը վերջին վայրկեան մըն ալ դողդողաց իր լոյսերուն մէջ, ետքէն ջուրերը գրկեցին անոր բոցէ միսը. մաղերը լարուեցան փրփրած ալիքներուն վրայ, ու կամաց կամաց իջաւ վար դէպ կմախքներու պարտէզը։

Քաղաքը կորած էր։ Բայց պալատն ալ աներևոյթ եղած։ Ու երկու լեռներուն մէջտեղի բարի հովիտը դարձաւ հիմակուան աղուոր ծովը։

Հսկան, ինքն ալ մտաւ ջուրերուն տակ հանգիստ սիրտով պառկեցաւ։

Դ.

Աւլուած բլուրներուն վրայ կեցած կը նայիմ քիչ մը հեռուն քէնոտած Սօղուճախին ու ետիս ճահիճներուն դեղին անտառին։ Ինծի այնպէս կուգայ թէ լեռան տակէն մինչև բլուրները պապ հսկային շալկած լեռներէն թափուած հողն է որ կը պարսպէ ծովն ու ճահիճը։

Դիմացիս Սայանի վէրքն ալ հէքիաթը կը լրացնէ իր ահագին փոսովը։ Այդ փորուածքէն քանի բլուրներ կրնան առնուիլ։

Ու ծկնորսը կ'աւելցրնէ.

— «Աղջիկը շատ անգամ կը տեսնեն մերերը. նաւակին ծփանքին ետևէն կաթի պէս իր մարմինը կը փախչի ու կը խաթէ. վա՜յը անոր որ պարտէզին մօտերը չի գիտնալով լողալ կ'երթայ։ Ամեն տարի իր սիրածը կը փոխէ ան, գեղացի տղոց էն լեցունկները քաշելով ջուրին տակ։

«Բայց հսկային ծայնը 30-40 տարին անգամ մը միայն մէջտեղ կ'ելլէ»։

— «Երբ սա ջուրի թելիկը կտորիկ մը հաստրնայ (ցուցնելով բլուրներուն կողերէն քամուող ջուրիկը), հսկան վախուն դուրս կ'ելլէ, կը քննէ բլուրներուն դիմացկունութիւնը, ճահիճներուն պարարտութեան վրայ աչք մը նետելով տրտում,

տխուր կը քաշուի վար իր խորունկ հառաչանքը երեք անգամ կրկնելով»։

Ու իրաւ ալ, երբ ջուրերը հարուստնան լիճին մէջ ու եզերքի շամբուտները թաղուին մինչև իրենց օղակները, իրկունները անորոշ ատեն, որոտումի պէս ծայն մը կ՚ելլայ ջուրերուն խորունկէն սաստիկ՝ այնքան որ ծառերը կը դողան ու եղեգները կ՚ալեկոծեն, կը կրկնուի երեք անգամ ու յետոյ կը դադրի։

ՅԱԿՈԲ ՔԻՒՖԷՃԵԱՆ.

ԿՐԱԿՆ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Կրակն այս գիշեր վառ պահենք, ընկեր.
Սև արհաւիրքի և խորունկ ահի
Շնչով է հևում հողմը ամեհի
Ու ոռնում թաղման սգալի երգեր։

Մեր դուռը, գուցէ, այսօր էլ խրփեն,
Նւաղած ձայնով աղերսեն հանգիստ։
Խաւարը դրսում շատ է խորանիստ.
Շատերն այս գիշեր պիտի խարխափեն...

Կաց. հեռուից ոտքի ձայներ են գալիս...
Լսում ես՝ հնչեց զսպած հեկեկանք,
Սրտի խորքերից թռաւ հառաչանք.
Եւ հողմը մէկտեղ ոռնում է, լալիս...

Խաւարի առաջ դուռն ենք բաց անում
Ու կանչում շէմքից.—Նե՛րս մտիր, եղբա՛յր.
Արի՛՝ ամոքենք քո վիշտը անծայր.
Թող պնդուի ոգիդ մեր օթևանում...

ՍԻՄ. ԲԱԲԻԵԱՆ.

BERCEUSE

Գիշերն անյոյս հառաչեց...
Քընի՛ր, զաւա՜կ քաղցրանուշ.
Դուրսը քամին շառաչեց,
Դուրսը բազմեց պա՜ղ մրշուշ։

Ի՞նչ ես սոսկում դու այնքան,
Հոգիդ ահով մրշուշած.
Օրո՜ր, զաւակ սիրական,
Այն ուռենին խրշխրշաց։

Թո՛ղ մահերգակ ցուրտ քամին
Տրտում նրւագ ոլորէ.
Քեզ խուլ աշնան այս ժամին
Գարնան երազ կօրօրէ։

Քեզ կրժպտայ լոյս եթեր
Հոգուդ պէս ջինջ ու պայծառ.
Բոյր կրշնչեն քեզ վարդեր,
Քեզ հով կանեն թռուփ ու ծառ։

Ու եթերից քո վրայ
Կիջնեն, կիջնեն սուրբ յուշեր.
Իսկ ցուրտ քամին կըսուրայ
Դէպի թախիծ ու գիշեր։

Քանի քո մէջ չէ կաթած
Վշտի սև թոյն, իմ անուշ,
Քընիր... Քամին հեծկլտաց.
Օրօր... Բազմեց պաղ մըշուշ...

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ.

ՍՊԵՂԱՆԻՆ

«Ինչ մեծ բաժին որ ունի սէրը՝ գրականութեան մէջ, եթէ փոխադարձաբար գրականութիւնն ալ նոյնչափ կարևորութիւն ունենար սիրոյ մէջ, գրագէտները աշխարհի երջանկագոյն արարածները կ'ըլլային»:

Տիրան Վիրապեան, երեսուն տարեկանին, արդէն համբաւաւոր գրագէտ մըն էր։ Տակաւին պատանեկան շրջանին մէջ, արտադրեց բանաստեղծութիւններու իր առաջին հատորը, որ ուշադրութիւն գրաւեց։ Յետոյ սկսաւ արձակ գրութիւններ հրատարակել օրուան գրական հանդէսներուն մէջ, որոնք կատարեալ քերթուածներ էին նորէն, բնութեան ու գեղեցիկին նուիրուած։ Տարիներու հետ իր արձակն ալ հասունցաւ, կատարելագործուեցաւ ու աւելի իրական կեանքի ուսումնասիրութիւններու շուրջը դառնալ սկսաւ. նորավէպեր գրեց, սիրային արկածներու մասնագէտ նկարիչը եղաւ, իրապաշտ էջեր արտադրեց. բայց իր ոճը պահեց միշտ իր առաջին օրերու խանդոտ, զգայուն, բանաստեղծական երանգը, որով աւելի նուրբ ու աւելի գրաւիչ հանդիսացաւ։ Հիմա, ան կը մտածէր երկարաշունչ վէպի մը՝ ուր իր բոլոր նախասիրութիւնները ու

կարողութիւնները պիտի երևան գային։ Իր հիացողները, անգաղտնապահութեան մը շնորհիւ իմացած էին այդ մտադրութիւնը և անհամբեր կը սպասէին անոր իրականացումին։ Շքեղ բան մը պիտի ըլլար ան ապահովաբար, երիտասարդ բանաստեղծ-վիպագիրին դիւթիչ գրիչին տակ։ Բայց ան բծախնդիր էր շատ ու կը վարանէր սկսնակի մը պէս, վախնալով մանը յուսախաբութենէ մը որ կրնար զինքը զգետնել ու ոչինչ արտադրելու անկարող դարձնել անկէ վերջը։ Կ'ուզէր որ անթերի բան մը ըլլար ան, նիւթի, ոճի, ուսումնասիրութեան ու զգացումի տեսակէտներով։ Իր առաջին այդ ընդարձակ գործը կ'ուզէր որ արդէն ըլլար գլուխ գործոց մը։ Բնական էր ուրեմն որ, պիտի վարանէր, որչափ ալ վստահ ըլլար ինքզինքին վրայ, իր գրական կարողութիւններուն, իր տաղանդին վրայ։

Վիրապեան՝ Բերա կը բնակէր, աղջիկ մնացած իր ծերունի մօրաքրոջը հետ, առանձին յարկաբաժինի մը մէջ։ Մայրը շատ կանուխէն մեռած էր, անանկ որ, ինք շատ քիչ բան կը յիշէր մայրական գուրգուրանքէն ու քաղցրութենէն, թէև այդ քիչին կարօտը իսկ բաւական եղած էր, իր գրիչին տալու, ամենից անուշ ու մելամաղձոտ շեշտերն ու թրթռումները։ Զափահաս եղած էր արդէն, երբ հայրն ալ ինքնասպան եղաւ, կնոջական չես գիտեր ինչ մութ խնդիրի մը մէջ, տղուն ծգելով հանգիստ ապրելու չափ եկամուտ մը։ Ու տասը տարիէ իվեր, իր բարի մօրաքրոջը հետ առանձնացած կ'ապրէր Շիշլիի այդ հեռաւոր ու բարձրահայեաց մենարանին մէջ, խոկալով, երազելով, կարդալով, գրելով, իր ամենէն սիրած բաներով միայն զբաղելով։ Հազիւ մէկ քանի նախկին ընկերներ ու հիացող բարեկամներ կ'ընդունէր տունը և ինք ալ երբեմն կ'երթար ման գալ, իրիկունները, քաղաքէն դուրս, ամայի անկիւններ, անոնցմէ դիտելու ու զմայլելու համար կապոյտ Վոսփորին ու

մեծվայելուչ բնութեան զմայլելի տեսարաններուն վրայ։

Ինքը, հակառակ սիրային պատմուածքներու նախասիրող հեղինակ մը ըլլալուն, զգուշացող մըն էր կիներէն ու անոնց հրապոյրներէն։ Ժառանգական դիւրութիւն մը ունէր խելայեղօրէն խանդավառուելու ամեն գեղեցիկ բաներէն, հետևաբար և կիներու հրապոյրներէն. բայց իր հօրը դժբախտ վախճանը անջնջելի տպաւորութիւն մը ըրած էր իր պատանի երևակայութեանը վրայ, անանկ որ, այդ դժբախտութեան իսկ արդիւնքը եղող իր կանխահաս զգուշաւորութիւնը, եթէ թումբ կանգնած չըլլար իր երիտասարդական խօլ թռիչներուն ու բաղձանքներուն, ինք ալ շատոնց կորսուած կ'ըլլար, ինչպէս իր ընտանիքին մէջ եղած էին ուրիշներ ալ, հօրմէն զատ, աւելի կամ պակաս նմանօրինակ պարագաներու մէջ փճացած։ Անշուշտ սկիզբները ունեցած էր մէկ քանի աննշան ամուրէթներ, սիրաբանութիւններ, որոնք արդէն, իրենց աննշանութեանը իսկ պատճառով, իրենց մէջ չէին պարունակեր Վիրապեանը դիւթելու, կապելու, խելայեղելու կարող տուիքները։ Խորունկ սէր մը, տրուած ըլլալով իր բուռն զգայնականութիւնը, նախանձոտ անձնասիրութիւնը ու եղերական խառնուածքը, կրնար աղէտալի ըլլալ, երազներով ապրող այդ բանաստեղծին համար, եթէ իր դէմը չելլար հաղուագիւտ այն էակներէն մին, որ իրենց ամեն նախասիրութիւնները գիտակցաբար կը զոհեն դիմացինին երջանկութիւնը ապահովելու համար։

Բազմաթիւ թախանձանքներու վրայ, Տիրան՝ օր մը, իր ամենէն աւելի հիացողներէն մէկուն տունը գնաց, ուր աչքէ պիտի անցընէր այդ պարոնին գրութիւնները և իր կարծիքը պիտի յայտնէր անոնց մասին։ Հոն հասած վայրկեանին իսկ զղջաց գալուն, ինչու որ, երբ ընկերոջը հետ մտաւ, այս վերջինին աշխատութեան սենեակը, ամերիկեան գեղակերտ գրասեղանին առջև, գեռատի ու հիանալի գեղեցկութեամբ խար-

տիշուհի մը նստած նամակ կը գրէր. պարոնին քոյրն էր, հազիւ քսան տարու, երեք տարի առաջ ամուսնացած և տարի մը առաջ այրիացած. մարմինին փակած սև շրջազգեստը, պարանոցին ու թևերուն շուրջը ճերմակ նեղ ժանեակէ մանեակներով, զմայլելիօրէն վայլած էր պերճ հասակին և կը ցայտեցնէր մորթին ճերմակ-վարդագոյն փայլը։ Իրենց մէկէնիմէկ ներս մտնալուն վրայ, քիչ մը աւելի շիկնած ու շփոթած, ոտքի ելաւ ան ու գլխու թեթև շարժումով մը պատասխանեց նորեկին բարևին։ Բայց Վիրապեան, շփոթած ըլլալէ աւելի, սրտնեղած երևոյթ մը առած էր, կարծես ժուղակի մը մէջ ինկած ու ետ դառնալու փափաքներով տոչորող մէկու մը դրժգոհ երևոյթը։ Տարակոյս չիկայ սակայն որ, տիկին Շաքարեանի հոն ներկայութիւնը բոլորովին դիպուածական բան մըն էր, քանի որ, իր հոն երթալիքը ինքն իսկ չէր գիտեր դեռ առտուն, և իր լաւ տրամադրուած մէկ վայրկեանին, փողոցը հանդիպելով իր բարեկամին, անակնկալ կերպով վերջապէս ուզած էր գոհացում տալ անոր։ Ասով հանդերձ, ներկայացուցեցան իրարու։ Տիկինը շուտով գտաւ ինքզինքը և եկաւ սրտագին թօթուել բանաստեղծին ձեռքը, իր հիացումները յայտնելով։ Վիրապեան, որ քաղաքավար ու կնամեծար էր հակառակ ամեն բանի, շնորհակալ եղաւ և ցաւ յայտնեց զինքը անհանգիստ ընելուն համար։ Տիկին Շաքարեան՝ ոչ միայն անհանգիստ չըլլալը պնդեց, այլ նոյնիսկ հաստատեց որ, ուրախ պիտի ըլլար եթէ ինք ալ ներկայ գտնուէր, եղբօրը հետ ըլլալիք գրական խորհրդակցութեան։ Կարելի չէր մերժել։ Եւ երկարօրէն մնացին հոն, մինչև արևմուտ, մինչև մութ, սկսնակը՝ կարդալով իր գրութիւնները, բանաստեղծը մտիկ ընելով ու երբեմն դիտողութիւններ ներկայացնելով, ու տիկին Շաքարեան՝ իր խոշոր կապոյտ աչքերը յառած՝ Վիրապեանի դէմքին ու անոր արտայայտութիւններուն։ Փոխադարձաբար, բանաստեղծին մե-

լամաղծոտ աչքերն ալ, կարծես հմայուած, երբեմն ակամայ կը դառնային իրենց յառած լոյսի ու քաղցրութեան այդ աղբիւրներուն ու կ'ըմպէին անոնց բովանդակ մոգութիւնը ու պըչրանքը։

Ալ չի պիտի պատմեմ թէ ինչպէս, կրկնուեցան ու բազմապատկուեցան տեսութեան նմանօրինակ առիթները, թէ ինչպէս, միասին բանաստեղծութիւններ կարդալէ վերջը, Վիրապեան ու տիկին Շաքարեան, օր մը ալ ինքնաբերաբար սկսան սիրային գաղտնի թղթակցութեան մը՝ որ ամբողջ յորդում մը էր երկուստեք բանաստեղծութեան ու յուզմունքի, և թէ ինչպէս, յանգեցան վերջապէս, տունէն դուրս, յաճախ Պօլսէն ալ դուրս, հեռաւոր արուարձաններու ու գիւղերու մէջ ժամադրութիւններու, ժամանցներու, պտոյտներու, գիշերային իսկ հսկումներու ու սիրարբուքներու։ Անհասանելի, ապշեցուցիչ ու խելայեղ բան մը էր այդ սէրը, միտքով ու խանդով հոյակապ այդ տղուն ու մարմնով ու հրապոյրով ոչ նուազ հոյակապ այդ կնոջ միջև։ Վիրապեան աշխարհը մոռցած, անծնատուր եղած էր այդ կնոջ զոր հրեշտակ մը կը դաւանէր։ Տիկին Շաքարեան՝ զինքը յուսախաբ ըրած ծերուկ ամուսինէն ծերբազատուած, իր մեղրալուսինն էր որ կ'ապրէր այդ հազուագիւտ արժանիքներով երիտասարդին մօտ։ Եւ այդ՝ ամիսներ տևեց։ Առաջին օրերուն, խեղճ մօրաքոյրը, ի՞նչ սրտադողեր, ի՞նչ մտահոգութիւններ ունեցաւ, իր քեռորդիին նորօրինակութիւններուն ու բացակայութիւններուն հանդէպ. ի՞նչ վախեր, ի՞նչ իրարանցումներ, երբ գիւղացնացութեան պատրուակին տակ այդ բացակայութիւնները, կ'երկարէին քիչ մը չափէն աւելի։ Բայց հետզհետէ հանդարտեր, վարժուեր էր այդ վիճակին ալ, մանաւանդ ամեն անգամուն երբ տեսած էր Տիրանին վերադարձը, միշտ աւելի զոհ ու երջանիկ, միշտ աւելի կատակասէր ու զուարթ, թէև քիչ մը նիհարցած, աչքերը սև

շրջանակուած, աւելի փայլուն ու յոգնած, քնատի մը աչքերուն պէս։

Ամիսներ յետոյ սակայն, Վիրապեանի դէմքը հետզհետէ մռայլացաւ, թէև միշտ կը շարունակուէին իր բացակայութիւնները, իր աչքերուն փայլունութիւնը ու քնատի երևոյթը։ Ան կորսնցուց իր զուարթ ու կատակասէր բնաւորութիւնը, և աւելի ջղային, աւելի խստաբարոյ դարձաւ, նոյնիսկ իր սիրական մօրաքրոջը հանդէպ։ Այս վերջինը, հազիւ հանդարտած, հիմա նորէն այլայլեր էր, իտես այս նոր ու չարագուշակ կերպարանափոխութեան։ Կասկածներ սպրտեր էին բանաստեղծին կոյս ու սիրատոչոր սիրտին մէջ, ուր նախանձը, ցեղային անդիմադրելի ու մոլեկան նախանձը, թունաւորող ու խելայեղիչ նախանձը բոյն էր դրեր։ Այ հիմա, ժամադրութիւններ ու սիրային առժամապէս մոռցնող ու հանգչեցնող հանգրուաններ ունենալով հանդերձ, շուտով կը վերադառնար իր կասկածներուն ու հնհնուքներուն, որոնցմով նոյնիսկ իր սիրուհին, երես առ երես նեղելու չէր քաշուեր, չի հաշուելով, ցորեկ գիշեր, փողոցներուն անկիւնը, վաճառատուններուն մէջ, հանդէսներու ատեն իր ըրած հետապնդումները, որոնք այնքան բորբոքիչ ու սպառիչ էին իրեն համար, որքան կրնային ծանծրալի ըլլալ տիկին Շաքարեանի խառնուածքը ունեցող ազատ կնոջ մը համար։

Ամիսներ ալ անցան այդպէս, այդ դառն տառապանքներուն մէջ որ կրնան ըլլալ սիրողի մը համար, փոխնիփոխը, մէյ մը համոզումներ գոյացնելով իր մէջ իր սիրուհիին անմեղութեանը մասին, մէյ մըն ալ, աւելի անհանդուրժելի ու դաժան կասկածներու մղուելով։ Հիմա, տարիէն աւելի անցել էր այն օրէն իվեր, ուր առաջին անգամ ճանչցաւ տիկին Շաքարեանը և նոյնչափ ժամանակէ իվեր տող մը բան չէր արտադրած, ինչ որ մեծ զարմանք պատճառած էր գրական աշխարհին մէջ։ Իր

հիացողները, իր վրայ հաւատք ունեցողները, միշտ կը կարծէին որ, ան սկսած ըլլալու էր իր խոստացած մեծ վէպին, հակառակ իր ուրացումներուն, որոնք ապահովաբար անակնկալ մը պատճառելու համար դարբնուած անմեղ սուտեր էին։

Օր մըն ալ, ստուգութիւնը ունեցաւ Թէ, իր սիրուհին կը խաբէր զինքը ուրիշի մը հետ։ Ամբողջ մարմնովը սկսաւ դողալ։ Շիտակ տուն վազեց, ռեվոլվէրը առնելու և վերադառնալու համար այն հիւրանոցը, ուր կը գտնուէին այս պահուս երկու մեղսակիցները։ Բայց հոն հասնելուն, զգաց իր վիճակին ծիծաղելիութիւնը ու յանկարծ միտքը փոխեց. հօրը պէս անծնասպան պիտի ըլլար քան Թէ ոճրագործ. վերջապէս ի՞նչ իրաւունք ունէր բռնանալու կնոջ մը վրայ որ անկեղծօրէն սիրէ զինքը, կամ սպաննելու մարդ մը՝ որ իրեն պէս յանցանքը գործած էր սիրելու նմանօրինակ Թովիչ հրէշուհի մը։ Փակուեցաւ իր սենեակին մէջը ու սկսաւ քալել, դառնալ գրասեղանին շուրջը մոլեգին առիւծի մը պէս, ինքնիրենը՝ անկապ խորհրդածութիւններ ու բացագանչութիւններ դուրս տալով բերնէն։ Հէք մօրաքոյրը որ դողահար ու սրտաբեկ կը սպասէր դրանը ետին, բովանդակ քաջութիւնը ժողվելով հարցուց.

— Ի՞նչ ունիս, Տիրան, հիւանդ ես...

— Ոչ, բան մը չունիմ, մօրաքոյր, գնա պառկէ, հանգստացիր... արտաբերեց ու հեկեկալով գլուխը Թաղեց բարձերուն մէջ, անկողնին վրայ տարածուած։

Բայց մօրաքոյրը մնաց հոն, դրանը ետին, մինչև առտու, ականջը բանալիին ծակին կրթնցուցած։ Վիրապեան ոտքի ելաւ քիչ վերջը ու սկսաւ կրկին դառնալ. կրզդար որ մօրաքոյրը հոն էր ու անկարելի կ'ըլլար իրեն, ծեռք առնել հրազէնը, ինչու որ կը գուշակէր Թէ, նոյն հարուածը պիտի մահացնէր նաև աղջիկը։ Երկարօրէն խոկաց. որոշեց տունէն դուրս երթալ գործադրել իր մտադրութիւնը. մտածեց նոյնիսկ, յետին

տեսակցութեան մը մէջ, իր ներքին բովանդակ մաղձը պոռթկալ անօրէն ու անզգամ կնոջ երեսին ու յետոյ մեռնել։ Այդ զանազան որոշումներուն, վարանումներուն և տառապանքի ու յուսահատութեան նոպաներուն մէջ, արշալոյսը ծագեցաւ. յետոյ առտու եղաւ։ Մօրաքոյրը, նոր ելածի պէս, դուռը զարկաւ, հարցուց թէ ինչպէս է և ըսաւ թէ նախաճաշը պատրաստ է։ Վիրապեան երբ ճաշարան անցաւ, ակամայ իր և մօրաքրոջը նայուածքները զիրար խաչաձևեցին և յուսահատ բանաստեղծը ու ծերացած աղջիկը զիրար հասկցան։ Այս վերջինը, մահու չափ տրտմած, անկիւն մը նստած՝ մատները կրզբաղեցնէր անվերջանալի ծեռագործի մը թելերը հիւսելու գործով, մինչ Տիրան, գլուխը սեղանին վրայ կախած, կը փորձէր պուտ մը կաթ կուլ տալ։ Դուրս ելլալու համար հագուած էր. հրաղէնը դրպանն էր. բայց մօրաքրոջը տեսքը կը ջլատէր իր բովանդակ կորովը։ Ցանկարծ դիւային կերպով սկսաւ ժպտել ինքնիրենը, և գաւաթին մնացած պարունակութիւնը մէկ ումպով խմելով, վերադարձաւ սենեակը ու աշխատութեան շորերը վերստին հագնելով անցաւ գրասեղանին գլուխը։

Մօրաքոյրը՝ որ սարսափահար ետևէն էր վազեր, բանալին ծակէն դիտելով ու տեսնելով Տիրանին՝ հանդարտիկ մը աշխատութեան սկսելը, ինքն ալ իր կարգին ինքնիրենը ժրպտեցաւ, նրբանցքին կէս-մութին մէջ։

Բանաստեղծ-վիպագիր-սիրահարը, տարուան մը իր ալեկոծ անցեալը խուզարկած ու ապագայ երազներու փլուզումը մտովի աւաղած պահուն, ներքին ահարկու փոթորիկի ամենէն բուռն վայրկեանին, փոխանակ ինքնասպանութեան, մարդասպանութեան, խենդութեան կամ սիրադրուժին հետ յետին բանակռիւի մը ու հարուածի մը, ինչպէս կը թելադրէր իրեն՝ իր արիւնը, յանկարծ, մութին մէջ շողշողացող արշալոյսի մը պէս, վէպի հրաշալի նիւթի մը ծագումը ընդնշմարեր էր իր

երևակայութեանը խորը, վէպ մը՝ զոր շատոնց խոստացած էր և որ կ'ուզէր որ անպատճառ ճշմարիտ գլուխ-գործոց մը ըլլար։

Եւ երեք ամիս վերջը, երբ իր ցաւը, իր անծը իսկ մոռցած, թաղուած էր յամառ ու տենդագին աշխատութեան մը մէջ, տեսաւ որ սիրոյ իր խորունկ վէրքը մասամբ սպիացեր ու իր անհնարին ցաւը մինչև մէկ աստիճան բուժուելու ճամբայ էր բռներ։ Նորածին վէպը, որ արդարև հոյակապ հրաշակերտի մը բոլոր յատկանիշներովը Երևան կուգար հետզհետէ, միևնոյն ատեն սպեղանի էր եղեր միտքի մարդուն վիրաւոր սիրտին։

ԶԻՖԹԷ ՍԱՐԱՖ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ

Մի երգ գիտեմ ես աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Որոտի պէս հատու, խրոխտ—
Մի Երգ գիտեմ ես աննման։

Ծնուել է նա մութ հանքերի
Մեռաղակուռ երակներից,
Ու ծայն առել քլունգների
Ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից։

Սնունդ առել, ջիղ ու արիւն՝
Բանուկ, ուժեղ բազուկներից.
Գործարանը խանդ ու աւիւն
Շնչել նրան իր ժխորից։

Հմայք ունի երգս այնպէ՛ս
Հոգսի ժամին թէ՛ որ երգես՝
Թախիծ ու վիշտ կէջքանայ—
Լքւած հոգուն նեցուկ է նա։

Հէյ իմ երգը միշտ աննման—
Հզօր մուրճի թափի նման,
Որոտի պէս հատու, խրոխտ—
Մի երգ գիտեմ ես աննման։

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ.

---

* * *

Գիշեր է, չար բու
Իմ գլխիս վերև։
Դանդաղ, ծանծրալի
Մաղում է անձրև։

Զարթել եմ, լսում...
Լսում... Բայց ինչո՞ւ.
Էլ ի՞նչ եմ սպասում,
Ի՞նչ մնաց գալու։

Էլ ոչի՛նչ ոչի՛նչ
Էլ ոչի՛նչ չի գայ
Այս տխուր, տաղտիչ
Աշխարքի վրայ։

Մաղում է անձրև.
Վերջ չունի երբէք.
Ցաւերս է հաշւում,
Ցաւերս մէկ մէկ...

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ.

ՀԷՔԻԱԹ

Դրամատիքական էտիւդ 1 գործողութեամբ.

ԱՆՁԻՆՔ՝

ՆԱ, ԿԻՆԸ, ԴԱՅԵԱԿ, Ա. ԾԱՌԱՑ, Բ. ԾԱՌԱՑ:

Ծովափին: Սպիտակ մարմարեայ աշտարակի մի սենեակ, փարթամ արևելեան ճաշակով զարդարուած: Ներքևից լսելի է ջրերի ձայնը, որ զարկում է աշտարակի պատերին: Ճակատի կողմը երեք լուսամուտ, միջին պատուհանը դուրս ընկած դէպի ծովը, այնպէս որ սենեակում խորութիւն է ստացում: Թանկագին վարագոյրներով: Սենեակը զարդարուած է գորգերով, ծաղիկներով: Աջ պատի մօտ թախտ վագրի մորթով, մօտը մի կլոր սեղան սև սատափով զարդարուած: Մուտքը ձախից:

Վարագոյրը բացուելուց պատի մօտ լուռ կանգնած են երկու ծառաները: Նրանք կարծես տպաւում են մի բանի: Սենեակը աղօտ լուսաւորուած է լուսնի լուսով:

Ա. ԾԱՌԱՑ. Իսկ եթէ չգայ։
Բ. ԾԱՌԱՑ. Կգայ։
Ա. ԾԱՌԱՑ. Դու գիտէ՞ս նշանը։
Բ. ԾԱՌԱՑ. Գիտեմ։

Ա. ԾԱՌԱՑ. Ծովը հանգիստ չէ, դժուար թէ այսօր գայ։ (Մի փոքր լռութիւնից յետոյ)։ Դու գիտէս ով է նա։

Բ. ԾԱՌԱՑ. Ո՛չ։

Ա. ԾԱՌԱՑ. Ասում են դա նրա նախկին սիրահարն է, մի գեաւուր։

Բ. ԾԱՌԱՑ. Եթէ ինձ տան այդ մարդուն, ես նրան կտոր-կտոր կանեմ։

Ա. ԾԱՌԱՑ. Դու տեսա՞ր ինչ մռայլ էր մեր տէրը... Նա շատ է տանջւում։

Բ. ԾԱՌԱՑ. Ես տեսայ ինչպէս նա լալիս էր։ Քսան տարի է ես ծառայում եմ այս տանը և առաջին անգամ տեսայ ինչպէս նա լալիս էր։ Նա շատ դժբախտ է։ Նա շատ զաւակներ է ունեցել, բայց այժմ մէկն է մնում։ Նա դողում է նրա վրայ, նա այնպէս դժգոյն է։ Նա թաղեց երկու որդուն, թաղեց կնոջը՝ լաց չեղաւ, պողպատի սիրտ ունի։ Ես չէի կարծում, որ այդ հուժկու մարդը կարող է լալ։ Բայց այսօր ես տեսայ ինչպէս նա լալիս էր։

Ա. ԾԱՌԱՑ. Երևի շա՞տ է սիրում։

Բ. ԾԱՌԱՑ. Նրա ամբողջ կեանքը մի մութ դաժան գիշեր է եղել։ Նրան ոչ ոք չի սիրել... Բոլորը վախենում են նրանից։

Ա. ԾԱՌԱՑ. Նա այնպէս դաժան հայեացք ունի...Ես չեմ կարողանում ուղիղ նայել նրան։

Բ. ԾԱՌԱՑ. Նա շատ դժբախտ է։ Ես նրան մի անգամ միայն տեսայ ուրախ, երջանիկ։ Նա երեխայի նման ուրախ էր... Ես նրան երբէք այդպէս չէի տեսել։

Ա. ԾԱՌԱՑ. Ե՞րբ էր։

Բ. ԾԱՌԱՑ. Երբ առաջին օրը մեր նոր տիրուհին մտաւ այս տունը։ Այդ օրը նա ծառաների հետ էլ քաղցր էր... Լիքը բուով արծաթ թափեց նրանց առաջ։ (Լռութիւն)։

Ա. ԾԱՌԱՑ. Որտեղ էր նա պատահել տիրուհուն։

Բ. ԾԱՌԱՑ. Զգիտեմ... Դա երկար պատմութիւն է... Ասում են նա սպանել է նրա սիրածը, որը կամեցել է փախցնել նրան ուրիշ երկիր... Նա վաղուց աչք է ունեցել նրա վրայ։ Դա մի հարուստ հայի աղջիկ է։

Ա. ԾԱՌԱՑ. Հայի աղջիկ։

Բ. ԾԱՌԱՑ (յանկարծ): Մա... Լուռ... Լսեցիր։

Ա. ԾԱՌԱՑ. Ոչինչ։

Բ. ԾԱՌԱՑ (լսողութիւնը լարած): Սա՜...

(Ցածից մեղմ սուլոց):

Բ. ԾԱՌԱՑ. Նա՛ է։

Ա. ԾԱՌԱՑ. Իջեցնե՞մ։

Բ. ԾԱՌԱՑ. Սպասիր։

(Սուլոցը կրկնւում է):

Բ. ԾԱՌԱՑ. Իջեցրո՛ւ... զգոյշ, չերևաս։

Ա. ԾԱՌԱՑ. Մութ է։

Բ. ԾԱՌԱՑ. Կամաց... ա... ա...

(Մի պահ լռութիւն: Իջեցնում է չլանը, որի մի ծայրը ամրացրած է պատուհանի վանդակին):

Բ. ԾԱՌԱՑ. Դանակը ձեռքի՞դ է։

Ա. ԾԱՌԱՑ. Այո։ (Լռութիւն): Բռնեց չլանը... Բարձրանում է։

Բ. ԾԱՌԱՑ. Սա՜... Լուռ։ (Լռութիւն. լսւում է ջրերի ձայնը):

Ա. ԾԱՌԱՑ. Թողնեմ բարձրանա՞յ։

Բ. ԾԱՌԱՑ. Կասեմ—երբ։

Ա. ԾԱՌԱՑ. Մօտենում է։

Բ. ԾԱՍԱՑ. Շա՞տ կայ։

Ա. ԾԱՌԱՑ. Քիչ մնաց։

Բ. ԾԱՌԱՑ. Կարի՛ր... Դէհ...

Ա. ԾԱՌԱՑ. Ձեռներս դողում են։

Բ. ԾԱՌԱՑ. Շո՛ւտ։

Ա. ԾԱՌԱՑ. Ես չեմ կարող...

Բ. ԾԱՌԱՑ. Վախկոտ... տուր ինձ։ (Վերցնում է դանակը և մի հարուածով կտրում)։

Ա. ԾԱՌԱՑ. Արդէ՞ն։

Բ. ԾԱՌԱՑ (մօտենում է պատուհանին)։ Հա՜, հա՜, հա՜... Վերջաւ... Թող չանգրտի քարափը... Նա ջարդուեց սուր, սև ժայռերի վրայ... Վառիր ջահը։

Ա. ԾԱՌԱՑ (վառում է։ Մուտքի դուռը ծեծում են)։

Բ. ԾԱՌԱՑ. Ո՞վ է։

ԴԱՅԵԱԿ (դրսից)։ Ի՞նչ եղաւ։

Բ. ԾԱՌԱՑ. Վերջացաւ։ (Բանում է դուռը)։

(Ներս է մտնում մի պառաւ, մէջքը կորացած. խօսում է խռպոտ)։

ԴԱՅԵԱԿ. Վերջացաւ... խի՜... խի՜... խի՜... Վերջացաւ... լա՛ւ։

Բ. ԾԱՌԱՑ. Մի բան իմացա՞ք։

ԴԱՅԵԱԿ. Ոչինչ... Լուռ է, կասես պողպատից է ծուլած... Ոչ մի հառաչանք, ոչ մի կաթիլ արցունք... Այս չորացած մատներով ես նրա աչքերը կհանէի... Սանդի մէջ կչախչախէի նրա պիղծ մարմինը... ոչ մի տանջանք չբացեց նրա լեզուն...

Բ. ԾԱՌԱՑ. Զիմացա՞ք ով է։

ԴԱՅԵԱԿ. Ոչ։

Բ. ԾԱՌԱՑ. Ինչպէ՞ս է մեր տէրը։

ԴԱՅԵԱԿ. Նա դեռ սիրում է նրան, այդ շան աղջկանը. ինչպէս ես կպոկոտէի նրա մսերը, ինչ մեծ հրճուանքով կըկրծէի նրա կոկորդը, որ ցաւից աչքերը դուրս պրծնէին, որ ատամների տակ խաժնէր իր լեզուն... (Ծամածուած դէմքով)։ Ես կխմեմ նրա արիւնը... Ասա՛... ասա՛... ասա՛... ի՞նչ միջոցով կարելի է նրան աւելի՛ տանջել, աւելի չարչարել... (Կատաղութիւնից կրծոտում է մատները)։

Բ. ԾԱՌԱՑ. Աւելի լաւ էր նա ոչինչ չիմանար... Ոչինչ... չը-

պէտք էր ոչինչ ասել... Ծովափից կգնդակահարէինք այդ շանը...

ԴԱՑԵԱԿ (*խոժոռ նայում է նրան. ուզում է մի բան ասել, այդ բոպէին դուռը բացւում է. շէմքի վրայ երևում է ՆԱ: Նրա արիւնով լիք աչքերը փայլում են: Աչքերի կրակը կարծես ծաղրում է գլխի ծերմակը: Մօտ 60 տարեկան: Խստադէմ, մռայլ: Մի վայրկեան լուռ կանգնած է դռներում, մի հայեացք է ձգում երկու ծառաների վրայ, որոնք լուռ, ձեռները կրծքին կանգնած են: Մի քսակ փող է նետում նրանց: Ա. Ծառան վերցնում է և երկուսն էլ լուռ դուրս են գնում*):

ՆԱ. Ի՞նչ եղաւ:

ԴԱՑԵԱԿ. Արդէն:

(*Ծառաները գնալուց յետոյ Նա մի քանի անգամ անցուդարձ է անում սենեակում. մօտենում է պատուհանին, մի վայրկեան լուռ նայում է հեռուն: Ապա մօտենում է վագրի մորթով ծածկւած թախտին՝ ընկնում է նրա վրայ, ծանր հևում է, որը մի քիչ անց փոխւում է լուռ հեծկլտանքի: Դայեակը, որ կանգնած պատի մօտ լուռ հետևում էր նրան աչքերով, մօտենում է և ծունկ չոքում նրա առաջ*):

ՆԱ. Նա ինձ երբէք... երբէք չի սիրել... իմ ամբողջ անիծեալ կեանքը մի մութ գիշեր էր... իմ արևը ծագեց՝ երբ նա ոտ դրեց այս տունը, և այդ արևը նորից մայր է մտնում... Եւ այժմ անթափանցելի խաւար է շուրջս:

ԴԱՑԵԱԿ. Հրամայիր, և նրա արևը յաւիտեան կխաւարի:

ՆԱ. Կխաւարի նրա արևը, կխաւարի և իմը. առանց նրան ես անկարող եմ ապրել:

ԴԱՑԵԱԿ. Մահւան է արժանի նա, ով զողանում է իր տիրոջ պատիւը:

ՆԱ. Մահը փրկութիւն կլինի նրա համար: Նա պէտք է ապրի:

(*Հերարձակ, դիակի պէս դժգոյն ներս է մտնում ԿԻՆԸ. նա մօտ 20 տարեկան է: Վազում է դէպի պատուհանը, սարսափած շուրջն է*

նայում, նայում է պառաւին, որը նրա մտնելուց վեր է կացել և կանգնած է պատի մօտ: Արագ մօտենում է ամուսնուն և ծնկաչոք ընկնում է նրա առաջ, ուզում է մի բան ասել. շրթունքները շարժւում են, բայց ոչինչ չի կարողանում արտասանել: Նա հրում է կնոջը և ոտքի կանգնում):

ԿԻՆԸ. Ասացէք, ի՞նչ արիք դուք նրան: Ո՞ւր է նա:

ՆԱ. Հա՜... հա՜... հա՜...

ԴԱՅԵԱԿ (արծագանքի պէս): Խի՜... խի՜... խի՜...

ԿԻՆԸ. Դուք այժմ գիտէք թէ ով է նա... էլ ինչո՞ւ էք կանգնել, սպանեցէք ինձ... Սպանի՛ր... բայց թող մի անգամ էլ նայեմ նրան, յետոյ սպանիր:

ՆԱ. (ձեռքերը կրծքին լուռ կանգնած է):

ԿԻՆԸ. Տեսնո՞ւմ ես, որ ես քեզ դաւաճանել եմ: Տեսնո՞ւմ ես, որ ես երբէք քեզ չեմ սիրել և չեմ էլ սիրելու: Սպանի՛ր... վռնդի՛ր կամ ոչ իբրև բարի հայր տուր ինձ նրան ու թող մեր երջանկութիւնը լինի և՛ քո երջանկութիւնը: Ես քեզ կսիրեմ ինչպէս իմ հարազատին, կպաշտեմ ինչպէս աստուածութիւն... Տո՛ւր ինձ նրան, տուր, ծնկաչոք ոտներդ ընկած աղաչում եմ... տո՛ւր ինձ նրան... (Հեկեկում է):

ՆԱ. Պոռնի՛կ... Դու աւերակ դարձրիր այն տաճարը, որի աստուածն էիր դու... Դու չմոռացար այն շուն գեաւուրին, որից ես քեզ խլեցի: Ես պաշտում էի քեզ ինչպէս աստուածութիւն...

ԿԻՆԸ. Նրա՞ն... Այո՛, դու խլեցիր ինձ նրանից: Ես էլ նրան էի պաշտում... Ես նրան սիրում էի... սիրում եմ և այժմ... իմ յիշողութեան մէջ դեռ վառ է նրա պատկերը: Ես նրան այժմ էլ սիրում եմ. սիրում եմ ինչպէս աստղերին, որոնց երբէք չեմ կարող հասնել. ես նրան սիրում էի ինչպէս այն սարի դագաթի մշտական ձիւնը, ինչպէս այս ծովի ջրերի ձայնը, որոնց լսում էի իմ մենակութեան

մէջ, իմ երջանկութեան ժամերին, հեռու քո ատելի հայեացքից։ Քո տաճարը—բանտ էր ինձ համար. իսկ դու մի՞թէ չխորտակեցիր իմ տաճարը։ Դու խլեցիր ինձ իմ սիրածի գրկից, և երեք տարի դարշելով ես քոնն եմ եղել, դու թունաւորել ես իմ ամբողջ երիտասարդ կեանքը. ես բոլորը, բոլորը ներում եմ քեզ, միայն տուր ինձ նրան։

ՆԱ. Նրան տամ քե՞զ... հա՜... հա՜... հա՜... Պառաւ, լսո՞ւմ ես... Ո՞ւր է նա, թող դուրս գայ... թող տանի իր սիրածը... հա՜... հա՜...

ԴԱՅԵԱԿ (շարունակելով): Հա՜... հա՜... հա՜... (Առաջ գալով, կնոջը, շշուկով): Խի՜... խի՜... խի՜... Նա, նա այնտեղ է... (Ցույց է տալիս ծովը): Լողում է։

ԿԻՆԸ (չհասկանալով): Այնտե՞ղ է... (Վազում է դէպի պատուհանը, ապա յետ է դառնում, նայում է մերթ պառաւին, մերթ ամուսնուն, հասկանալով, ընկճուած ընկնում է):

ՆԱ (վայրենի քրքիջով): Այնտեղ... նա լողում է կարմիր ծովի մէջ իր արիւնով ներկուած։ Երբ նրա պիղծ դիակը ծովը ափ կշպրտի, ես կհրամայեմ, որ կրկին ծովը նետեն. նա պէտք է ձկների կերակուր դառնայ կամ այնքան ծեծի ափերը իր այլանդակուած, ուռած մարմնով մինչև քայքայուի։

ԿԻՆԸ (կարծես չի հաւատում իր լսածներին. կարծես երազ է, նա կծոտում է ձեռները, շօշափում է մազերը, կարծես, համոզուելու համար, որ երազ չէ: Աչքերը լայն բացած խելագարի պէս՝ ուզում է ոտի կանգնել, բայց ընկնում է: Շշուկով): Դո՞ւք սպանեցիք նրան... Դո՞ւք...

ՆԱ. Այժմ դու իմն ես... իմը... միակ իմը... իմը... հա՜... հա՜... հա՜...

ԿԻՆԸ (յանկարծ ոտի է կանգնում, վազում է դէպի պատուհանը, բայց Նա

բռնում է նրան և ուժով պահում: Ցուսահատ ձիգ է անում ազատելու և չի կարողանում):

ՆԱ. Դու կապրես, և ես ամեն անգամ ուժով կխլեմ քո այտերից համբույրները: Ես կծծեմ քո շրթունքների կարմիր հիւթը, որ նեկտարից աւելի անոյշ է. կծծեմ քո արիւնը՝ մինչև թառամես, թօշնես և ոտնահար եղած ծաղկի պէս դէն կշպրտեմ: Շղթայակապ շներիս հետ կպահեմ... իսկ դիակդ... դիակդ անգղներին կեր կտամ:

ԿԻՆԸ (որ սարսափած լսում էր նրան, կամաց-կամաց կանգնել է: Նրա վերջին խօսքերի վրայ ծգուած է ամբողջ հասակով, աչքերը կատաղութեամբ վառում են): Վա՛ղը... Բորենի՛... Դէհ լսիր... Այժմ ես կլուծեմ իմ վրէժը... Երեք տարի դու տանջել ես ինձ, այժմ դու երեք տարուայ տանջանքների փոխարէնը տոկոսով կհատուցանես... Դէհ, լսիր... Նա քո որդին էր...

ՆԱ (կարծես չհասկացաւ):

ԿԻՆԸ. Նա քո որդին էր... քո միակ որդին:

ՆԱ (յարձակւում է կնոջ վրայ): Ես կխեղդեմ քեզ... (Թուլացած ընկնում է):

ԿԻՆԸ (մի քայլ յետ է գնում): Անա՛րգ, ես լուծեցի իմ վրէժը և նրա վրէժը, որ կրծում էր սիրտս...

ՆԱ. Պառա՜ւ... պառա՜ւ...

ԴԱՑԵԱԿ (մօտեցել է և չոքել նրա առաջ):

ԿԻՆԸ. Դու խլեցիր իմ սիրածը, ես էլ խլեցի որդուդ: Դու թունաւորել ես իմ տարիները քո պիղծ շնչով, դու ստիպել ես ինձ շոյել քո ատելի դէմքը, որից ես գարշում էի. քո նողկալի շրթունքները քանի՛ անգամ հպւել են իմին. ես բոլորը տարել եմ լուռ, անձայն այս բոպէի համար... Ես վրէժս առի... այժմ սպանի՛ր:

ՆԱ (պառաւի օգնութեամբ ոտի է կանգնել. պառաւը նրան մօտեցրել է թախտին. մի վայրկեան լուռ, ընկճած նստած է: Աղաչելով):

Ասա՛, ասա որ դու սուտ ասացիր, ասա՛ որ դու վրէժ էիր ուզում առնել։

ԿԻՆԸ. Նա քո որդին էր... Թող բերեն դիակը...

ՆԱ. (արիւնը խփեց գլխին. կատաղած)։ Հրէ՛շ, յե՛տ տուր, յե՛տ տուր որդուս։

ԿԻՆԸ. Ո՛ւշ է... այլևս երբէք չես տեսնելու նրան, նա լողում է իր արիւնով ներկած ջրերում, ժայռերը սուր-սուր մեխւել են նրա կողերը, և դո՛ւ, դո՛ւ ես նրա դահիճը...

ՆԱ. Պառա՛ւ... Սղմի՛ր նրա կոկորդը, սղմիր... փակի՛ր նրա աչքերը...

ԿԻՆԸ. Նրա ուռած դիակը կծեծի քո մարմարեայ աշտարակի պատերին և քո լսողութեանը շարունակ կշշնջայ նրա անէծքը։ Որդեսպա՛ն... քնած թէ արթուն նա կհալածէ քեզ և դու ոչ մի տեղ հանգիստ չես գտնիլ և շարունակ կլսես՝ «Որդեսպա՜ն... որդեսպա՜ն»... Այդ մեղեդին գերեզմանում էլ քեզ հանգիստ չի տալ... Հրէ՛շ... Բորենի՛... Դէ՛հ, այժմ սպանի՛ր ինձ...

ՆԱ. (կատաղած վեր է ցատկում, խլում է կողքի կեռ սուրը և մի հարւածով պատռում է կնոջ կուրծքը)։ Հա՜... հա՜...

ԿԻՆԸ. Նզովա՜ծ լինիս... որդեսպա՜ն... ես վրէժս առի... Ատո՜ւաձ... Ատուա՛ծ... (Մեռնում է)։

ՆԱ. (վայրենի քրքիջով ընկնում է յատակի վրայ, հայեացքը սառած է մի կէտի)։

Պ ա ո ւ զ ա.

ԴԱՑԵԱԿ (ոտի է կանգնում։ Կարծես բրոնզից է ձուլւած։ Անթարթ նայում է ուղիղ տարածութեան մէջ։ Խուլ ձայնով, կարծես գերեզմանից է լսւում)։ Լինում է—չի լինում մի իշխան. նրա ամբողջ

կեանքը մի մութ, դաժան գիշեր էր։ Նա միայն մի անգամ էր ժպտացել։ Նա շատ որդիք ունէր, բոլորն էլ մեռան. միայն մէկն էր մնում, նրան էլ ծովը նետեց։ Մի կին միայն սիրեց, նրա էլ կուրծքը պատռեց իր կեռ սրով։

Կամաց-կամաց իջնում է

ՎԱՐԱԳՈՅՐԸ.

Միհ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.

ՍԵՒ ԵՐԳԵՐ

Քու եղեմնաստուեր աչքերուդ վրայ
Քարացուր հոգիս յաւիտենօրէն,
Սիրոյ երգերը շատ կարճ կը տևեն,
Իմ ճամբաս կարճ է, միամիտ Լէյլա։

Խղճի խայթ մըն է սէրդ՝ սրտիս մխուած,
Զայն միշտ կ'արիւնէ, անդուլ պեղելով
Վէրքը որ հոն է, կուրծքիս տակ բացուած
Լայն, գերեզմանային ու բազմահոլով։

Բայց, գուցէ, շատ ո՞ւշ է արդէն հիմա...
Թշուառութենէ կարծրացած, բարի,
Դի՛ր ցաւոտ սիրտդ ձեռքերուս վրայ
Քու լուծդ է թեթև, եղնիկի հոգի։

Ու սրտիդ վերջին թելովը վտիտ,
Նիհար մատներուս տաղանդով կրկին՝
Թերևս փորձուիմ երգելու վերջին
Երգը երջանիկ քու ներող դարձիդ...

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ.

ՍԵՒ ԵՐԳԵՐ

Հնամենի՜ դղեակներու մէջ ժայռուած
Ու կուպրացած գիշերներու պէս ամայի,
Հոգիս՝ հաղա՞ր խաւարներով օձամանուած
Հո՛ղին կառչած, ի՛նքնիրվրայ կը գա՞լարուի։
Մութին մէջէն կարօտի սև ձեռք մը անտես
Կը փլցրնէ հոգիս՝ անդուլ մուրճի մը պէս.
Կը կանչէ զիս ծայն մը ողորմ ու սիրակէզ,
«Եկո՞ւր, եկո՞ւր» կը կանչէ զիս «ես ալ քեզպէս
«Ցուղարկն եմ հին Գարուններու մութ թափօրին.
«Քու վերջացող Աշունիդ երգն եմ ես վերջին.
«Կարա՞պի երդդ՝ չի հասկցուած, ժա՛նը ու խո՛րին։
«Բեռեկտուած, նիհար սրինդն եմ ես Ցա՞ւի,
«Շունչդ է թեթև, շրթունքներուդ լուծն է բարի,
«Թող շրթներուդ խունկն ու հալուէն մէջէս անցնի։
«Արցունքներուդ լիճերուն քով ես մենաճեմ՝
«Քու ուշացո՞ղ երազներուդ Մոխրացանն եմ...
«Քու նահանջիդ աւեր կամուրջն եմ ես վերջին,
«Ուրկէ խաբուած քայլերդ շո՛ւտով պիտի փախչին։
«Սուգիդ ծովին մէջ կո՞յս կղզին իմ սո՛ւրբ, գա՞ղտնի

«Ուր պիտ՝ իջնես քու անընտել սէդ թռչունի
«Անմահ ծանծրոյթդ արևուն տակ քնացնելու։
«Գողգոթայիդ քարէ սնարն եմ ես վերջին.
«Վերջին թևն եմ քու Տանջանքիդ կարմիր Խաչին»։

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ.

ԻՆՉՊԷՍ ԵՐԲԵՄՆ...

Քերթող, պատմէ մեզ հայրենի յուշքերէդ,
Երգէ մեզ հին օրերու երգ մը անհետ,
Թափառայած թրուպատուրի երգ մը զով,
Արփշիռ ու զով մեր Գողթանի ողկոյզով...

Մեռելի շէն երգ մը հանէ թոքերէդ,
Հին, կռապաշտ այն երգերէն որոնց հետ
Մեր ասպազէն Քաջերն արոյր թափօրով
Սաղաւարդնին շողացնելով ջահերով,

Արքայական հանդէսներուն, վայրաց, վէս,
Կը պարէին, աստուածներու պարին պէս...
Երգէ մեզի հին օրերու հին յուշեր,

Մենք դարաւոր մեր Մահացումն այս գիշեր
Պիտի պարե՛նք, եղեռնօրէն շէն, խելար...
— Քերթողը, ծե՞ր, չը խօսեցաւ... Ան կուլար...

Ռ. ՍԵՒԱԿ.

ՈՍԿԻԻՆ ԾԱՐԱՒԸ

(Ա. Ահարոնեանի ն)

Երկարահասակ, ջղուտ, թուխ դէմքով, հպարտ քալուածքով, երեսուն երկու տարեկան երիտասարդ մըն էր արկղակալենիս։

Ուրթը տարիէ իվեր նոյն հաստատութեան մէջ, առուան եւրոպական ժամը տասնէն մինչև իրիկուան չորսը դրամով կ'զբաղէր։ Կը կշռէր, պարկերու մէջ կը լեցնէր, կը դանձէր, կը վճարէր, versement-ները և retrait-ները կ'արձանագրէր իր journal de caisse-ին մէջ, կը համրէր, յետոյ նորէն վճարում, դանձում, արձանագրութիւն, վերջապէս մեքենական աշխատութիւն մը՝ որ կարծես չէր ծանձրացներ զայն երբէք։

Վարչութիւնը իրեն հինգ ոսկի ամսական յատկացուցած էր, գումար մը՝ որուն տիրանալու համար խեղճ արկղակալը ուրթը տարիներ աշխատած, չարաչար յոգնած, տքնած, քրտնած էր շարունակ։

Այս պաշտօնին կոչուելուն երրորդ տարին իսկ ամուսնացաւ աղջկան մը հետ, որ իր սիրային հետ քանի մը հարիւր ոսկի ալ բերաւ իրեն, և որմէ զաւակ մըն ալ ունեցաւ։

Սաթենիկի մէկ ծննդական աղետալի հիւանդութիւնը սակայն փճացուց արկղակալին ունեցած պզտիկ գումարը, զինքը դատապարտելով իր իսկ խեղճ ու կրակ ամսականովը ապրելու։ Ուրիշ յոյս չկար. ադին անդին ինկած էր աւելի շնորհքով գործի մը ձեռնարկելու համար։ Բայց բաղդը ամէն կողմէ միշտ պատուար մը կը դցէր իր դէմ, տառապանքի, յաւիտենական մտատանջութեան, յուսավրիպումի մատնելով զինքը։ Գէորգեան, մեր պաշտօնատունին արկղակալը, որքան պատուախնդիր մարդ՝ այնքան վէս, խրոխտ նկարագիրի տէր, կը խորհէր ամենէն անհնարին բայց նիւթական տեսակէտով նպաստաւոր գործերու ձեռնարկել՝ իր սիրական ընտանիքը պատուաւորապէս ապրեցնելու համար։

Ցաճախ կը պատահէր որ գրպանը հինգ դահեկան չգտնուի, բայց, անգո՜ւթ հեգնութիւն, հարկադրուած էր ոսկիներու հետ խաղալ, առտուընէ մինչև իրիկուն, շլացնող փայլով, վառող, գերող մագնիսականութիւնով ոսկիներ, տաճկական, անգլիական ոսկեդրամներ, ամենքն ալ զատ զատ պարկերու մէջ, փայտէ խոշոր սկահներով լեցուն։

Պղինձէ պզտիկ թիով մը կշիռին մէջ կը լեցնէր, կը հաշուէր, կը գրէր, պարկերու մէջ կը զետեղէր, յաճախորդներուն կուտար, անոնցմէ կ'առնէր, յետոյ նորէն դրամը կը հոսեցնէր, ու ասիկա ժամերո՜վ, օրե՜րով։

Ոսկիին ծարաւը սկսած էր տոչորիլ զինքը։

Եւ այդ պապակը յագեցնելու ըղձանքով, ոսկին կը կշռէր միշտ, գլուխը աւելի կը մօտեցնէր նժարին, կը ծծէր կարծես դրամին հեշտանքը ու անոր ձայնը իր ականջներուն մէջ կ'երգէր աշխարհիս ամենէն հնչուն, ամենէն գեղեցիկ երաժշտութիւններէն մէկը։

Դրամին վրայ նայած պահուն՝ աւելի կը սաստկանար իր ծարաւը։

Օր մը այնքան խորասուզուած էր իր մտածումներուն մէջ, որ յանախորդի մը Ֆրանսական ոսկի տալու տեղ անգլիական տուաւ։

Տնօրէնին դիտողութիւնը վիրաւորեց սիրտը։ Թէև հաշիւը կարելի եղաւ կարգադրել անմիջապէս, յանախորդը ժանօթ ըլլալով իրեն։

— Ի՞նչպէս կը վաստկին աս մարդիկը, կը խորհէր ինքնիրեն, տեսնելով որ շատեր դրամ կը բերեն կը ծգեն։

Կիսաշխարհիկ կին մը չորս օր իրարու վրայ ութսունական ոսկի ծգեր էր։ Թափթփած վրայ գլուխով նպարավաճառ մը ամեն օր գրեթէ կանոնաւորաբար տասնական ոսկի կը բերէր։ Հայ քահանայ մը ամիսը անգամ մը քսան ոսկի, աղջիկ մը՝ յիսուն նաբոլէօն, մսավաճառներ, դերձակներ, ստորին զօրթներ, սպասուհիներ, պանդոկի ծառաներ, վերջապէս ահագին ժողովուրդ մը այլազան տիպարներու, անհատներու, իր շահին մէկ մասը կը հաւաքէր դրամատունին մէջ՝ հետզհետէ պարարտացնելով, ստուարացնելով անոր հարստութիւնը։

Գէորգեան՝ մտամոլոր, կը խորհէր թէ ի՞նչ իրաւունք է առանց գրպանը տասը փարա ունենալու, ուրիշին դրամը համբելու, կշռելու, պահելու ստիպուած ըլլալ։ Ընդվզումներ կ'ունենար։ Անոնք ալ մարդ չէ՞ին իրեն պէս։ Ինք անոնցմէ քի՞չ կ'աշխատէր։ Ինք ալ պէտք չէ՞ր որ զոնէ նուազ տառապելով ապրէր։

Իր դէմքին արտայայտութենէն յայտնի էր թէ Գէորգեան սաստկօրէն կրզգար իր վիճակին օրստօրէական վատթարացումը։ Նիհարցեր, աչքերուն շուրջը սև ծիր մը գոյացեր էր. ճակատին վրայ խորշոմներ կ'երևային ու աչքերուն խորը կը կարդացուէր կործանարար հիւանդութեան մը ախտանիշերը։

Երբեմն կը պատահէր որ Սաթենիկ պէտքի մը համար պաշտօնատեղինիս դար. արկղակալը, որ չափազանց կը սիրէր

իր կինը և կը տառապէր զանիկա պէտք եղածին պէս չկրնալ ապրեցնելուն համար, այդ օրերը աւելի սրտնեղ, անքաղաքավար, տարօրինակ կը դառնար. կարծես աւելի անյաղօրէն կը խաղար դրամին հետ, կը խնդար ակռաներուն մէջէն, և շարունակական ջղածգութեան մը կ'ենթարկուէր իր անձը:

Հետը չէինք կրնար խօսիլ. ընդհակառակը ինք կը շաղակրատէր ոսկիներուն հետ, հարցումներ կ'ուղղէր անոնց, մէկ ձեռքէն միւսը կը փոխանցէր:

— Սա գօգօթը որ հազարներով ոսկի կը դիզէ, կը մտածէր, ի՞նչ կրնէ, ի՞նչ է ըրածը, յետոյ այնքան ուրիշներ ալ:

Օգուտ մը չէին ունեցած իր կրկնակ դիմումները ամսականին վրայ պզտիկ, սանկ աննշան յաւելում մը ընել տալու մասին: Վարչութիւնը միշտ կ'առարկէր թէ շահ չկայ, թէ չկրնար պաշտօնեաներուն ատկէ աւելի վճարել, թէ դժգոհ եղողը կրնար մեկնիլ:

Գէորգեան դժբաղդ ծնած էր. օրինաւոր միջոցներով քալող և պարկեշտութիւնով յառաջադիմել տենչացող երիտասարդ մը՝ ամեն վայրկեան փորձութիւններու դիմադրելով կը կարծէր թէ անծանօթ ուժէ մը իր առաքինութիւնը պիտի վարձատրուէր և հետզհետէ պիտի մօտենար երանութեան ճամբուն:

Շատեր խոստացած էին զինքը ուրիշ աղէկ գործի մը դնել. խոստում՝ բայց բնաւ գործադրութիւն: Հինգ ոսկիով ինչպէ՞ս կրնար ընտանիք մը ապրեցնել: Պարտք պարտքի վրայ սկսած էր դիզուիլ, և իր ուժն ալ կամաց կամաց կը կորսնցնէր, վհատութեան մշուշով քօղարկուած ըլլալով իր երևակայութիւնը:

Ապօրինի միջոցներով դիւրին էր դրամ շահիլ, կ'ըսէին:

Միտքին առջև կը ներկայանար շքեղ կեանք մը, սքանչելի տուն մը, գեղեցկօրէն կահաւորուած, սպասաւորներ, հեշտա-

ռատ ըմպելիներ, յետոյ իր սիրական կինը ու աղուոր աղջիկը պերճանքի մէջ թաթխուած։ Կը խորհէր թէ անոնք ոչ մէկ տարբերութիւն ունէին հարուստներէն, կեանքերնին զրկանքի մէջ այսպէս չթառամեցնելու և երջանիկ տալրելու համար։ Երջանկութիւն, ոսկի՞, ոսկի՞...

Միտքը կը պղտորէր, կը շփոթէր։

Կարծես այն ոսկիները զոր կը կշռէր, աւելի իրեն համար ստեղծուած ըլլալու էին, իրե՞ն, որ այնքան պէտք ունէր անոնց։

Ոսկիի սահանքը իր անողոք ծայնին մէջ կը խղդէր Գէորգեանի գաղափարային վսեմ սկզբունքները. կամաց, կամաց կը փոխուէր, կը չարանար, ոսկիին անձրևը կը խանդարէր, կը մոլորեցնէր իր հոգիին հանդարտ սաւառնումները։

— Ի՞նչ աղէկ բան հարուստ ըլլալ։ Պարտք չունենալ, աղքատներու, անտէր և անծնողք պղտիկներու օգնել. դրամին ուժովը քարերը իսկ խօսեցնել տալ. ա՜հ, հարուստ ըլլալ։

Հազար ոսկիի պանքտոմս... չէ՛... քիչ մը աւելի... բայց...

Իր մտածումները կանգ կ'առնէին յանկարծ հոս, որովհետև յաճախորդ մը դրամ կը ծգէր, երկրորդ մը Ֆրանքին օրուան cours-ը կը հարցնէր, երրորդ մը ուրիշ հարցում...

Իր սովորական խորհրդածութիւններուն մէջ մխրճուած, անգամ մը անծանօթ մարդուն մէկուն հարիւր ոսկի աւելի տուած էր։

Պատահեցաւ որ այդ անծանօթ յաճախորդը իր ձեռքովը բերէ caisse-ին յանձնէ հարիւր ոսկին, անհաւատալի առաքինութիւնով մը։

Միտքը տարտղնուած էր. չէր կրնար գործին վրայ խորհիլ, գործ մը որ շատ հակողութիւն, ուշադրութիւն և փորձառութիւն կը պահանջէր։

Հաշուական սխալներ սկսած էր ստէպ ընել. յաճախորդ-

ներու խենթ պատասխաններ կուտար. անօրէնին հարցումնե-
րուն կարևորութիւն չէր տար և բարկութիւնով կը խօսէր
մեզի հետ։

Վայրկեան մը պարապ չէր մնար, երբ առանձին զգար
ինքզինքը, դարակը կը բանար, ոսկիին պարկերը կը պարպէր,
թիով կը հոսեցնէր, գիւային խնդուք մը՝ չորցած, գունատ
շրթունքներուն ծայրը։ Եթէ հեղուկ ըլլար այդ ոսկին, թիին
եզերքը բերանին պիտի մօտեցնէր ու պիտի խմէր, պիտի խմէր,
յագեցնելու համար իր ոսկիի պապակը, իր ոսկիի մոլեգին ծարաւը։

Աշխարհի ամենէն զմայլելի երգերը կ'եղանակէին իրեն հա-
մար այդ դրամները, իր միտքը կը վերանար անոնցմով. իրա-
կանութեան հետ ունեցած բոլոր յարաբերութիւնները կը խզէր,
ոսկիէ երազին մէջ ամփոփուելու համար։

Ու մէկ քանի անգամ փորձեր էր զեղծումներ ընել՝ յա-
ճախորդէ մը մոռացուած դրամ մը չվերադարձնելով կամ սխալ
հաշիւ մը չճշտելով, իր կեանքին ցաւալի ընթացքը այդպէսով
քիչ մը բարեփոխելու համար. բայց գիշերը, խեղճին հետ գլուխ
գլուխի տեսակցութիւն մը՝ հեռացուցած էր զինքը անիրաւ
միտումներէն, անբարոյական նպատակներէն։

— Ի՞նչ պիտի ըլլայ աս վիճակնիս, կ'ըսէր կնոջը ամէն
իրիկուն, իր աղուոր աղջկանը խոպոպիկներուն հետ խաղալով
ջղածգօրէն։

— Ի՞նչ ընեմ, չես ծգերոր կարի երթամ, աշխատիմ։ Երէկ
եկաւ նորէն տանտէրը, անպատճառ այս ամսու գլուխ դրամ կ'ու-
զէ. հացագործին չորս ամիսէ իվեր դրամ չէ տրուած. Սիմոնեանէն
առնուած փոխառութեան պայմանաժամն ալ կը լրանայ, չեմ
գիտեր ի՛նչ ընեմ... պիտի խենթենամ։

Սաթենիկ կնոջական տառապանքներուն կը միացնէր
տկարութիւններ, թերութիւններ։ Տառապանքին դիմագրաւե-
լու համբերութիւնը սպառիլ սկսած էր իր մէջ։

Երկարօրէն խորհած էր իրենց վիճակին վրայ և սա եզրակացութեան յանգած որ՝ եթէ այս կեանքը շարունակուի իր փափուկ առողջութեան հետ պիտի կորսնցնէր նաև ինչ բան գեղեցիկ որ ունէր իր վրայ։

Ու օրին մէկը ցաւալի քմահաճոյքը, հիւանդ հետաքրքրութիւնը ունեցեր էր իր ամուսինը խաբելու, դրամ շահելու համար։

Եթէ դրամ ունենար Գէորգեան, իր կինը աշխարհիս ամենէն պարկեշտ, ամենէն օրինակելի կինը պիտի մնար, և ամբողջ կեանքի ընթացքին անբարոյութեան սև ամպ մը երբէք չպիտի մթագնէր ընտանեկան մաքուր հորիզոնին։ Սաթենիկ թէև ակամայ, կամաց կամայ վարժուեր էր այդ կեղծիքի կեանքին. դրամ կը շահէր, անպատկառօրէն լպիրշ կաւատուհիի մը վաւերական միջնորդութիւնով. ալ չպիտի տառապէր շատ, զէթ քիչ մը լայն պիտի ապրէին։

Գէորգեան կինը ուրախ և գոհ կը գտնէր իրիկունները. միտքին սահմանափակ և անձուկ կացութիւնը ու կնոջը պարկեշտութեանը մասին ունեցած անսահման վստահութիւնը, թոյլ չէին տուած իրեն որ կասկածի անոր հաւատարմութեանը վրայ, մինչև այն օրը՝ երբ en flagrant délit բռնեց զայն վաւաշոտ ծերունիի մը հետ։

Ինք որ չէր ուզած կնոջը աշխատելու երթալը, որպէսզի չելլէ փորձութիւններու հանդիպի...

Գործի չեկաւ այն օրը։

Անկից ետքը աւելի յուսահատած, աւելի փոխուած գտանք զինքը։ Ապրելու անկանոն եղանակ մը ստեղծեց իրեն համար։ Ո՛չ ուտել, ոչ խմել, միտքի անհաւասարակշիռ վիճակ մը՝ տխուր ու եղերական։

Պաշտօնեաներէն մէկ քանին կը ծաղրէին զինքը, անոր ներքին փոթորիկներուն անգիտակ։

— Հայտէ՛, ՞ւր է նայինք, կ՚ըսէին անոր, կշռելդ մոռցեր ես։

Ու ան հեգնախառն, մելամաղձոտ ժպիտով մը, որուն մէջ անթեղուած կար աշխարհիս անհաւասարութիւններէն, անիրաւութիւններէն, կեղծիքէն, անբարոյութիւններէն զգացած ամբողջ դառնութիւնը և նողկանքը, թիակը ձեռքը կ՚առնէր նորէն, կը խառնէր շարունակ, ոսկիէ բուրգեր կը կանգնեցնէր և յանկարծ, կը փլցնէր զանոնք, ջղաձգօրէն, անխորհուրդ հարուածով մը, իբր թէ անոնք իր իսկ երազներուն բուրգերը եղած ըլլային, յետոյ մանկական միամիտ տխրութեան մը մէջ կը խորասուզուէր։

Շուրջինները ալ ծանծրանալ սկսած էին։

Իր ընթացքին մէջ զարտուղութիւն մը կը շեշտուէր հետզհետէ. Ոսկիէ—Կուռքին առջև ողջակիզուած իր հպարտ, վէս անհատականութիւնը, կը կորսնցնէր իր սկզբնական կորովը, եռանդը։

Միւս կողմէ ընդվզումները վայրկենաբար կ՚անհետանային մտածողութեան հորիզոններուն վրայ, շրջմոլիկ հիւրերու պէս։

Չէր կրնար գէշ բան մը ընել, ատիկա իր ուժերէն շատ վեր էր, ու իր հոգին այդ պայքարին մէջ օրերով մաքառեցաւ։

Իր բացակայութիւնները աւելի ստէպ դարձան։

Ոսկիին ծարաւը Գէորգեանը յիմարացուցած էր։

... Երէկ յիմարանոց տարին զայն։

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ.

---

* * *

Նորից մի կարօտ, սիրոյ մի թախիծ՝
Ծանօթ մեղեդին երազ-անցեալի
Պարուրեց հոգիս.
Նորից մի համբոյր վաղանցուկ գարնան
Վարդի բուրմունքով
Օրօրեց հոգիս...

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ.

---

* * *

Հոգիս վայելեց
Մի գողտրիկ համբույր՝
Հովերից անուշ,
Զովերից անուշ.—
Այն քո հայեացքն էր—
Կենսատու մի բույր
Նվիրեց սրտիս,
Գարունից անուշ։

Սիրտս տրորեց
Մի թախիծ ծանօթ,
Մի երազ—կարօտ,
Մի յուշիկ աղօտ.—
Այն քո հոգին էր
Թևերը փռած՝
Փարեց, գուրգուրեց
Հոգիս տխրամած։

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ.

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՀԵՐԻՑ

Երբ տխուր երգով մրրիկը աշնան
Կբաղխի փեղկը փակ լուսամուտիդ,
Ու կհեկեկայ անարցունք սրտիդ
Ցաւոտ դաշնակներ մի պաղ տխրութեան,
Իմացիր, նրանք ծայներն են սրտիս...

Այդ տխուր պահին դալուկը ճակտիս,
Նստած միայնակ մռայլ սենեակում,
Տարագիր սիրուս կսկիծն եմ սգում.
Եւ հեկեկանքս թեւերովն հողմի
Թռչում է փեղ մօտ, ստւերովդ այրւում,
Կարօտով արբած՝ պատերիդ փարւում,
Տրտունջն է լալիս սև անջատումի.
Խենթ բարկութիւնով դռնակդ ժեժում,
Ու գիշերն անվերջ ոռնում ու հեժում...

Հ. ՄԱԶՄԱՆԵԱՆ.

ԱՇՆԱՆ ԾԱՂԻԿԸ

I.

Նա գիտէր, որ ինքը այլևս երիտասարդ չէր, որ կորցրել էր թարմութիւնը։ Նա արդէն դադարել էր երազել և հաշտուել էր այն մտքի հետ, որ մի կերպ քարշ կտայ այս մնացած կեանքն էլ։

Նա յիշում էր, որ երբ դեռ 16 տարեկան էր, աշխոյժ, ուրախ, լի յոյսերով։ Նա ինքն էլ չնկատեց, թէ ինչպէս անցան տարիները, բայց մի օր սոսկաց՝ նկատելով գլխին երկու ճերմակած մազ, որ արծաթի թելերի նման փայլում էին սև սաթի պէս սև մազերի մէջ։ Նա պոկեց այդ յանդուգն մազերը, որ ժամանակից առաջ էին ճերմկել, և մի խոր հառաչանք դուրս թռաւ նրա կրծքից։

Երբ դեռ նոր էին սկսել հատ-հատ ճերմկել, նա պոկում էր, բայց յետոյ նա սկսեց ներկել, երբ արդէն անհնար էր դուրս տալ...

Ինքն էլ չնկատեց ինչպէս անցան տարիները և մի օր աչքերը բացեց և տեսաւ, որ տանը մնացած պառաւած աղջիկ էր, և սիրտը ճմլուեց կրծքի տակ։

40 տարի նա շարունակ սպասել էր, որ ահա կգայ նա, կսիրէ, կփայփայէ. նա կդառնայ տանտիկին, սիրող, շատ սիրող կին։ Նրա երևակայութեան մէջ վառ պատկերանում էր

նա։ Բայց տարիները գլորել էին միմեանց յետևից, և նա չէր եկել։

Այժմ նա բնակւում է իր մի յարկանի տան մէջ. նա դադարել է երազել. բայց էլի սրտի խորքում նա դեռ հաւատում էր նրա գալուն։ Նրա սիրտը մանկան պէս վախկոտ էր. նա դեռ կարմրում էր տղամարդու ամեն մի հայեացքից, թեթև շփումից։

Նա կարծես չէր ուզում հաւատալ, որ կեանքը անցնում է, և արհեստական միջոցներով կամենում էր պահպանել իր թարմութիւնը։ Նա խնամքով ներկում էր մազերը, գնում էր այն բոլորը՝ ինչ գտնում էր լրագրական յայտարարութիւնների մէջ, ինչ լսում էր իր ծանօթներից, որոնցով նա ուզում էր դադարեցնել բնական թառամելը։

Բայց ոչինչ չէր օգնում և պարզ տեսնում էր ինչպէս օր օրի վրայ դէմքի կաշին կնճռոտում է, կորցնում թարմութիւնը։ Եւ նա յուսահատած դէն ձգեց բոլոր միջոցները և թողեց որ կեանքը գործը կատարէ. նա փակւեց իր մի յարկանի տանը իր պառաւ աղախնու և ծերացած մոխրագոյն կատուի հետ։

II.

Նա վերջնականապէս դադարել էր հաւատալ, որ կդայ նա՝ երբ եկաւ. բաղդը կարծես մի վերջին անգամ ուզեց ժպտալ նրան։ Նա նորից սկսեց ուշք դարձնել իր արտաքինի վրայ, հագնւում էր վերջին տարազով, խնամքով ներկում էր մազերը, շպարում դէմքը։

Այդ փոփոխութիւնը կատարւեց այն օրից, երբ նա ծանօթացաւ մի երիտասարդ սպայի հետ, որին նրա մօտ բերել էր իր մօրաքրոջ որդին. նա հէնց առաջին անգամից սիրահարւեց

մինչև ականջները. նա պատրաստ էր ամեն ինչ զոհել. մեծ զգուշությամբ նա աշխատում էր ծածկել իր այդ զգացմունքը կողմնակի աչքերից. նա կորցրեց իր անդորրությունը, գիշերները աչքերը բաց էր լուսացնում, յաճախ ինքն էլ չգիտէր ինչու լալիս էր դեռատի աղջկայ նման։ Նրա սիրտը զարթնել էր քնից և արագ բաբախում էր. նա ոչ մի տեղ հանգիստ չունէր, ուրիշ ոչնչի մասին չէր մտածում, շարունակ նա էր նրա աչքերի առաջ՝ վայելչակազմ, դեղեցիկ, քաղաքավարի։

Շաբաթը մի քանի անգամ այդ երիտասարդները այցելում էին նրան և հիւրասիրւում։ Մենակ մնացած ժամանակ նրանք ծիծաղում էին այդ ծերացած օրիորդի վրայ, որը աշխատում էր 16 տարեկան աղջկայ նմանուել, իսկ նրա հետ շատ սիրալիր էին։

Նա մի րոպէ կանգ չէր առնում, չէր տատանւում, երբ նրան դիմում էին փողի համար. նրա քսակը բաց էր նրանց համար. նա չէր թողնում, որ երկրորդ անգամ կրկնեն։ Երբեմն ինքն էր հարցնում՝ արդեօք փողի կարիք չունի՞ն։ Նա սիրում էր և պատրաստ էր ամեն ինչ զոհել նրա համար։

Նա աշխատում էր գրաւել նրանց իր ճոխ հիւրասիրությամբ, աղաչում էր, որ աւելի յաճախ այցելեն, գանգատւում էր իր մենակությունից...

Նրանք գնում էին, և անհամբեր սպասում էր հետևեալ այցին։

III.

Դա նրա երկրորդ սէրն էր։

Առաջին անգամ պատահեց՝ երբ նա դեռ 24 տարեկան էր, այն ժամանակ նա դեռ մենակ չէր, ծնողները կենդանի էին։

Նա նրան սիրեց հէնց առաջին անգամ, երբ նրան տեսաւ

իրանց տանը, երբ նա եկել էր խնդրելու նրա ձեռքը։ Նա սիրեց նրան։ Սիրեց առանց իրեն հաշիւ տալու։

Նա սիրեց նրան, որովհետև նա եկել էր առաջարկելու նրան իր կինը լինել... Ամբողջ գիշերը նա անքուն անցկացրեց, երազեց իր ապագայ կեանքը, երբ արդէն ամուսնացած կլինի...

Բայց միւս օրը փեսացուն փոխանակ ինքը գալու տեսնելու իր նշանածին, մի մարդու հետ ուղարկեց իր հրաժարականը, պատճառաբանելով աղջկայ տգեղութիւնը, և պահանջում էր 10,000 ռուբլի. պակաս չի համաձայնուիլ։

Նրա օժիտը միմիայն 5,000 էր, և գործը գլուխ չեկաւ։

Շատ վշտեր կրեց նա, թաղեց ծնողներին, և ինքը մնաց մեն-մենակ։

IV.

Մի ամբողջ ամիս էր անցել նրանց ծանօթանալու օրից. նրա սէրը օր-օրի վրայ ուժեղացել էր և այժմ նա անկարող է առանց նրան ապրել։ Նրա ուրախութիւնը փոխւել էր տանջանքների։ Երրորդ օրն էր նա նրան չէր տեսել. արդէն երեկոյեան ժամի 9-ն էր, բայց նրանք չկային. եթէ այսօր էլ չգան, նա ուղղակի կխելագարուի։

Նա շքեղ հագնուած, մաղերը գեղեցիկ սանրած նստած էր հիւրասենեակում՝ ընկղմուած դաժան մտքերի մէջ... Գուցէ նա այլևս չգայ. գուցէ նա էլ չի տեսնելու նրան։ Արցունքները խեղդում էին նրան։

Ցանկարծ նա ամբողջ մարմնով ցնցուեց և գունատուած ոտի կանգնեց. նրա ականջին հասաւ զանգի ձայնը, բայց նա կարծես չէր հաւատում իր լսողութեան... մի րոպէ նա լուռ քարացած էր տեղումը, սիրտը ամուր բաբախում էր. նա երկրորդ անգամ լսեց զանգի ձայնը, այլևս անկասկած էր. նա

արագ դիմեց դէպի դուռը... Նա գիտէր, որ նրանք էն. ուրիշ ոչ կարող է լինել... Եթէ չլինէր այն միւսը՝ եթէ նա մենակ լինի, նա պատրաստ էր ընկնել նրա վզովը, սեղմել իր կրծքին, համբուրել, համբուրել անվերջ...

Մի քանի վայրկեան նա կանգնած էր դռան մօտ մի տեսակ ինքնամոռացութեան մէջ. ոտի ծայն լսելով նա ուշքի եկաւ, արագ վազեց դէպի հայելին, ուղղեց մազերը, հագուստը և գնաց դիմաւորելու նրանց:

Դուռը բացուեց, նա էր մենակ, միւսը չկար...

— Օր. Կատերինէ, բարև ձեզ, երևի չէիք սպասում:

— Ո՛չ, ո՛չ... Ընդհակառակը... Ես... Նա չկարողացաւ շարունակել և շփոթուած հրաւիրեց նստել...

Մի րոպէ երկուսն էլ լուռ էին:

— Ո՞ւր է Վասօն, նա ինչո՞ւ չեկաւ:

— Ամբողջ օրը չեմ տեսել, չգիտեմ ուր է կորել... ինձ շատ հարկաւոր էր նրան տեսնել, շատ... ինձ հարկաւոր էր...

— Ի՞նչ է պատահել ձեզ, դուք այնպէս յուզուած էք երևում...

— Ա՜խ, ոչինչ... ոչինչ: Ուղղակի անիծեալ կեանք է. մի ինչ որ 200 ռուբլի, ո՛չ մի տեղից չկարողացայ գտնել, որ շպրտեմ այդ անպիտանի երեսին. այժմ ուզում է մուրհակը դատարան տանել:

— Ինչո՞ւ ինձ չէք ասել... էլ ո՞ր օրւայ համար է բարեկամութիւնը... ամօթ ձեզ...

— Ա՜խ, ի՞նչ էք ասում, դուք առանց այն էլ շատ էք օգնել մեզ:

— Դատարկ բան է... Ես իսկոյն...

Նա արագ անցաւ միւս սենեակը և երկու րոպէ չանցած երկու թղթադրամ ձեռքին ներս մտաւ:

Երիտասարդ պարոնը արագ մօտեցաւ Նրան, բռնեց Նրա ձեռքը և սկսեց համբուրել։

— Դուք փրկեցիք իմ պատիւը։

Թղթադրամները ընկան աղջկայ ձեռքից. Նա դողում էր ամբողջ մարմնով։

— Ձեզ ի՞նչ պատահեց։

— Ոչինչ, ոչինչ, կանցնի... ուշքի գալով շշնջաց Նա ընկնելով բազկաթոռի մէջ։ Նրա կուրծքը արագ բարձր ու ցածր էր անում... Նա բացեց աչքերը, նայեց Նրան և յանկարծ բոլորովին անապասելի կերպով Նա ժունկ չոգեց, բռնեց Նրա ձեռները և կրքոտ սկսեց համբուրել։

— Ի՞նչ էք անում... ի՞նչ էք անում։

Նա լուռ, գունատ ոտի կանգնեց և լայն բացած աչքերով նայեց Նրան, կարծես չհասկանալով իր արածը. յանկարծ Նա երկու ձեռներով ծածկեց դէմքը, կարծես ամաչելով իր սիրուց։

— Ներեցէ՛ք... Ներեցէք... Հազիւ լսելի շշնջաց Նա մեռելի նման գունատ։

Մի րոպէ տիրեց լռութիւն։

Երիտասարդի աչքերը փայլեցին. Նա հասկացաւ, ուզեց գրկել Նրան, միանգամից համբուրել նոյն իսկ շրթունքները, բայց նայեց Նրա թառամած դէմքին և յետ քաշուեց։

Մի վայրկեան երկուսն էլ լուռ էին. տղան վերցրեց Նրա ոչ այնքան թարմ, բայց դեռ գեղեցիկ ձեռքը և համբուրեց։ Օրիորդը դողաց. այդ դողը կարծես էլեքտրական թելով անցաւ տղայի ամբողջ մարմնով, աչքերը փայլեցին, ամբողջ մարմնում զգաց մի տեսակ ջերմութիւն. Նա այլևս չէր կարողանում իրեն հաշիւ տալ. Նա նայեց Նրան. այս անգամ Նա Նրան աւելի գեղեցիկ թւաց։ Մի քանի րոպէ առաջ Նա զզուեց՝ տեսնելով այդ պառաւած աղջկայ կիրքը, բայց այժմ ինքը զգում է մի անդիմադրելի կիրք, որ մղում էր դէպի նոյն այդ պա-

ռաւած աղջիկը, որը գուցէ առաջին անգամն է, որ այդպէս այրւում, դողում է սիրոյ կրակից, որ գուցէ երբէք չի զգացել սիրոյ քաղցրութիւնը... Գուցէ հէնց այդ հետաքրքրութիւնն էր, որ այդպէս մի անգամից վառեց նրա ցանկութիւնը, և մի տեսակ ինքնամոռացութեան մէջ ընկաւ նրա գիրկը։

V.

Այն երեք օրը, որ նա ապրեց նրա հետ, նրան մոռացնել տւին իր կեանքի բոլոր դառնութիւնները։

Վերջապէս նա տեսաւ իր երազը իրականացած։

Նա սիրում էր և սիրւած էր՝ և այն էլ մի գեղեցիկ երիտասարդ տղայ, որին երբէք չէր երազել։

Նա անհամբեր սպասում էր նրան, նա նստած էր պատուհանի առաջ։ Ինքնաեռը վաղուց պատրաստ էր։ Սեղանի վրա դրւած էին ամեն տեսակի քաղցրեղէններ։

Նա լուռ նստած էր. ամեն մի կառքի ծայն լսելուց նա ցնցւում էր, անհամբեր սպասում էր կանգ կառնի՞ թէ ոչ։

Նշանակւած ժամից վաղուց անցել էր, բայց նա չկար. անհամբերութիւնից նա ոտի ելաւ ու նեարդային սկսեց պտտել սենեակի մի անկիւնից միւսը։ Նա պատրաստ էր երեխայի նման լալու։

Նա կանչեց աղախնուն, պատւիրեց նորոգել հանգած ինքնաեռը, ինքը ընկաւ գահաւորակի վրայ և երկու ձեռքով ծածկեց դէմքը։

Աղախինը զարմացած նայեց իր տիրուհուն, ուզեց բան ասել, բայց չասաց. լուռ՝ — վերցրեց ինքնաեռը և դուրս գնաց։

Այդ օրը նա իզուր սպասեց, իզուր սպասեց երկրորդ, երրորդ օրը. նա չկար։

Ցուսահատութիւնից նա պատրաստ էր գլխի մազերը փետտել, չանգռտել դէմքը, մատերը կրծոտել։

Ո՞ւր գնար, ումնից հարցնէր, ո՞րտեղ տեսնէր նրան։

Նա անկարող է ապրել առանց նրան։

Նա ոտի կանգնեց, վազեց իր սենեակը, սկսեց արագ հագնուել. նա կգտնի նրան, որտեղ որ լինի. գուցէ հիւանդ է. գուցէ նա էլ տանջւում է իրեն տեսնելու տենչով։

Արդէն պատրաստ էր դուրս գալու՝ երբ լսեց զանգի ուժեղ ցնցում ու կանգ առաւ, նա մի վայրկեան քարացած մնաց հայելու առաջ գլխարկը ծեռքին, ապա նետեց գլխարկը մի կողմ և արագ դիմեց դէպի դուռը, որ սղմի նրան իր կարօտած կրծքին, էլ երբէ՛ք, երբէք բաց չի թողնիլ... Նա թող սպանի նրան, միայն չթողնի նրան մենակ՝ որ առանց նրան ապրել չէր կարող։

Նա չապասեց աղախնուն, ինքը վազեց բանալու դուռը և շէմքի վրայ հանդիպեց նրա ընկերոջը. նա վախեցած մի քայլ յետ-յետ գնաց։

— Որտե՞ղ է նա։

Տղան ոչինչ չպատասխանեց, անցաւ սենեակ, մի կողմ նետեց ծեռքին բռնած գլխարկը, վերարկուն ու նստեց բազկաթոռի վրայ։

— Օհ, ի՛նչ յոգնել եմ։

— Ի՞նչ է պատահել նրան... ո՞ւր է նա։

— Ո՞վ, կարծես չհասկանալով՝ անտարբեր հարցրեց նա։

— Նա՛, Սերգէյը։

— Նա գնաց... տարան։

— Գնա՞ց... տարա՞ն...

— Տարան պատերազմ։

Նա մի քանի վայրկեան լուռ նայեց տղային, որ այդպէս

անտարբեր կերպով ասում էր այդ. մի քանի քայլ յետ-յետ գնաց և ուշաթափ ընկաւ գետին։

VI.

Մի շաբաթ էր անցել. նա հիւանդ պառկած էր անկողնում. ոտների մօտ նստած էր նրա պառաւ աղախինը։

Անկարելի էր նրան անաչել. գունատ, նիհարած աչքերը խորն ընկած. այդ մի շաբաթում նա 10 տարով աւելի ծերացած էր երևում։

Երկուսն էլ լուռ էին։ Պառաւ աղախինը շատ էր աշխատել մխիթարուել, բայց յուսահատուել էր ու լռել։

Ոչ մի շշուկ. չորս կողմը լուռ էր. լսւում էր օրիորդի թոյլ շնչառութիւնը այնպէս, որ զանգի ձայնը այդ լռութեան մէջ թնդանօթի հարուածի չափ ուժեղ թնդաց։

Աղախինը դանդաղ բարձրացաւ և գնաց դուռը բանալու։

Հիւանդն էլ լսեց այդ ձայնը. նա բարձրացրեց գլուխը և սպասում էր թէ ո՞վ է յիշել իրեն. նրա դէմքի վրայ խաղաց մի թեթև յոյս և էլ մարեց։

Մտաւ աղախինը մի նամակ ձեռքին. աղջկայ սիրտը սկսեց ամուր բաբախել՝ այնքան արագ, որ նա ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել... Նա համարեա խլեց աղախնու ձեռքից նամակը, նայեց ծրարին. աչքերը սևացան, նա էլի ընկաւ բարձերի վրայ։

Մի քանի վայրկեան նա մնաց այդ դրութեան մէջ։

— Ջո՞ւր, շշնջաց նա։

Աղախինը մի ձեռքով բաժակը մօտեցրեց նրա շրթունքներին, միւսով պահեց գլուխը. նա մի քանի ումպ խմեց, ողողեց շրթունքները, մի խոր շունչ քաշեց ու պառկեց տեղը։

Նեարդային կերպով պատռեց ծրարը։ Նամակը նրանից

էր։ Նա ներում էր խնդրում, որ այնքան անսպասելի էր եղել գնալը, որ չէր կարողացել գալ «մնաք բարով» ասելու և խընդրում էր, որ 300 ռուբլի տար ընկերոջը՝ որ ուղարկի իրեն. վերջում խնդրում էր աղօթել, որ Աստուածը պահպանէ իրան պատերազմի դաշտում։

Նա վերջացրեց նամակը. արցունքները խեղդում էին նրան. խոթերիք կերպով սկսեց լալ. նա լալիս էր, համբուրում նամակը, սեղմում կրծքին։

— Նա դեռ սիրում է ինձ... սիրում է։

Շփոթված աղախինը չգիտէր ի՛նչ անել, ինչպէս հանգստացնէր...

— Օրիորդ... օրիորդ...

— Մաշա, Մաշա, ճչաց նա, ընկաւ աղախնու գիրկը և արցունքների միջից սկսեց ջերմ-ջերմ համբուրել նրան։

Մի քիչ հանգստացած նա ժունկ չոգեց և ջերմեռանդութեամբ սկսեց աղօթել։

VII.

Նա ամենայն ուշադրութեամբ հետևում էր լրագիրներին. դրանով էր ապրում. յաճախ նա գնում էր նրա ընկերոջ մօտ՝ նրանից տեղեկութիւններ իմանալու։

Բայց մի օր նա երբ ծանծրացել էր այդ անհաճելի այցելութիւններից, ուղղակի յայտնեց՝ որ նա սպանուել է պատերազմում։

Այդ լուրը նա լսեց շատ սառը, լաց չեղաւ, գունատ, լուռ ոտի կանգնեց, առանց ոչինչ ասելու դուրս եկաւ սենեակից։

Ամեն ինչ ջարդուփշուր եղաւ. երազները թառամեցին. այժմ նա նման էր ծովափում ընկած կոտրած նաւի։

Նա խորը կերպով զգում էր, որ իր կեանքը վերջացաւ.

բաղդը մի անգամ էլ ուզեց ծաղրել նրան, մի անգամ էլ նրան ապրելու յոյս տուեց, բայց շուտով էլ խլեց, կարծես աւելի խորը զգացնել տալու խոր վիշտը, իր մենակութիւնը։

Բայց նա օրհնում է նրա պատահելու ժամը. նա երջանիկ եղել է, ինչ անենք, որ դա միայն մի քանի օր էր. այդ էլ բաւական է. նա տեսել է երջանկութիւն։

Նրա աչքում այնպէս ողորմելի թւաց իր կեանքը. էլ ինչի՞ն է պէտք նրան կեանքը։

Երբ նա դուրս եկաւ նրա մօտից, ճանապարհին երբ դեռ վերքը թարմ էր, նա ոչինչ չէր զգում. երբ տուն հասաւ, նրա ականջին պարզ հնչեցին նրա խօսքերը. «Նա սպանուել է պարզմում»... Նա ընկաւ մահճակալի վրայ երեսի վրայ. երկար նա տանջուեց, մինչև արցունքները եկան մխիթարելու նրան, և նա դառը լաց եղաւ։

Այդ օրը նա կանչել տուեց քահանային, գրել տուեց կտակը, նուիրեց բոլորը պատերազմում ընկած զինուորների որբ մնացած ընտանիքներին, իսկ տունը իր պառաւ աղախնուն։

Միւս օրը նրան գտան կախուած իր սենեակում։

Թաղումը շատ անշուք էր։

Աղախինն էր, որ աղեկտուր լալիս էր. և այն երկու երիտասարդները, նրանք էլ եկել էին հրաժեշտ տալու նրա դիակին։

ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.

ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ

I.

Իմ դէմն՝ անհուն ծով ծաւալուն,
Ափին նստել, միտք եմ անում.
Նայում լրին՝ լազուր ջրին
Ու թախծում եմ, ու հիանում...

Գրլխիս վերև—ոսկի արև,
Ճերմակ ամպեր երկնի մովում,
Մով-կապուտակ վրրանի տակ
Մեղմ ճեմում են լոյսի ծովում...

Աչքիս դիմաց, շեշտաարլաց՝
Ծովն է նետւում ճայը ճախրուն.
Մեղմ ծրփանքում որս է ճանկում
Ու սրլանՀում, ծածկւՀում հեռուն...

Եւ բրնութեան գեղեցկութեան
Փայլով տարւած՝ իմ հէգ սրրտում
Ինչ կայ մրռայլ, անյոյս, անփայլ—
Գեղեցկութեան ծոցն եմ նետում...

II.

Արտերը՝ ոսկի՜, դաշտերը՝ զրմրո՜ւխտ,
Երկնի կապուտը՝ անծի՜ր հովանի.
Լողում են վարդշող ամպերը պանդուխտ
Հուր-վերջալուսի ծովում ծիրանի...

Եւ փրռած վարսեր, սևաթոյր դէմքով,
Վէս բարձունքներից ոգին գիշերի
Իջնում է երկիր լրռիկ հրմայքով,
Որպէս ուրուական աղօտ յուշերի...

Եւ գալկանում է հեռում ոսկեհուր
Շողերի հիւսկէն՝ լեռները շողած.
Սևի՜ն է տալիս անտառը գանգուր,
Ու մա՜յը է մրտնում արփին նեաղած...

Զովիկ մի սիւգ է չորս դին երերում—
Այն գիշեր-ոգու վարսերն են ծրփում...
Ոսկի՜ արտերում, զրմրո՜ւխտ դաշտերում
Կեանքն էլ խոնջացած՝ աչերն է խրփում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ՍԻՐԱՎԷՊ

(Շուշանին և Վահանին)

Լեռան լանջ ելած, թաւիշ-դալարում
Մենք նստել էինք ու չէինք խօսում...
Լեռան ետևին արփին էր մարում,
Երեկոն իր նուրբ շրղարշն էր հիւսում։

Եւ մրթընշաղի շունչը հովաբոյր
Մեղմ օրօրելով սաղարթը չորս դին,
Գալիս, տալիս էր մեզ թեթև համբոյր
Ու անցնում, մտնում ծորերը մրթին...

Լեռան լանջ ելած, թաւիշ-դալարում
Մենք նստել էինք ու չէինք խօսում...
Եւ սէրը գաղտուկ մեր վառ սրտերում
Իր յաւէրժական պօէմն էր հիւսում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԱՆՑԻ՛Ր, Ա՛Յ ԱՂՋԻԿ...

Անցի՛ր, ա՛յ աղջիկ, հէգ սրրտիս մօտից,
Անցի՛ր դու անփոյթ, հէքիաթի նրման.
Սրրտիս օրոցքն է—մենութեան թախիծ.
Նիրհում է նա խո՞ր... Մի՛ յուզիր նրրան...

Սէր չունի՛մ... Սրրտիս վաղո՞ւց է օտար
Կանանց աչերի ժրպիտն հրմայուն.
Որպէս տարաժամ ծաղիկ ցրրտահար,
Չի՛ զրգռում էլ նա սիրայոյզ գարուն...

Եւ նրման աշնան տրխուր զալուկին,
Լուռ օրօրում է նա անդարձ յուշեր,
Օրօրում հրրճւանք և յոյզեր նախկին,
Ու թախծով երգում մերձեցող գիշեր...

Անցի՛ր, ա՛յ աղջիկ, երազի նրման,
Որպէս գիշերին՝ ցերեկն անհաղորդ.
Դու—չրքնաղ փերի լուսաշող գարնան.
Ես—մրթրնջաղի մենաւոր ճամբորդ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԵՐԱՁՆ Է ԿԱՆՉՈՒՄ...

Յարաղմուկ կեանքի նանիր մանրուքին
Օտար է, ընկե՛ր, օտար իմ հոգին.
Յարաղմուկ կրուի ժրխորում եռուն
Ինձ շող-երազն է միշտ կանչում հեռուն...

Կանչում է, որպէս լուսածին փերի,
Դէպի խաղացկուն սրլացքն ամպերի.
Դէպի ծաղկավառ, յարախի՛նդ, անմար
Արևոտ վայրեր, կապուտակ կամար...

Կանչում է այնտեղ, ուր գունեղ, անծիր
Զորեր, հովիտներ, պուրակներ ցան-ցիր
Լեռնալանջերից փարթամ, ծաւալուն
Նազով նայում են ծովի հայելուն...

Կանչում է այնտեղ, ուր թաւ կանաչում
Արծաթ-ջրերն են անլուռ կարկաչում.
Ուր նոճիների քրնքոյշ հովանում
Գեղեցկի երգն է սրտում ծովանում...

Ականջ եմ դրնում հրմայիչ կոչին,
Եւ, որպէս աշնան մրշուշում նոճին՝
Ցաւէրժ վերամբարձ, յաւէրժ դալարուն—
Հոգիս տենչում է արևն ու հեռուն...

ԱՎ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Հոգեբանական էտիւդ)

Վաղն արդէն հինգշաբթի է։

Իսկ ես դեռ ոչինչ չեմ արել։

Ահա երեք շաբաթ է, ինչ ամեն օր, հէնց որ մթնում է, փակւում եմ սենեակումս, ձեռքս առնում թուղթն ու մատիտը՝ մի փոքրիկ ծրագիր կազմելու։

Սակայն բաւական է մի րոպէ, որ ինձ պատկերացնեմ ուսումնարանի ընդարձակ դահլիճը և փոքրիկ ամբիոնը, որի վրայից ճառ եմ արտասանում. բաւական է, որ ես զգամ հասարակութեան զսպւած շնչառութիւնը և այն անհամար հայեացքները, որոնք դէպ ինձ են մեխւած. բաւական է, որ աչքիս ընկնեն առաջին կարգում բազմած հոգաբարձուների լայն ու բութ դէմքերը. բաւական է այդ փոքրիկ մտապատկերը, որ իմ մտքերն իսկոյն ցրւեն, և ես յիշեմ որևէ դէպք իմ անցեալից—յաճախ չնչին և աննշան,—ու տարւած այդ յուշով կորցնեմ ողջ գիշերը։

Այս երեկոյ ինձ հանգիստ չի տալիս, ինձ հալածում է... Նրա հարսանիքը...

... Ես ուշ գնացի։ Ես նոյն իսկ չէի ուզում գնալ ու

պատրեցի «Հարսանեաց Հրաւէրը»... «Բայց ոչ, ասացի, թող տեսնեմ իմ ներկայութեամբ ինչպէ՞ս ես դու ուրախանում»...

Եւ երբ մտախոհ ու տխուր պարտիզի ներսն անցայ, ուր հարսանիքն էր կատարւում, մի րոպէ մտքովս անցաւ թագնւել թփի յետևն ու հեռւից դիտել նրան՝ իր փեսացուի հետ։

Ցանկարծ կանացի մի ձայն ցնցեց ինձ. յետ նայեցի ու ճանաչեցի նրան՝ նորահարսի սպիտակ զգեստով։

— Ինչո՞ւ այսպէս ուշ, պարո՛ն Արամ, ասաց նա յուզւող ձայնով.—մի ժամանակ ինձ թւաց, որ այլևս չէք գայ. ինչո՞ւ չէք մտնում հանդիսականներին։ Գնա՛նք, ի միջի այլոց կծանօթացնեմ և իմ փեսայի հետ։ Գիտեմ, դուք նրան չէք հաւանիլ. ձեր և նրա հայեացքների մէջ տարբերութիւն շա՞տ կայ... բայց, գիտէ՞ք ինչ. միայն այս երկու օրս նրան մօտիկուց ճանաչեցի. չպէ՛տք է այնքան էլ խստապահանջ լինել. նա լաւ մարդ է, բարի, բնաւորութիւնը մեղմ. յամենայն դէպս նրա... նա լաւ ընկեր կարող է լինել...

— Գնա՛նք, ծանօթացրէ՛ք, վրայ բերի ես վճռականօրէն։

Այդ նրան տարօրինակ թւաց. մի րոպէ լռեց, քարացաւ ու տագնապով լի նայեց աչքերիս։

«Հը՞մ... զարմանո՞ւմ ես... չէի՞ր սպասում. դու կարծում էիր ես կհրաժարւե՞մ, ես կսկսեմ հայհոյել նրան իբրև իմ բաղդը յափշտակողի՞»...

— Ինչո՞ւ չէք շարժւում. գնա՛նք, ծանօթացրէք ինձ ձեր փեսայի հետ, կրկնեցի ես սառն ու շինծու անտարբերութեամբ։

Նա հպատակւեց ինձ։

Մենք մօտեցանք փեսային։

Իսկոյն մեզ վրայ կենտրոնացան հիւրերի հետաքրքիր ու հարցական հայեացքները։ Ոմանք երկիմաստ ժպտացին, ոմանք փսփսացին իրար ականջի, ոմանք ցինիկօրէն քրքջացին...

Ատելութեամբ ու զզւանքով լիքը ես խոյս տուի այդ հասարակութիւնից, բարձրացայ պատշգամբը ու առանձնացայ այն փոքրիկ սենեակում, ուր յաճախ, ծմեռւայ երեկոներին, մենք այնքան մտերիմ ժամեր ենք անցկացրել, խօսել, կարդացել, ոգևորւել...

Գաւառական փոստը նոր էր եկել. ես սկսեցի թերթել ստացած լրագրները՝ առանց, սակայն, կարդացածս հասկանալու։

Լսեցի, թէ ինչպէս դուրսը լռեց լարաւոր երաժշտութիւնը, և ասիական բռի փողահարները զլեցին իրենց ծայնառատ նւագը։

Հարևան սենեակներում ու նախասենեակում հնչեցին շտապ ոտածայներ, աղմուկը խտացաւ, մարդիկ իրար անցան։

— Դէ՛հ, շո՛ւտ արէք, հարսին պսակելու են տանում, ով եկեղեցի է գնալու, թող պատրաստւի. լսւում էին այս ու այն կողմից կարգադրող ծայներ։

«Պսակելո՞ւ են տանում... թո՛ղ, թող տանեն... ես հօ ոչինչ... ես նոյն իսկ լրագիր եմ կարդում, թէ ինչպէս Կողբ գիւղում գողերը ուղեցել են մի կով փախցնել և դարբասի մօտ... դարբասի մօտ... հա՛, փողահարներն երթի եղանակն արդէն դարբասի մօտ են փչում»...

Լրագիրը ձեռքիցս սայթաքեց. սիրտս սկսեց արագ-արագ բաբախել. գլուխս առայ ափերիս մէջ։

Ցանկարծ լսում եմ կանացի թաւշեայ շրջազգեստի խշշոց. բարձրացնում եմ գլուխս ու տեսնում նրան՝ ոտքից մինչև գլուխ սպիտակ հագնւած, պսակի ոսկեցող քօղը երեսին։

— Մնա՞ք բարև... Արա՛մ, մնաս բարև... շշնջաց նա կրցկտուր,—վաղը, վաղը մենք ճանապարհւում ենք։ Գուցէ վերջին անգամն է... ների՛ր... Ես էլ շատերից մէկը... հայ կինը... չկարողացայ, ուրիշների կամքը կատարեցի... և ուզում էի ասել,

որ դու... որ ես քեզ յաւիտեան չպիտի մոռանամ... մնաս բարև... ների՛ր...

Ես վեր կացայ տեղիցս, լռելեայն ու կոպիտ երեսս շուռ տուի։

Զգացի, թէ ինչպէս նա որսաց իմ ձեռքն ու սեղմեց իր տաք շրթունքներին։ Ես խլեցի ձեռքս ու մնացի նոյն դրութեան մէջ։ Եւ երբ երեսս դարձրի՝ նա այլևս չկար։

Այն ժամանակ ձեռքս մօտեցրի իմ շրթունքներին ու սկսեցի, խելագարի պէս, համբոյրներ դրոշմել այնտեղ, ուր նրա դառն ու աղի արցունքներն էին կաթել...

— Նորահարսն ու փեսան ապրած կենան, ուրա՜... որոտաց մէկը պատշգամբից։

— Ուրա՜... ա՜... արծագանք տուին հարիւրաւոր ձայներ ներքևից։

Փողահարները նւագում էին, այս անգամ դարբասից դուրս, փողոցում, ճիշտ այն սենեակի տակը, ուր ես էի գտնւում։

Ես վազեցի, հանգցրի ճրագը ու կանգնելով պատուհանի առաջ, ճանապարհ դրի պսակելի զոյգին... Նա չիմացաւ, որ ես մութ սենեակից դիտում եմ նրան... Զոյգը անցաւ, ես ընկայ աթոռի վրայ։ Դրսից հարսանիքաւորների պլպլացող մոմերի աղօտ շողերը երերացին սենեակի մութ առաստաղին ու չքացան. հարսանիքը գնաց, անցաւ...

Եւ այս րոպէիս էլ, այս ուշ գիշերին, երբ փետրուարի ցուրտ քամին ոռնում է պատուհանիս ճեղքերի մէջ, յիշեցնում է ինձ փողահարների այն զիլ ու միալար նւագը, որ հեռագհեռէ հեռացաւ ու նւաղեց...

Շնորհակալութիւն քեզ, քամի՛, հազար շնորհակալութիւն, որ խզեցիր իմ յուշերի շարանը։ Զէ՞ որ այսօր վերջին գիշերն է, և ես վաղը հանդիսին ճառ պիտի արտասանեմ։

Բայց, սպասի՛ր, նոր թուղթ հանեմ, մաքուր և անբիծ

կաց, մատիտս սրեմ. այ, այսպէս։ Այժմ թող թղթի ճակատին ճառիս վերնագիրը գրեմ.

Վարդանանց պատերազմը.

Ու տակը հաստ գիծ քաշեմ։ Ահա, այսպէս։ Այժմ մի փոքրիկ կոնսպէկտ. մի թեթև ծրագիր։ Բայց նախ և առաջ կենտրոնացնեմ իմ մտքերը։ Ի՞նչ խօսեմ առհասարակ, ինչպէ՞ս տանեմ իմ ճառը... ինչպէ՞ս սկսեմ... Մի փոքրիկ համբերութի՛ւն. սպասի՛ր... վաղը կամ, աւելի ճիշտն ասած, այսօր (չէ՞ որ կէս-գիշերից անց է), ժամը 12-ին, երբ կվերջանայ պատարագը, խուռը բազմութիւնը կլցնի ուսումնարանի դահլիճը։ 12-ից քսան րոպէ անց (անպատճառ քսան րոպէ անց) կբարձրանայ վարագոյրը, և բեմի վրայ դասաւորուած երգեցիկ խումբը ճեղքելով՝ ամբիոն կելնեմ։

— Դպրոցի տեսո՞ւչը... Արամ Վհատեա՞նը, կշշնջան դահլիճում։

Եւ ես կսկսեմ ճառս։

Ես այս քաղաքում անյայտ մարդ չեմ։ Արամ Վհատեանին ամեն ոք գիտէ։ Փոքրիկ կարծիքի չեն և իմ հռետորական ձիրքի մասին։

Այո՛, ես գիտեմ լարել ունկնդիրների ուշադրութիւնը. ես կարող եմ ազդել նրանց մտքի ու զգացմունքի վրայ։ Այդ է պատճառը, որ նրանք ամեն տարի Վարդանանց տօնին գալիս և լցնում են դահլիճը։

Իսկ Վարդանանց պատերազմը ինձ համար եղել է այն սքանչելի կանւան, որի վրայ ես հիւսել եմ իմ գաղափարները, իմ տենչերը, իմ ձգտումները...

Վարդանանց պատերա՞զմը... Դա եղել է ոգևորութեան այն երանելի առւակը, որով ոռոգել եմ իմ հոգեկան անդաստանը, միևնոյն է ինչ ցանքսով էլ ցանւած լինի։

Մ՛երթ ազգային և կուլ՛տուրական վերածնութիւն, մերթ Տաճկահայաստանի ազատագրութիւն, մերթ սոցիալական կռիւ և ճնշուածների ու հալածուածների դատ...

Իսկ այս տարի՞։

Բայց, կա՛ց, ես արդէն սկսել եմ ճառս... Հրա՞մ... ճնշուածների և հալածուածների դա՞տ... սոցիալական կռիւ... Մի՞թէ այս խօսքերը երբ և իցէ արտասանել եմ... Ազատագրական շարժման այն լայնածաւալ փոթորիկը, որ... Չէ՛, ես չեմ կարող շարունակել։ Այդ ամենը կե՛ղծ է, շինծու և զզուելի. այո՛, զզուելի։

Ես արդէն սկսում եմ կմկմալ։

Ա՜խ, ինչո՞ւ ցամաքեց իմ ոգևորութեան աղբիւրը. ո՞ւր կորաւ իմ հաւատը։ Կեանքիս կէ՞սը կտայի...

Ցանկարծ նկատում եմ (մի բան, որ ուրիշ տարիներ երբէ՛ք տեղի չի ունեցել), թէ ինչպէս երրորդ պատրաստականցի Տիգրանեանը զրչածայրով իր ընկերների կռներն է ծակծկում. իսկ Գէորգեանն անվերջ կերպով ծիծաղում է։ Դաստիարակ Որոտեանը փոխանակ կարդապահութեան վրայ հսկելու կռացած անընդհատ փսփսում է օրիորդ Նաղիկեանի ականջին... Ա՜խ, ատելով ատում եմ այդ ծծկերներին, որոնք աշակերտական սեղանը դեռ չթողած ուսուցչական ամբիոնն են բարձրանում... Ի՞նչ ուսուցիչներ կարող են լինել դրանք, ասացէ՛ք խնդրեմ...

Վրդովուած, հայեացքս նրանցից դարձնում էի դէպի դահլիճը... Եւ ի՜նչ եմ տեսնում... Առաջին կարգում սրբազանը ննջում է, իսկ հոգաբարձուները ծոյլ յօրանջում են։ Ինձ լսում են մի քանի ծանձրացած դէմքեր, թոյլ քմծիծաղները բերանների։ Տէ՛ր Աստուած, ինչքան քիչ հասարակութիւն է հաւաքուել այս տարի... Ա՜, ես գիտեմ պատճառը։ Նրանք զգացել են իմ մէջ կատարուած փոփոխու... Ո՛չ, դուք սխալւում էք,

ես դեռ ճառել գիտեմ... Ես դեռ տեղի չե՛մ տալ... Դուք հասկանո՞ւմ էք...

Աչքս մի դէմքից միւսն եմ դարձնում և ես դահլիճի մէջ սկսում եմ որոնել մէկին, որի ներկայութիւնը, թւում է, ինձ նոր թափ, նոր եռանդ կտայ... Ահա՛, ահա նրա սովորական տեղը. չորրորդ կարգի առաջին աթոռը... Դատարկ է... Նա դահլիճումը չէ...

Մի անսպառ կարօտ, մի անտակ ափսոսանք պատում է իմ սիրտը, և արտասուքի կաթիլները խեղդում են բուկս...

Ես այլևս անկարող եմ շարունակել:

Ցանկարծ դահլիճում լսւում են սուլոցներ...

Ուսուցիչներն ու աշակերտները խառնւում են միմեանց. սրբազանը քնից արթնացած ոտքի է կանգնում. ոմանք աթոռների վրայ են բարձրանում:

Տիրում է աղմուկ, իրարանցում:

Ես ամօթահար իջնում եմ ամբիոնից:

Իմ ճառը կիսատ է մնում...

Մէկը դեռ շարունակում է անընդհատ սուլել...

Բայց դա կրկին քամին է, որ բաղխում է դրսից պատուհանիս փեղկերն ու վայում նրա ճեղքերի մէջ: Ուրեմն այս ամենը երևակայութիւն էր և ես զառանցում էի: Որքան ուրախ եմ... Կնշանակի դեռ ևս մի ողջ գիշեր կայ առաջիս, և. ես դեռ հնարաւորութիւն ունիմ վաղւայ ճառիս համար նախապատրաստւելու: Ես իսկոյն, իսկոյն. ես շատ շուտ կկազմեմ ծրագիրը... ա՜խ, եթէ կրկին այդ հարսանիքը չկաշկանդի իմ մտքերը:

Տարօրինակ է, եօթ ամիս է անցել այդ օրից, և ոչ մի անգամ նա այսքան պարզ և այսքան կենդանի չի պատկերացել ուղեղիս մէջ՝ ինչպէս այսօր:

Կարծես երէկ էր:

Երանի թէ գնացած չլինէի: Եւ ես միշտ տատանւում էի՝

գնամ թէ չգնամ։ Իսկ երբ մօտեցայ նրանց տանը, հրավառուած դարբասի մօտ ինձ ընդունեց նրա հայրը, մեր դպրոցի հոգաբարձուն։ Մեր քաղաքում նա անուանի մարդ է։ Նա ինձ ներս հրաւիրեց, սեղմեց իմ ձեռքն ու առաջնորդեց դէպի պարտէզը, ուր տեղի ունէր հարսանիքը։ Ապա նա մի զննող հայեացք ձգեց վրաս ու մեղմ ժպտաց, ներողամիտ, բայց յաղթական ժպտով։

Ես հասկացայ այդ ժպտի իմաստը։ Նա գիտէր ամեն ինչ և գոհ էր, որ ելքը յաջող էր...

Ես անցայ պարտէզ։

Անհամար գոյնզգոյն լապտերները, ինչպէս պսպղուն ժանեակներ, մի ծառից միւսն էին ձգւում։ Նրանց դողդոջուն լոյսի վրայ կամար էր տուել կէս-գիշերուայ խաւարն, իր կապոյտ թևերի տակ ծածկելով բարձր ծառերի մեղմօրօր կատարները։

Հնչում էր լարաւոր երաժշտութիւնը։

Եւ մեղմախօս թառի թրթիռներն ու նրան ձայնակցող ջութակի վշտոտ հեծկլտանքները ծնւում էին այդ լուսեղէն կամարի տակ, ծուլւում ու դափի թոյլ հարուածների հետ դէպի վեր սլանում և մեռնում այնտեղ սաղարթների մթին ծալքերի մէջ։

Հանդիսաւոր ու հիասքանչ դէմքերից մի օղակ կազմած մի չքնաղ կին, թեթև ու ճկուն, սահում էր կանաչ խոտի վրայ և պարում հեշտանքով ու նազանքով լիքը «ուզունդարան»...

Հնչում է ծափը, թնդում են մարդկանց խինդ աղաղակները։

Ինձ թւում է, որ ես տեսնում եմ մի կախարդիչ հէքիաթ, որ ես լսել եմ մանկութիւնից, չգիտեմ որտեղ և ումնից։

Ինձ թւում է, որ ես տեսնում եմ մի ոսկեհիւս երազ, երբ ես դեռ փոքր էի ու քնում էի մօրս գրկին փարած։

Հէքիաթ էր, երազ էր այդ։

Ախ, հէքիաթ էր և իմ ողջ անցեալը, երազ է և իմ կեանքը։

Անցաւ, գնաց ամեն ինչ...

— Իսկ դուք, յարգելի հանդիսականներ, սպասեցէ՛ք որքան ուզում էք։

Ես ձեզ ասելու այլևս ոչի՛նչ չունիմ...

ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ.

ՀԱՏՈՒԱԾ

Ցոգնատանջ սրտով նատեցի մենակ
Աշխարհում, աղօտ
Անյայտ կողմերի մութ ճանապարհին,
Աւեր շէնքերի մոխիրների մօտ,
Աշնան օրերի գունատ մահացող
Ծաղիկների մէջ, ցուրտ հողի վրայ,
Ծանր երկնքի տաղտկօրէն լացող
Անձրևների տակ.—
Մոռացայ բոլոր հոգսերն առօրեայ.
Ցանկութիւններս ապարդիւն ու սին
Անմիտ և ունայն տենչերիս ուղին,
Սուտ վարդերն ու սուր փշերը նրա
Մերժեցի ընդմիշտ, մատնեցի մահին,
Անդարձ մոռացայ...
Եւ խաւարն անհուն, գիշերն անթափանց
Իր լայն թևերը փռեց իմ վրայ...

Լուսեղէն ու սուրբ սիրոյ երազը
Խաւարչտին կեանքում,
Եւ երջանկութեան ցնորքներս հին,
Եւ տառապանքի գիշերներն անքուն
Իմ սրտին ընդմիշտ օտար թւացին,
Օտար թւացին...

Եւ չըկար ոչինչ, որ սիրտս դիւթէր.
Ոչ սիրոյ կարօտ, ոչ բախտի ծարաւ,
Ոչ հարստութեան ու մեծութեան բեռ,
Ոչ ապարդիւն փառք և ոչ փայփայող
Ու սրբազան ցաւ
Զարչարանքի և ինքնազոհութեան։
Եւ այնպէս անգոյն, անմիտ, ապարդիւն,
Տաղտկալի և սին
Թւաց ամեն ինչ աշխարհում անհուն...
Եւ ամենքն ընդմիշտ օտար թւացին
Եւ անդարձ հեռու...
Քար էր իմ սրտում և ծանր, և ցուրտ
Եւ աշխարհն էր քար՝ սառն ու անխորհուրդ...
Երկինքն էր լալիս պաղ արցունքներով,
Լալիս էի ես մերժւած ու խռով,
Եւ ցուրտ աշխարհում
Ինքս իմ սրտին հարսպատ չէի—
Ու ծաղը էր թւում հեկեկանքս չոր...
Ես լալիս էի,
Բայց օտարի պէս էի ունկնդրում
Ինքս իմ հոգուն, ինքս իմ լացին...
Ու մութ էր շուրջս և խաւար անհուն
Իմ խաբւած սրտում՝ մթնամած գիշեր
Եւ պաղ, և ծանր, ծանր, որպէս քար
Եւ տաղտկութեամբ լի և անվերջ երկար
Անժիր ու անհուն—
Եւ ոչ մի հեռւում՝ լոյս չէի փնտրում...
Եւ համը էր ընդմիշտ աշխարհն ինձ համար—
Եւ օտար և մութ.
Ես ընկած էի անզօր ու մոլար

Ու յաւէտ մենակ, և անդարձ մենակ
Անանուն, անյայտ անծանօթ հեռուում...
Ո՛վ ազատութիւն յաւիտենական,
Մահ, շընչացին շուրթերիս տակը
Եւ այդ շշուկը դառը էրթաց.
Գրկեցի հողը մի ցուրտ ցանկութեամբ,
Եւ նա իմ առաջ բացեց իր գիրկը
Անսուտ գգւանքով.
Եւ գերեզմանի խորշը ցրտաշունչ
Անուշ թւաց ինձ,
Որպէս մայրական գիրկը սրտամոք
Պայծառ օրերում,
Որպէս հեռաւոր երկրում մոռացած
Մայրական երգի սիրով օրօրող
Թովիչ օրօրան...
Մահ, շընչացի, և սիրտս նրան
Ընդունեց սիրով, որպէս դթառատ
Հեկեկանքը մօր նուրբ կարեկցութեան.
Եւ հեռացայ ես ու հեռացայ ես
Մի անյայտ կամքի զօրութեամբ անուշ
Հեռուն ու հեռուն,
Ողջը մոռացայ օտար աշխարհում,
Անդարձ աշխարհում...
Եւ խաւարն անհուն գգւանքով թեթև
Ծաւալեց շուրջս և փռեց վրաս.
Ու կեանքս բոլոր մի երկարատև
Նինջ թւաց հոգուս, մի տխուր երազ,—
Մանկական մի երգ հեռու օրերում,
Նրբին մի համբոյր, որ չունի անուն,
Որ չունի անուն...

Ինձ ահեղ թաց խնդութիւնս նոր,
Կարծես մի վերին ու նուրբ հրաշքով
Լուսացաւ իմ մէջ առաւօտն անհուն
Եւ թեթև թաց կեանքս երկրային,
Որպէս առւակը սարերից իջնող,
Որպէս ամպերի շարքը ոսկեղէն
Գարնան արևող երկնքում չլող...
Ու թաց յանկարծ, որ չրկան, չրկան
Անցեալն, ապագան...
Թաց, որ մի սիրտ իմ վիշտն է գգւում
Հանգիստ է ասում բոլոր յոյզերին.
Բոլոր յոյսերին օրօր է ասում,
Օրօր է ասում...
Բաբախուն սիրտս գրկել է ուզում
Գգւել է ուզում
Անսուտ խնդութեան ոսկէ երազում...
Թաց, որ մէկը իմ ցաւն է երգում,
Իմ լացն է լսում,
Իմ լռութիւնն է գգւում իր գրկում.—
Եւ իր մեծ հոգում,
Իր անհուն հոգում՝
Իմ սրտից խորն է թախիծս գգում...
Ճիչ հանեցի ես սիրով խնդագին,
Աղաղակեցի օրհներգու ձայնով,
Սիրտս նետեցի քարին ու ջրին,
Խառնեցի հոգիս աստղերի երգին,
Պարզեցի կեանքս՝ պարզ ու խնդագին՝
Ցաւիտենութեան, յաւիտենութեան...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ.

„ՈՍԿԷ ՀԷՔԻԱԹ“ ԳՐՔԻՑ

I.

Արծաթաշող առուն առուին
Զայն է տալիս ու երգում.
Զի տրտնջում լալկան ուռին,
Ուռին առուի եզերքում...

Շուրջըդ ահա գիշեր ու երգ՝
Հանգիստ, հէքիաթ ու երազ.
Կոյս ամպերը ճերմակ ու մերկ,
Աստղերն անուշ—հեզ ու նազ...

Սիրտ իմ յոգնած, մեղմ օրհներգեր՝
Հնազանդ ու ցնորուն՝
Երկինք ու ծով, ամպ ու երկիր,
Այս մարդերն ու այս առուն...

Եղիր դու էլ պայծառ ու հեզ,
Հէքիաթ եղիր ու երազ.
Ծաղկանց ու կոյս ամպերի պէս
Աստղերի պէս հեզանազ...

Արծաթաշող առուն առուին
Ձայն է տալիս ու երգում.
Չի տրտնջում լալկան ուռին,
Ուռին առի եզերքում...

II.

Դու խօսում ես, բայց կարծես,
Դու չես՝ գիշերն է երգում.—
Այնպէս նուրբ ես, այնպէս հեզ,
Այնպէս մեղմ ես ինձ գրկում.—

Լուսեղէն է խօսքերիդ
Իմաստը պարզ ու խորունկ.
Որպէս մեղմ ու անառիթ
Գարնան, գարնան մտորմունք։

Եւ անդորը է ձայնը քո
Հաշտ է թախծոտ իր շեշտով
Որպէս անուշ երեկոյ
Լիքը սիրով ու վշտով։

Դու չես, դու չես, հեռաւոր
Վարդենիներն են շրշում,
Ծովն է երգում լայն ու խոր
Ցաւէրժական մշուշում։

Իմաստուն է և արդար
Օրերի երգն անընդհատ,
Դառը տանջանք ու դադար,
Եւ վիշտ, և սէր, և հէքիաթ...

Գիշեր... լուսնեակ... լռութիւն...
Անուշ թախծի լուսէ երգ...
Փուի՛ր, փուի՛ր իմ հոգում
Խաղաղութի՛ւն անեզերք...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՎԻՃՏ

Փոքրիկ Սուրէնը վաղ առաւօտեանից մեծ բան ու գործի էր։

Նրա համար գնել էին նոր մահճակալ։

Եւ նա, որ մինչև այժմ քնում էր հայրիկի և մայրիկի ննջարանում, այսուհետ պիտի քնէր տատիկի սենեակում, տատիկի հետ։

Հէնց որ նոր մահճակալը սարքեցին՝ Սուրէնը սկսեց իր գաղթը։ Ինչե՞ր ասեմ՝ նա չհանեց իր հին մահճակալի տակից։ Կոտրած սայլակը, անզսպան շոգեկառքը, անպոչ ձին, այն արկղը որ ձիու համար ախոռի տեղ է ծառայում, հոլն ու պտուտակը և այլն, և այլն։ Այդ ամենը նա, մէկ-մէկ, տեղափոխեց իր նոր օթևանն ու սարքեց նոր մահճակալի տակ։ Այնուհետև տարաւ հայրիկի նուիրած թուրն ու հրացանն ու կախեց ուղիղ գլխավերևը, որ, եթէ բան է, գիշերը գողերը մտնելու լինեն մահճակալի տակից ձին գողանալու՝ իսկոյն վերցնի, խփի նրանց և սպանի։

Սուրէնը անչափ գոհ էր իր նոր սեփականութիւնից։

Նախ, որ նոր մահճակալն առանց ցանկապատի էր և իր քէֆն ուզած ժամանակ կարող էր ելնել ու իջնել, ինչպէս իրենից մեծերը. երկրորդ, որ ամենագլխաւորն էր, նա, տատիկի սենեակում, քնելիս, կարող էր իր ծոցը դնել փոքրիկ, չալիկ

Փիսոյին։ Տատիկը պառաւ է՝ չի նկատի. տատիկը բարի է ու ներողամիտ՝ նա մայրիկի պէս չի վերցնի ու կատուին պատրշգամբից ցած չի ձգի։

Եւ այսօր, էգուց, միւս էգուց, յետոյ էլի միւս էգուց և ուրիշ շատ էգուցներ Սուրէնը պիտի քնէր տատիկի հետ միասին, միևնոյն ննջարանում, նոր մահճակալի վրայ։

Այդ օրը Սուրէնն անհամբեր մթնելուն էր սպասում։ Նրան շատ էր հետաքրքրում, թէ նոր մահճակալի վրայ ինչպէս պիտի պառկի, շորերը ուր պիտի դնի և ինչպէս պիտի քնի։

Վերջապէս հասաւ երեկոյեան ժամը ութը։ Մայրիկը նրան կերակրեց ու ձեռքից բռնելով առաջնորդեց դէպի նոր օթևանը։ Շորերը հանելով նա նրան պառկեցրեց անկողնում, երեսիցը համբուրեց և բարի գիշեր մաղթելով հեռացաւ։

Սակայն մի փոքր անց կրկին ներս մտաւ, տնտղեց սենեակն ու սպառնալով Սուրէնին ասաց.

— Տե՛ս, Սուրիկ, եթէ կատուին դրել ես անկողինդ՝ էլ ես քո մայրը չեմ, և հայրիկին էլ կասեմ, որ դու շատ և շատ վատ տղայ ես։

Բայց Սուրէնն այդ օրն ամենից քիչ կատուի մասին էր մտածում։ Աւելի շուտ հետաքրքրել էր նրան ու զրգռել նրա երևակայութիւնը նոր շրջապատը։

Նա փոքրիկ, սևահեր գլուխը սպիտակ բարձի վրայ մերթ աջ, մերթ ձախ դարձնելով, աչքերը պլզած, դիտում էր սենեակի բոլոր իրերը և այն մեծ ու փոքր ստուերները, որոնց, սեղանի վրայ դրած փոքրիկ ճրագը, ծգում էր ամեն մի առարկայի կողքին։ Եւ լուռ իրերի ու մութ ստուերների մէջ մենակ մնացած Սուրէնին թւում էր, թէ այս գիշեր իր աչքերին քուն չէր գալու։

Մի ժամ անց, զգոյշ ու մեղմ, բացուեց դուռը, և տնքալով ու ճռռալով ներս մտաւ պառաւ տատը։

Սուրէնը խորամանկութեամբ փակեց աչքերը։

Տատիկն ոտների ծայրով, համբաքայլ, մօտեցաւ նրան, իր ցուրտ և բարակ շրթունքները հպեց նրա այտերին ու հեռացաւ դէպ իր մահճակալը։

Սուրէնը վերմակը գլուխը քաշեց և տակից մի անցք բանալով հետաքրքիր ու կայտառ աչքերը տատիկին յառեց։

Այդ տեղից նա պարզ տեսնում էր, թէ ինչպէս տատիկը մէջքը նրան դարձրած պատրաստւում էր հանւելու։ Ահա նա ուղում է շրջազգեստի չափրաստները բաց անել. սակայն նրա դողդողուն և կնճռոտ մատները միանգամայն այլ տեղ են որոնում նրանց, ու երկար ժամանակ չափրաստները չեն բացւում։

Սուրէնը յիշեց մայրիկի դիւրաշարժութիւնն ու մտքումը հեգնեց պառաւ, անշնորհք տատին։

Վերջապէս նրան յաջողւեց շորերը յետ կոճկել ու կամաց-կամաց հանւել։ Եւ ամեն մի շարժում անելիս նա, անվերջ կերպով, տնքում ու ճռռում էր։

Երբ նա իր շապիկն էր փոխում, Սուրէնի աչքովն ընկաւ նրա զոյգ թառամած ու գորշ ստինքները, որոնք կախւած էին նրա չոր կրծքից, ինչպէս երկու, դատարկ տոպրակներ։ Տարօրինակ և տգեղ թւացին Սուրէնին տատիկի ստինքները...

— Եթէ Թումիկը,—մտածեց Սուրէնը,—որ այժմ օրօրոցումն է, ծծելու լինի տատիկի ծիծը, կաթ կգա՞յ թէ ոչ։

— Չէ՛, չի գայ, պատասխանեց ինքն իրեն Սուրէնը. կաթ չի գայ, որովհետև Թումիկը տատիկի երեխան չէ։ Այո՛, հայրիկն ասում է, որ նա էլ Թումիկի պէս տատիկի կաթն է ծծել։ Իսկ եթէ հայրիկը հիմա ծծի տատիկի ծի՞ծը...

Մի րոպէ Սուրէնը պատկերացրեց հայրիկին, այն մեծ, միրուքաւոր հայրիկին, Թումիկի պէս օրօրոցում կապկպած, Թումիկի պէս լալկան՝ տատիկի կաթը ծծելիս։ Այդ մտապատկերը

Նրան շատ զարհուրելի թվաց, և նա բարձր-բարձր ծիծաղեց վերմակի տակ։

Բայց իսկոյն ուշքը վրան հաւաքեց ու, բերանը բռնած, լռեց, որ տատիկը նրան չլսի։

Տատիկը նրան լսել չէր կարող, որովհետև ամբողջովին թաղուել էր վերմակի տակ։ Նա ողջ մարմնով դողդողում էր, անընդհատ տեղը յարմարեցնում և աւելի ու աւելի կծկւում հաստ ծածկոցի տակ։

Սենեակը ցուրտ էր։

— Այո՛, մրսում է, մտքումը վճռեց Սուրէնը. մայրիկն էլ է յաճախ մրսում։ Բայց հէնց որ մայրիկը մրսում է, հայրիկը նրան տաքացնում է։ Իսկ տատի՞կը։ Ինչո՞ւ հայրիկը մի-մի անգամ էլ տատիկի մօտ չի գալիս տաքացնելու։

Մի փոքր անց տատիկը գլուխը հանեց վերմակի տակից ու հանգցրեց ճրագը։ Մի ակնթարթում բոլոր ստուերները դուրս ցատկեցին իրենց դարաններից ու կլանեցին սենեակը։ Մութ խաւարի մէջ Սուրէնը ահ զգաց, փակեց աչքերն ու, մի քանի րոպէ անց, անուշ քնեց...

Անցաւ մի ամիս, և Սուրէնը միանգամայն ընտելացաւ իր նոր օթևանին։

Մի գիշեր նա վատ երազներ տեսաւ։ Նրա ականջին դիպան ինչ որ հնչիւններ, շշուկներ։ Նա վախեցած աչքերը բաց արեց և, որպէս շարունակութիւն իր երազի, տեսաւ հայրիկին և մայրիկին, շրջապատած տատիկին։

— Ի՞նչ է պատահել, մայրի՛կ, հարցրեց տագնապով Սուրէնը։

— Ոչի՛նչ, բալի՛կս, ոչինչ. դու քնի՛ր, աշխատեց նրան հանգստացնել մայրը։

Բայց Սուրէնի քունն այլևս չտարաւ, և մայրը նրան տեղափոխեց իր սենեակը։ Հետևեալ օրը տեղափոխեց և նրա մահ-

ճակալը։ Այնուհետև Սուրէնը քնեց կրկին հայրիկի և մայրիկի ննջարանում։

Առաւօտը տատիկը սենեակից դուրս չեկաւ. իսկ Սուրէնին արգելեցին այլևս նրա մօտ մտնել։

Այդ օրը մի անծանօթ քեռի, որի քթին ակնոց կար և ծեռափայտի վրայ ոսկրից շինած նապաստակի գլուխ, եկաւ տատիկի մօտ, փակուեց նրա սենեակում ու նորից գնաց։

Այնուհետև ամեն օր այդ քեռին գալիս էր տատիկի մօտ։ Հայրիկն ու մայրիկը մտազբաղ, բայց սիրալիր, ընդունում էին նրան։ Ամեն անգամ մայրիկը նրան հրաւիրում էր սուրճ խմելու, և նա միշտ հրաժարւում էր. իսկ հայրիկը փորձում էր պահել նրա վերարկուն, ու նա չէր համաձայնւում։ Մի օր էլ հայրիկն ու մայրիկը երկար փակուեցին տատիկի սենեակում ու յետոյ դուրս եկան արտասուքներն աչքերին։

Նրանք լաց էին լինում։

Հայրիկն էլ էր լաց լինում։

Սուրէնը ինչ որ վատ բան նախազգալով թագնւել էր մայրիկի պահարանի յետև ու լռել։

Այդ օրն ակնոցաւոր քեռին չեկաւ։ Նրա տեղ եկան ուրիշ քեռիներ ու պապիներ։ Յետոյ եկան հօրաքոյրը և ուրիշ շատ հօրաքոյրեր ու մօրաքոյրեր։

Բոլորն էլ մտնում էին տատիկի սենեակը, մի առ ժամանակ մնում այնտեղ ու նորից դուրս գալիս խոնաւ աչքերով։

Նրանք քայլում էին համր ու հանդարտ ու խօսում հազիւ լսելի, ցածր ձայնով։ Ողջ տունը կարծես հառաչում ու փսփսում էր։

Համարեա ամբողջ օրը Սուրէնը մնաց մայրիկի պահարանի յետևին, և ոչ ոք նրանով չհետաքրքրուեց։

Հետևեալ առաւօտ Սուրէնին մաքուր հագցրին ու տարան տատիկի սենեակը, որ ծեռքը համբուրի։

Տատիկին նոր շորեր հագցրած պառկեցրել էին սեղանի վրայ, մի երկայն ու նեղ անդուկի մէջ։

Երբ Սուրէնը նրա ձեռքը համբուրեց, նա չիմացաւ։ Նրա աչքերը փակ էին։

Սուրէնն այժմ միայն հասկացաւ, թէ ինչու բոլորն էլ հանդարտ էին քայլում ու շշուկով խօսում։

Որովհետև տատիկը քնած էր։

Բայց նա սաստիկ ուզեց մի կերպ իմաց տալ տատիկին իր ներկայութիւնը։ Դրա համար նա բռնեց տատիկի ձեռքը, որ թափահարի, բայց նրան արգելեցին և անմիջապէս սենեակից հեռացրին։

Ինչու տատիկի ձեռքն այնքան ցուրտ էր...

Շուտով կրկին հաւաքուեցին երէկուայ պապիներն ու քեռիները, տատիներն ու հօրաքոյրերը։

Եկաւ և ժամի պապին, որ երկար միրուք ունէր և միրուքից էլ երկար մի «տէր-ողորմեա», եկաւ և ժամի քեռին, քթախոտի տուփը մի ձեռին։

Նրանք ժամի շորեր հագան ու սկսեցին ժամ անել, ինչպէս եկեղեցում, խնկի կապոյտ ծուխով լցրին ու մթնացրին փոքրիկ սենեակը։

Բոլորը տխուր և լուրջ դէմքերով, գլխակոր շրջապատել էին այն սեղանը, որի վրայ տատիկն էր պառկած. իսկ սեղանի երկու ծայրերին, տատիկի գլխավերևն ու ոտի տակը, բարձր մոմկալների մէջ դէպի վեր էին լողում երկու հաստլիկ կերոնների սուր լեզուակները։

Մի փոքր յետոյ տատիկին վերցրին, դրին ուսերի վրայ ու տարան։

Տատիկը իմացաւ, թէ ինչպէս իրեն բարձրացրին ու տարան։

Նրա աչքերը էլի փակ էին...

Մի քանի ժամից յետոյ Նրանք վերադարձան տուն հաց ուտելու, բայց այս անգամ առանց տատիկի։

Նրան չէին բերել...

Դուրսը ցուրտ էր և սաստիկ ձիւն էր գալիս։

Երեկոյեան, երբ բոլորը ցրւեցին, տունը խաղաղւեց։

Սուրէնին, իր նոր մահճակալի հետ, տեղափոխեցին կրկին տատիկի սենեակը։ Միայն այս անգամ տատիկի փոխարէն Նրա հետ գիշերեց մեծ մօրաքոյրը։

Սուրէնը մտաբերեց իր առաջին տեղափոխութիւնը և յիշեց տատիկին։ Յիշեց տատիկին, երբ վերմակի տակ կուչ եկած մրսում ու դողդողում էր։

— Մարիամն ասաց, որ տատիկին տարան և դրին հողի տակ, մտածեց Սուրիկը.—իսկ այս բուք-բորանին տատիկը այնտեղ արդեօք չի՞ մրսում... Խե՛ղճ տատիկ, մրսում ես, հա՞, դու դողդողում ես, հա՞...

Սուրէնը խղճահարւեց ու մղկտալով հեկեկաց...

ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԱՐՈՒՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

ԳԻՐՔ Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Ա. Ահարոնեան—Հայրը, Սիրունի—Որդին, Յ. Քիւֆէշեան—Աղուընակ քարը, Ա. Իսահակեան—Երազիս տեսայ, Ա. Իսահակեան—Օմար Խայամի վէշը Աստծոյ հետ, Ս. Բազէն—Արևելքի մրմունջներ, Սուրէն—Արիւնոտ հովիտը, Յ. Յակոբեան—Ես այն եմ սիրում, Մ. Պետրոսեան—Կամուրջ, Շ. Կուրղինեան—Բանւորուհին, Ա. Տիգրանեան—Ցիշողութիւն, Լ. Շանթ—Ճամբուն վրայ, Մ. Պարսամեան—Մարդկային, Հ. Նազարեան—Սև երգեր, Դ. Դեմիրճեան—Ջուլակ և սրինգ, Վ. Փափազեան—Ծովափին, Ալ. Ծատուրեան—Ալիք, Ալ. Ծատուրեան—Երազներ էին, Ալ. Ծատուրեան—Քրքիջ, Ալ. Ծատուրեան—«Կարմիր օրեր»-ից—Բանւորուհու օր-օրը, Կ. Միքայէլեան—«Էրֆուրտի ծրագիրը», Վահան Տէրեան—«Ոսկէ հէքիաթ» գրքից, Վահան Տէրեան—Մոռացած ուղի, Վահան Տէրեան—Վերաղարձ, Կ. Միքայէլեան—Նահանջ, Յայտարարութիւններ:

ԳԻՆՆ Է 1 Ր., ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ 1 Ր. 25 Կ., ԻՍԿ Ա. ԵՒ Բ. ԳՐՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ 2 ՐՈՒԲԼԻ 25 ԿՈՊ.

Հասցէ՝ նիւթերի, համակագրութեան ու պատէրների համար.—

МОСКВА, Большая Дмитровка, д. № 9, кв. 50.
Г. Микаэляну.

ԱԶԱՏԱՄԱՐՏ Օրաթերթ՝ քաղաքական, գրական և հասարակական բաժիններով։

Բաժնեգին տարեկան.— Կ. Պոլիս՝ 75 ղրշ.։ Գաւառները՝ 100 ղրշ.։ Արտասահման 25 ֆ.։

Հասցէ՝ Rédaction „Azatamart“, Péra, Ieni Tchiarchi N. 32. Constantinople.

ԲԻԶԱՆԴԻՈՆ Ազատ հայաթերթ ամենօրեայ (Խմբ. Բ. Քէչեան)

Տարեկան՝ Տաճկաստան 120 ղրշ.—Արտասահման 40 ֆր.

Հասցէ՝ Rédaction du journal „Puzantion“. Constantinople.

ՄՇԱԿ Քաղաքական և գրական լրագիր։ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.—տարեկան 10 ռուբ. է, տասն և մէկ ամսւանը նոյնպէս 10 ռուբ., տասն ամսւանը 9 ռուբ., ինն ամսւանը 8 ռուբ., 8 ամսւանը 7 ռ., 7 և 6 ամսւանը 6 ռ., հինգ ամսւանը 5 ռ., չորս ամսւանը 4 ռ., երեք ամսւանը 3 ռ., մէկ ամսւանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար, Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆր., Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից Tiflis, Rédaction „Mschak“.

ԺԱՅՌ Գրական, հասարակական և քաղաքական թերթի բաժանորդագինը—

Ռուսաստանում՝ տարեկան 3 ռ., կէս տարուան 2 ռ.
Արտասահմանում՝ „ 5 ռ., „ „ 2 ռ. 50 կ.

Հասցէն՝ Александрополь, Редакція „Жайръ“.

ՀՈՐԻԶՈՆ Գրական, քաղաքական և հասարակական լրագիր։

Տարեկան Ռուսաստանի համար 8 ր., Պարսկաստանի՝ 9 ր., Թիւրքիայի՝ 20 ղրշ., Ամերիկայի՝ 6 դոլլար., Եւրոպայի՝ 30 ֆր.։

6 ամսւանը՝ Ռուսաստանի համար 4 ր. 50 կ., Պարսկաստանի՝ 5 ռուբլի, Թիւրքիայի՝ 70 ղրշ.. Ամերիկայի՝ $3^1/_2$ դոլլար, Եւրոպայի՝ 18 ֆրանկ։

3 ամսւանը՝ Ռուսաստանի համար 2 ր. 30 կ., Պարսկաստանի՝ 2 ր. 70 կոպ., Թիւրքիայի՝ 35 ղրշ..

1 ամսւանը Ռուսաստանի համար 80 կ., Պարսկաստանի՝ 1 ռուբլի, Թիւրքիայի՝ 14 ղրշ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է միայն իւրաքանչիւր ամսի 1-ից։ Ապառիկ ոչ ոքի թերթ չի ուղարկւում։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „ОРИЗОНЪ“, Вельяминовская, №16. *արտասահմանից՝* Rédaction „HORISON“, Tiflis (Russie-Caucase).

ԼՈՅՍ Գրական-հասարակական շաբաթաթերթ.

«ԼՈՅՍ»-ի նպատակն է կապ հաստատել Ղրիմի, Հիւսիսային Կովկասի, Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի ցրւած հայ գաղութների միջև և մասնակից անել նրանց ընդհանուր հայկական կեանքին։

ԲԱԺԱՆՈՐԴ.—Ն.-Նախիջ., Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տ. 3 ր., կէս տ. 3 ր., 3 ամիսը 1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի համար տ. 4 ր., կէս տ. 1 ր. 50 կոպ. և 3 ամիսը 1 ր. 50 կ., հատով ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Դիմել՝ Нахичевань-на Дону, въ редакцію армянскаго еженедѣльнаго журнала „ЛУЙСЪ“.

ՀԱՍԿԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ. Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով, նախկին ընդարձակ ծրագրով։

Խմբագրութեան հասցէն — Թիֆլիս, Բէհբութեան փողոց. (Тифлисъ, Редакція журнала „Аскеръ“. Tiflis (Caucase), Rédaction „Hasker“).

ԽԱԹԱԲԱԼԱ Երգիծաբանական-սատիրական պատկ. շաբաթաթերթ։

ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

Գրիչն ու Թանաքը, Նեբկն ու Հանաքը.

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան 5 ռուբլի, կէս տարին 3 ռ., երեք ամիսը 1 ռ. 50 կ.
Թիֆլիսում տարեկան 4 ռուբլի։

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան 7 ռուբլի, կէս տարին 4 ռ., երեք ամիսը 2 ռ. 25 կ., ամիսը 75 կ.

ԵՐԿՈՒՍԸ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ

Տարեկան 10 ռուբլի, կէս տարին 6 ռ., երեք ամիսը 3 ռ. 50 կ., մէկ ամիսը 1 ռ. 20 կ.։

Դիմել—Тифлисъ, редакція „Хатабала“. *Հեռագրով*—Тифлисъ, „Хатабала“. *Արտասահմանից*—Tiflis (Caucase), Rédaction „Khatabala“.